

ՅԳԻ. ԳԳ աթ.



ԲԱԳԻՆ ՃԳ. ՏԱՐԻ-1975 ՆՈՑԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԹԻԻ 11-12

digitised by A.R.A.R.@

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Լ. ԳԱՐՄԷՆ	Ինֆանտաուցում
Բ. ԵՂԻԱՅԵԱՆ	Սասունցի Դավիթ
Մ. ԻՇԵԱՆ	Սպասում
Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ	Յետադարձ վագֆ
»	» Մեծ Քաղաքին մէջ
Ա. ԱՐՓԻՆԷ	Երբ գարունը կու գայ
Փ. ՀԵՐԱՆԵԱՆ	Լուս պահեր
»	» Եթէ
»	» Լեռներ մշուշէ
»	» Ծածրակոյ ի վեր
»	» Զինքը ետ կանչէր
»	» Վերյուշ
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Գոթական վեպը
Լ. ՄԿՐՏՋԵԱՆ	Փիլիսոփայական մտքի վիճակը Խորհրդային Հայաստանում
Պ. Ս.	Իգնա Սաբաշուանի «Լօ»
Ս. Կ.	Միֆայել Թարիգեանի «Գոհաճ մեսիաններ»ը
Յ. Մ.	Զարեհ Խրախունիի «Տօնակարգ»ը
* * *	Նշմարներ
* * *	Մշակութային լուրեր
* * *	«Բաղին»ի 1975ի ընկերակազմի ցանկը

Բազին

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ճ.Գ. ՅԱՐԻ, ԹԻԻ 11—12 ՆՈՅՄԲԵՐ — ԳՆԿՆՆԵՐԱԾԻ 1973 ՉԳՆՈՒԹ

Լ. Գ Ա Ր Մ Է Ն

ԻՆՔՆԱՍԱՏՈՒՑՈՒՄ

Իբրև գերագոյն խորհուրդ
 կամ մատուցում անանձնական,
 Լոյսերու տակ առաւօտեան հրակարմիր,
 Բարձունքներէ վար խուժող
 Փրփրեբախ ջուրերու կանգոյն,
 Հոգիս կը հոսի,
 Իր ակնաղբիւրին լոյսերովն օծուն...
 Գազաքներէ վար.—
 Վարը՝ ժայտերու մութ ծերպերուն մէջ,
 Ծաղիկներուն համար հեկ ու անանուն,
 Հոգիս կը տանի յոյսն առաւօտեան,
 Կը տանի շողն արշալոյսներուն՝
 Խոր ու անարեւ անտառներու մէջ
 Լոյսի կարօտէն՝ հողին տոչորուն:

Այսպէս յորգարուի ու համայնական,
 Քոչող դարերու մօին բովերէն՝
 Հոգիս տարածուն,
 Իր սլաքներով աղամանդակուտ,
 Ճեղքելով սիրտը սառ ժամանակին —
 Անբթայ ապառնի դարերուն անգայտ,
 Դարերուն, որոնք ղեռ արգանդին մէջ անտես մշուշին,
 Դարերուն, որոնք ղեռ չգալարուած երկունքի դողէն,

Կը տանի հոգիս՝
 Լոյս բեղմնափռչին մեր մեծ երպիւն,
 Ու տենդը բորբոք մեր ապրումներուն,
 Շաղախը անքիծ՝ սրտերուն մեկնամ. —
 Կը տանի հոգիս՝
 Ճեղքելով կուրծքը բիրտ ժամանակին:

Դեռ հեռուներուն ու անձանօթին,
 Դեռ չհրդեհուած սիրոյ կրակէն սրտերուն համար,
 Հոգիս կը տանի՝ կայծօն յաւերժութեան,
 Սէրն համայնական...
 Ծանօթ, անձանօթ սրտերուն առջեւ
 Կը բանայ հոգիս թեւերն իր անձիր,
 Եւ անէացած —
 Անցնող, մոխրացող դարերու կոյտէն,
 Կը բերէ հոգիս հուրը սրբազան. —
 Յուսահատութեան ներկայի ցուրտին
 Ընդդէմ գրահել սրտերը վիատ...
 Բարձրացած արդէն զագաթը վաղուան
 Հոգիս անվարան կ'ըմպէ ընդերկա՛ր,
 Մեր արեան կանչին յոյսերը արդար:

Թո՛ղ բացուի վաղուան առաւօտն այդ մեծ,
 Հոգիներուն մէջ տամուկ, թողլքուած,
 Եւ շողն առաջին վառուող արեւուն
 Թո՛ղ երանգաւորէ կեանքը աներանգ...
 Թո՛ղ իյնայ հոգիս,
 Ներբաններուն տակ կոշտ անցորդներուն,
 Եւ անապաշտ. —
 Թո՛ղ քայլերուն տակ անտեց անտարբեր,
 Հատուած առ հատուած փշրուի հոգիս...
 Թո՛ղ խառնուի ան ցեխին ու տիղմին,
 Զի փշրանքներէն անոր կորսուած,
 Պիտ՝ բարձրանան վեր նոր արշարոյսներ —
 Գոս ու յոգնաբեկ սրտերուն ընդմէջ,
 Յանելու բոցը մեր երպիւն մեծ. —
 Յաւերժացումի կրակը անշէջ:

(Անտիպ)

ԼԵՒՈՆ ԳԱՐՄԷՆ

Digitized by



26260-ԱԶ

Բ . Ե Ղ Ի Ա Յ Ե Ա Ն

Ս Ա Ս Ո Ւ Ն Ց Ի Դ Ա Ի Ի Թ

(Վերոհիշյալ)

ԱՐԱՐԵՐԳ՝ 6 ԴՐՈՒԱԳ
Սասունցի Դաւիթ
Դիւցազներգէն

ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ

- ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹ . Որդի Ասիւծ Միերի .
- Ձէնով ՅՈՎԱՆ . Մօրեղբայր Դաւիթի
- Ա . ՔԱՀԱՆԱՅ . Օրհներգու .
- Բ . ՔԱՀԱՆԱՅ . Օրհներգու .
- ՆԵՐԱՅԱՑԱՑՈՒՑԵԻՉՆԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԳԻ
 - Ծերունի մը . ՎԱԿՅՈՏ ՎԻՐԳՈ .
 - Կիմ մը .
 - Երիտասարդ մը .
 - Օրիորդ մը . ԽԱՆԴՈՒԹ .
- ԵՐԳՉԱԽՈՒՄԸ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԳԻ .
- ՄՍՐԱՑ ՄԵՆԻՔ .
- ՋԻՆՈՒՈՐ ՄԵՆԻՔԻ .

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

ՏԵՍԱՐԱՆ

Քակի խորքին՝ Սասունի դրեակ-
քովը՝ մատուռ, որուն առջև խումկ
կը ծխայ: Բեմի խորքին կանգնած
խորանէն դանդաղօրէն կը մտնան
երկու քահանաներ, բարձրաձայնով...

Ա . ՔԱՀԱՆԱՅ (յառաջանալով) —

Օրհնեալ Աստուած, Լճ՛յս անձառ-
(մօտենալով, բարձրաձայնով)
Դառնամ սարերուն, լոյս աղբիւրնե-
րուն .
Դառնամ հայրենի կամուջ հանդե-
րուն...
(կանգ առնելով եւ երդածայն)
Դառնամ Արարատ, զոգորմի տի տամ
Մովիմար Կայսին, Ջան Արմաղա-
նին...

Բ . ՔԱՀԱՆԱՅ — Քառու՛ն ոգորմի:
ԽՍՐԵՐԳ (Հեռուէն արձագանգելով) —

- Քառասուն քառասունի Հայոց մայրերուն...
- Ա. ՔԱՀԱՆԱՅ.— Դառնաւ Արագած, գաղարմի տի տամ Սանասար Պապին, Առիւծ Մհերին...
- Բ. ՔԱՀԱՆԱՅ.— Հարի՛ւր ողորմի...
ԽՄԲԵՐԳ (Ձայեր ծօռնալով) — Քառասուն քառասունի Հայոց մայրերուն. Հարիւր ողորմի Հայոց քաղերուն...
- Ա. ՔԱՀԱՆԱՅ (Երբորդ անկամօւն՝ զէպի Երվանսար դառնալով) — Դառնաւ ՍԱՄՆԱՍԱՐ, գաղարմի տի տամ Թաղամ Դաւիթին...
- Բ. ՔԱՀԱՆԱՅ.— Հագար ողորմի...
ԽՄԲԵՐԳ.— Հագար ողորմի Թաղամ Դաւիթին.
Առիւծ Մհերի որդի Դաւիթին...
(Երգելով կը մօտենայ խուճբը. բեւձը կը գրաւեն. մօտեք վառած՝ կը խոնուին մատուռին առջեւ)
Քառասուն ողորմի Հայոց մայրերուն. Հարիւր ողորմի Հայոց քաղերուն. Հագար ողորմի Սասնայ իշխանին. Ջոզ Առիւծներու ժառանգ Դաւիթին...
Հագար աւագար, բիր-բիր ողորմի.
Ողորմ-ողորմի Հայոց աշխարհին...

Ա. Դ Բ Ո Ի Ա Գ

- ՏԵՍԱՐԱՆ.— Նախերգանքին Հաւաքուած ժողովուրդը խոնուած է մատուռին առջեւ, կը տօնեն յիշատակը Դաւիթի ծնողաց՝ Առիւծ Մհերի եւ Արմազան Տիկնոջ, ըստ իրենց ուխտին:
- Ա. ԵՐ. ՔԱՀԱՆԱՆԵՐ (Կ'արտասանեն միաբերան, խոր հնչիւնով) — Մհերաւանդ մեր ուխտին Քառասուն տարին բերէ՛ք ընենք քառասուն ամիս.

- Քառասուն ամիսն բերէ՛ք ընենք քառասուն շաբաթ.
- Քառասուն շաբաթն բերէ՛ք ընենք քառասուն օր...
- Եւ այս օրին, եւ այս ժամին՝ Պատռնէ՛ք տուրք մեծ Սանասար Սասուն Սարին...
- Մամբ'ը վառէ՛ք, խո՛ւնկ ամպեցէ՛ք. Երգե՛ր հոսէ՛ք դուռն դրախտին. Ազօ՛ք՛ ըսէ՛ք, հագո՛ց հանէ՛ք, Որ մեծ Մհերն, կինն Արմազան Հաւանին առաջ Լոյս Աստուծոյ...
ԽՈՒՄԲԸ (միաբերան կը կարգայ) — Քառասուն տարի, քառասուն ամիս եւ քառասուն օր Սպասեցին Առիւծ Մհեր եւ Արմազան հորանին զէ՛ք Աստուածածնին Սուրբ Մարութայ.
Ու մայրերու Սուրբը բոլոր՝ Քառասուն տարուան անոնց չարացած Բունին շնորհեց կանանչամալ...
Ջոզ Մհերի դպար ընծիւզ՝ Տաւա մանուկ Թաղամ Դաւիթն...
ԽՄԲԵՐԳ.— Քաց Մհերի որդին Դաւիթ Երմա կանաց շատաւիզ.
Սասնայ Մարին ժառանգ արեւ, Անյազք բագուկ, սուր անխորտակ. Ապրի հագար, ապրի կամայ Որդին Առիւծ Մհերի...
- Ա. ԵՐ. ՔԱՀԱՆԱՆԵՐ (միաբերան) — Ապրի հագար, ծիւն ըլլայ ծառ. Հովանիին տակ ապաւնով պահէ Սասուն:
- Ա. ՔԱՀԱՆԱՅ (կը պատմէ դանդաղօրէն) — Ջոզ Մհերը իր արիւնէն ծաղկած ծիւղին Անուանովը մատաղ ըրաւ, ուխտով գոչեց՝
— Հաց ու զինի, Տէր կենդանի. Թող պայ ինձի գաւակ ճը մանչ իմ արեւելս,
Ժառանգ Ջոզաց երկրին ազատ. Թող մէկ անգամ օրօրցնեն՝ Կուրծքիս վրայ ծաղկած որդիս. Թող շրթներուն դառնակաթ

Դնեմ շրթներս դողդողաջերմ.
 Մխն իմ միտնս բաժնուած՝
 Թող ինձ փարի իր ժպիտովն.
 Մէկ հեղ վառեմ հուրովն աչքին՝
 Մուշններու ետին մարող իմ ա-
 չերս... :

Ու թող — եթէ կամքն է բարձ-
 րին —
 Դառնած հողին նոյն օրն իսկի,
 Ննջեմ հետը իմ հայրերուս... :

Առտուած թող մեզ սղոյ մի տայ,
 Որ չմարի Մասնայ ճրագն.
 Մեր սղէն մեր տեղ սող ըլնի՝
 Մենք էլ սող տի յիշուինք յա-
 լէտ... » :

Երգմնեցաւ Միերն այգպէս :
 — Երգմնեցաւ Միերն այգպէս, —
 Կրկնեց երգումն՝ կինն Արմաղան.
 Եւ ինն ամիս եւ ինն օր ետք,
 Երբոր ծնաւ Դաւիթ մանուկը լուսա-
 հեր՝
 Ուխտակոտոր եզան հայր-մայր,
 Մեռան երկուքն այ հո՛յն օրին եւ
 Ոռն ծնաւ մանուկ Դաւիթն...
 Ա. եւ Բ. ՔԱՀԱՆԱՆԵՐ (միաբերան) —
 Խա՛չ հանեցէք ձեր սիրտերէն,
 Դրէ՛ք շիրմին Մեծ Միերին.
 Ըօ՛ւք :

Օրհնեա՛լ, օրհնեալ ըլլայ
 Մասնայ ճրագ Միեր անմար :
 ԽՄԲԵՐԳ. — Հագար-հագար անգամ օրհն-
 եալ,
 Հագար անգամ պայծառ ճրագ-
 Անմահութիւնն արիներուն՝
 Անմահ իրենց գործն է կանգուն... :

Միեր՝ շքեղ կանգնիչ Մասնայ,
 Ազատարար ծողովաւրդի՝
 Սեւ վիշապէն գարեաւրելի,
 Որ մէջ պատկած ճամբուն սարի
 Ձեր թռչ ի տար՝ ա՛յ ցարե՛ն գայ եւ
 ոչ գարի

Մուշի դաշտէն աւ Բագէշէն... :

Վանեց անվը Սասուն երկրէն,
 Լեցուն ջրաւ ան վերստին՝
 Հացը տաշտին, իւզը տիկին...
 Որքան ապրած մնաց Միերն՝
 Այնքան արեւն ազատ շրջան ըրաւ
 վերել.
 Յափշտակիչ ոչ մէկ զագան
 Դրաւ ռաբը մեր սուրբ հողին... :

Օրհնեա՛լ, օրհնեալ ըլլայ յաւէտ
 Յիշատակը արդարներուն...
 ԽՈՒՄԲԸ (ժողերը բարձրացուցած՝ ծուռ-
 կի կ'իշխայ).
 Բոլորը միաբերան կ'արտասանեն
 խորունկ ձայնով) —
 Տէ՛ր մեր երկրին, մեր գործերուն,
 հոգիներուն.
 Լսէ՛ ձայնը մեր կուրծքերու ապա-
 ռածէն՝
 Բարախումը ինչպէս սիրտին մեր
 երկրի :

Ըրէ՛ բերդերը մեր անառ,
 Դաշտերը՝ յորդ միրգով մեղրով.
 Կաթնաղբիւրներն անուշ ջուրով
 Բա՛ց բալտրին... :

Մեռելները խաղաղութեան մէջ ճըն-
 ջեցուր... :

Պահէ՛ հոգին Քաջ Միերին,
 հաթուն ճնճուշ Արմաղանին՝
 Լոյսերու մէջ աստղապայծառ.
 Մինչեւ հնչէ փողն յարութեան...
 Ու ե՛տ դարձուր իր հօր գահին՝
 Դաւիթ սահուկն՝ Մարայ երկիրն
 տարուած հեռու... :

Ու մեր կուրծքերն ճեղի համար
 Պիտի մնան խորան անբակ.
 Զի քո՛ւկդ եմք մե՛նք,
 Քեզի՛ կու գանք կեանքի բալտր
 ճամբաներով... :

Բ . Դ Ր Ո Ի Ա Պ

ՏԵՍԱԲԱՆ

Համաձայն Առևան Մհերի եւ Մըս-
րայ Մէլիքի բարեկամական դաշին-
քին, Մհերի մահէն ետքը՝ Դաւիթ
Մարայ Մէլիքի երկերը ապրուած
է, որպէսզի այնտեղ խնամուի ու
մեծնայ՝ Մարայ իսթուէի կողմէ:

Ահա, մատուցին առջիւ խննուած
ժողովուրդին դիմաց՝ յանկարծ կը
մտնէ Ձէնով Յովան, շփոթած, հըս-
կայաբայլ, յորդ ճայնով:

Ձէնով Յովան (դռնաբան)։— Հէ՛յ, քաւ-
նեցիք,

Ի՞նչ էք ծանկեւ սուգով, ողբով՝
Մովսսարին մէջ խմբուել...

Սուգ չէ՞ այսօր.
Տօ՛ն է այսօր խրախմբա՞նք...

(Ժողովուրդը կ'ալեկոծի):

Ձէնով Յովան (կը շարունակէ)։—
Հէ՛յ, ձիւնով սարեր. հէ՛յ խոր-խոր
ձորեր,

Ձայն սուէք թող գամ գունդ-գունդ
հաւաքուի՞ն

Որդիները պերճ քաղերու թալար,
Տօ՛ն կազմեն, պարե՛ն...

(հանդարտօրէն կը խօսի ժողո-
վուրդին)

Աւտի՛ս աւրախ...

Եթէ մեռամ՝ Մհեր ու կինն Արմա-
զան,

Բայց որդի՞ն անոց՝ Դաւիթ զիւցա-
սնունդ՝

Կ'ապրի շու՞նց անոց...

ԽՄԲԵՐԳ. — Սեղա՛ն գրէք, գի՞նի՛ բերէք:
Մեռելներուն հոգաց ըսէք,
Կենաց ըսէք ապրողներուն...

Ձէնով Յովան (կը շարունակէ)։—
— Կ'ապրի Դաւիթ՝ ժառանգ գանի՞ն,
Թէ՛ն հեռու երկրէն իր Խօր:

Ջալալ Քուրկիյն՝ հրեղէն ձիւ՝
Ձայն հասցուցած է կենդանի
Մարայ խմբի հաթունին,
Որուն հետ ուխտ եղբայրութեան
Կնքած էր հայրը Ձայ Մհեր...

Հրեղէն Ձին լուրն ինձ քերտ,
Դաւիթ կ'ապրի, ու կը մեծնայ
Ո՛չ թէ տարով, այլ օր օրով,
Ո՛չ թէ օրով, այլ ժամ ժամով:

Քանզի սնունդ ունի մրայն
Սպիտակ մեղրը Սասունի
Ու կարագը մեր դաշտերում...

Ա. Խ. Բ. ՔԱՀԱՆԱՆԵՐ (միաբերան)։—
Երգե՛ր հիւսէք, աղօ՛թք ըսէք,
Որ գորանայ Դաւիթ զիւցացն,
Եւ գայ նստիլ գանուն իր Խօր...

Ձէնով Յովան. — Ուրախութիւն մեր
աշխարհին...

Կու գայ Դաւիթ տունն հայրենի.
Ջալալ Քուրկիյն հրեղէն ձիւ
Հովի-ամպի թեւերով...

(Կը մեկնի Ձէնով Յովան):

ԽՄԲԵՐԳ. — Ուրախութիւն ամենե-
ցուն...

Տի գայ Դաւիթ տունն հայրենի,
Տիրէ անյապք տէր Աստուծի:

Տի տարածէ բազուկն հզօր
Սասնայ սարէն Մարայ չէօրին,
Վանէ՛, փշրէ թշնամիներն...

Որ չմարի ճրագը սուրբ
Մեր յեռներուն.

Գայը չուտէ գանն Աստուծոյ.
Գործ չպակսի բազուկներուն ծիր
մշակի,

Ու չդադրի երգն ու պարը մանուկ-
ներու,

Երիտասարդն հասնի հուրէ իր երա-
զիմ...

Ու ծերերը խաղաղութեամբ իջնն
հողին...

ՔԱՀԱՆԱՆԵՐ. — Բա՛ց է սեղանը Աստու-
ծոյ...

Բերէ՛ք ընծայ ձեր սիրտերէն՝
Աղօթներուն հետ հոգեծի՞ն...

(Ճողովուրդը կը խլրտի) :
Կին՛ ՄԸ (տոռալ կ'անցնի. մեռտքս լաշա-
կը կը դնէ մատուռի շեմքին ու կ'ա-
ղօթէ) .—
Աստուածածին, մեռնի՛մ ուժիդ .
Ինչպէ՛ս պիտի ըլլայ գարուն՝
Երբ սեւ պատած է մեր դուռներն...

Օրէն այն երբ մեռաւ Մհերն՝
Հեղ մ'իսկ ծուկի-ծուկի չեմ նըս-
տած
Հետը խորոտ գաւկըներու...

Անոնք քառած են յոր սարեր,
Կռուով՝ դէմը քայլիչներուն,
Պահպանելու բերդը բարի ժողովուր-
դիդ...

Կապուտագե՛ղ Աստուածածին,
Օգնէ՛ անոնց, խնայէ՛ մեզ,
Մի՛ մեր տուներն լքեր անտէր...

ՎԱՆԿՈՏ ՎԻՐԳՕ (ծերունի մը, որ առաջ
կ'անցնի, սեղան դնելով իր մէջքի
կամարը) .—
Քաղցրիկ Աստուած կապոյտներու,
Տարիներուն չափ մազերուս սպի-
տակ՝
Զքերացայ նս երբեք
Ծունկի գալու խաչիդ անջեւ հրա-
քել,
Խօսքդ վախան ըրած հոգւոյս...

Զնուագեցան սակայն երբեք
Թշնամիներդ անհաւատ՝
Գալ քայտելու ժայռերուն դէմ մեր
հսկայ՝
Կանգնած վախան է ու աճունիդ...

Ինկան անոնք հազարներով՝ մեր
սուրբէն,
Բայց կանգնեցան քի՛ւր բիրտբով .
Անոնք փախան կաղկաղալով,
Բայց եկան ետ՝ հեղեղն ինչպէս...

Սուրբ անա ձեռքերու մէջ կը դռ-
դայ,
Հուրէր սիրտիս տակ կը մտրի...

Սասնայ գլխին ա՛նց է կուտակ,
Կը գուժէ նոր ամպրոպ անեզ...

Հաւատարիմ մեմք մնացիմք մեր
ուխտին .
Պահէ՛ Դո՛ւն ալ, Կասպոյտ Աստուած,
ն'իստը ին...
Մեմք օր-արեւ չտեսանք,
Գե՛ք մեր որդիները դալարին
Ու փառք տան ճեզ...

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ (կը ժօռնայ, ձեռքի
սուրը վար դնելով մատուռի խո-
րանիս վրայ) .—
Քանի վառի կրակն անքիծ
Քարայրին մէջ մեր կուրծքին՝
Պիտի կանգուն պահեմք Սասունն...

Տո՛ւր ուժ պինդ մեր քաղաղնե-
րուն...

ԽԱՆԴՈՒԹ (կը ժօռնայ՝ գունջ մը ծա-
ղիկ գետեղելով) .—
Սո՛ւրբ Կոյս . կոյսին Ծովիներին՝
Դուն, որ աղբիւր քաղցր բացիր
Խորէն ծովու չուրին աղի,
Բա՛ց եւ աղբիւրդ լուսածորան
Ծարաւ հոգւոյս տեկին դիմաց...
Դարձո՛ւր գիս գախս հայրենակամ...

ՔԱՀԱՆԱՆԵՐ (միտքբան .—
Ընդունակամ ըլլամ ուխտերդ ձեր
բալար .
Վարձքը կատար՝ մշակներուն,
Զեռէքն դալար՝ արիներուն,
Սիրտերը խինդ՝ մանուկներուն .
Ու ծերերուն ու մայրերուն՝
Աղօթքն անուշ ընծայ Լոյսին...

ԽՄԻՆԻԳ .— Փառք Աստուծոյ Ծովափարի .
Թաղ յիշատակն ըլլայ օրհնեալ՝ Մը-
հերին .
Քակուի՛ շոքան արտաագրեան...
Ազատ իշխան վերատիրէ իր երկ-
րին...
Ուրախութեան բխի աղբիւր
Սիրտերուն մէջ Սասնայ բարի ժողո-
վուրդին...

Բացուի՞ն դուռներն արշալույսին,
Եւ շոյլիւն ամենառատ սուրբ Ա-
ջէն՝
Խաղաղութիւն, առատութիւն ու
բերկրանք... .

ԳԱՀԱՆԱՆՆԵՐ (Ճիւղերան) .—
Բա՛ց է դուռը լոյսի ճամբան .
Մտէ՛ք... Հակասուն ամէն ամբիծ
Թող միւսուսի լոյսի սննաւ հաւ-
քոյրներով... .
(Ժողովուրդը լուս կը ճօտենայ
խորանին) :

Գ. Գ Ր Ո Ի Ա Պ

ՁԷՆՈՎ ՅՈՎԱՆ (Ճեծ ոստուժով կը ժտնէ
նէրս՝ մօտեցող ճամբորդ մը աւետե-
լու ցնծութեամբ) .—
Ճամբա՛յ քացէ՛ք...
Դաւիթբը, ե՛՛յ, Դաւիթբը...
Անիւծ Միւրի որդին արեւ...
Ճամբա՛յ, ճամբա՛յ...
(Ժողովուրդը կը խոնարհ, ակնկա-
ռոյց դէպի ճամբան) :

ԴԱԽԻԹ (կը ժտնէ դրահուած, ճակարկն՝
պսակ, ձեռքին՝ նիզակ. կանգ կ'առ-
նէ. լուս կը դիտէ) :

ՁԷՆՈՎ ՅՈՎԱՆ .— Շուտ՛ք քաղցէ՛ք,
Փողե՛ր հնչեցէ՛ք,
Ջարկէ՛ք քմբուկներն...
Ջողեր, խա՛ղ առէ՛ք...
(Ժողովուրդի մէջջէն՝ երխասարդ-
ներ կը խմբուին պարի համար)
Խարստ խաղացէ՛ք,
Դաւիթբը, որ կայ՝
Միրտը գովանայ...
(Ճիւղապարը կը սկսի, եղանակով .
չուրջպար եւ ուրախութիւն) :

ԽՄԲԵՐԳ .— Ողջո՛յն Դաւիթին՝
Դալար ընծիւղին .
Ողջո՛յն Սատուի
ժառանգ իշխանին... .

Օրինեա՛լ՝ որ կու ցայ
Ամպերը հեղճող
Շաւթի ճամբէ՛քով...
(Ճիւղապարը կը դադարէ) :

ԴԱԽԻԹ (ճօտենալով) .—
Համբո՛յր քեզ, Երկիր չքնազ սա-
րերու,
Ուր կ'ապրի ծաղկած հազին հայրե-
քուս .

Համբո՛յր ձեզ, բերդեր, ձեռքով պա-
պերուս
Ժայռ ժայռի վրայ կանգնած ան-
խորտակ,
Սիւն սիւնի շարքով ցատուն սարերով .

Համբո՛յր ձեզ, մայրեր, համբո՛յր
ձեզ, քոյրեր .
Համբո՛յր՝ եղբայրներ, արե՛ւ քու-
րիդ... .

Արիւնը սիրտու կանչեց զիս ձեզի .
Քաշեց զիս հեռուէն աստղը Սատուի,
Շառայլիք որուն հուր կ'ալիկսծէ
Շարքը ազատ մեր սէզ-սէզ սարե-
րուն՝
Սարսուտներ տալով խորը ձորե-
րուն... .

Օտար դուռներէն, արքունի փառքէն,
Վագեր եմ ձեզի՝ խաւարն հեղճելով,
Շնչելու ձեզ հետ, ձեզ հետ շէնցնե-
լու

Մարտերդ տունը Սանասար Պա-
պին... .

Եկել եմ կանգնել տունը հայրենի
Մրրասուրբ նայն ժայռին վրայ,
Եկեր եմ ցանկ առող-առող սերմերը
Մեր դաշտերուն ալիծուփ .
Եւ օճախներուն վառելի նար կրակն
Հին կայծերէն արծարծած .
Աչքս յար Մասիս վեհ լուսարձանին՝
Վագիլ եմ՝ ձեզ կարօտած... .

Համբո՛յր քեզ, մա՛յր իմ երկիր... .

ՁԷՆՈՎ ՅՈՎԱՆ (կը ցատկէ, Դաւիթբը կը
բռնէ ձեռքէն, աստղ կը բերէ չքա-

սպարակ, հարա) —
Հէ՛յ, խօսքիդ մեռնեմ...
Զան, հոգա՛ւդ մեռնեմ...

ՔԱՀԱՆԱՆԵՐ —
Օրհնեա՛լ՝ ար կու գայ
Ամպերը նեղեալ
Շանթի մաւրէ՛քով...

ԽՄԲԵՐՔ —

Ընտրեալ իշխանին՝
Ընծա՛յ սիրտերը մեր դաշունահար...
Նստի՛ր անասան գանդ Մեքրիմ...

Ա. ՔԱՀԱՆԱՆ (Դաւիթի ձեռքն բռնած՝
գայն աստիճան մը վեր կը բարձրա-
ցրնէ, դա՛հն) —

Մէջքին տի կապենք գօտի՛ն Մեք-
րի...

(Բ. Քահանան Դաւիթի մէջքին
կ'անցնէ գօտին)

Ոտքին հագցընենք կօշի՛կն Մեք-
րին...

(Բ. Քահանան Դաւիթի ոտքին
կ'անցրնէ հաստ կօշիկը)

Ձեռքին իր յանձնենք թո՛ւրը-կէժա-
ծակին...

(Բ. Քահանան Դաւիթին կը յանձ-
նէ մեծ թուր-կէժակին)

Դուրս քաշենք, յանձնենք հուր ժին
Մեքրիմ,
Քուրկիկ-ձալալին, հրաշունչ նո-
վին...

ԽՄԲԵՐՔ — Դաւիթը՝ մէջքին գօտին
Մեքրի.

Դաւիթը՝ ոտքին սուրբ երկաթ,
Դաւիթը՝ ձեռքին թուրը-կէժակին,
Հեծած հրաշունչ Քուրկիկ ձալալին,
Թող իշխե՛ անյաղք՝
Դար-դար մեր երկրին...

ՔԱՀԱՆԱՆԵՐ —
Ընտրեալդ, օծեալդ, օրհնեալդ.
Եղիցի նւ եղիցի...

ԴԱՒԻԹ (պերճ գրեւորներով, բարձր
կանգնած) —

Բարձր Աստուած իմ պապերուս,
Ըրէ՛ այնպէս, որ ճաշտաբը
ժողովուրդիդ այս քարի
Ջուր չհանգչի պսակ գլխուս...
Ըրէ՛ այնպէս, որ բազուկներս
Երբեք չդաւնն ուժին հայրերուս.
Ըլլա՛մ որդի՝ հօր արժանի,
Իշխան՝ ծառայ ժողովուրդին...

(Կր խոնարհի):

ՔԱՀԱՆԱՆԵՐ (կը թագադրեն, խոնար-
հած) —

Օրհնեա՛լ ըլլայ լուսով ճակատդ...
ՃՈՂՈՎՈՒԴԻՆ (խմբերգելով) —

Արժանի՛ է, արժանի.

Ըրէ՛, Աստուած, հօ՞ր, անյա՛ղք...

Ա. ՔԱՀԱՆԱՆ —

Օրհնութի՛նք ամենիդ, օրհնու-
թիւն...

Բ. ՔԱՀԱՆԱՆ —

Խաղաղութեամբ դարձէ՛ք մեր տուն:
ԽՄԲԵՐՔ — Թող ամէն քաջ՝ անյարբ
սիրտով

Վերադառնայ

Իր մեքրիմու աշխատանքին օրհնը-
ւած...

Եկեր է տէրը Սասնայ գանին,
Խաղաղութեամբ դարձէ՛ք կեանքին...

(Ժողովուրդը, հատ-հատ, լուս կը
չեռանայ. հրապարակը կը պարպուի.
Կը մեայ միայն իշխանուհի Կան-
դութ՝ Դաւիթի գլխաց. առանձին,
լուս կը դիտեն դիբար):

Դ. Դ Ր Ո Ի Ա Ք

ՏԵՍԱՐԱՆ

(Դաւիթը քայլ-քայլ կը մօտենայ
Կանդութին, որ քիչ-քիչ գլուխը կը
բարձրացնէ, առջի կը կանգնի):

ԽԱՆԴՈՒԹ —

Բարո՛ւլ հասար, հուրո՛ւլ հասար,
անգի՛ն դիցազն,

Կը լսե՞ս ինչպէս կը դարձի
 Ոտքերուդ տակ հողը մեր,
 Ձայնէն բիւր-բիւր մեռելներու...
 Կը լսե՞ս ինչպէս հեքիաթն անոնց
 Շանքահարիչ սուրբերուն՝
 Ընդերքին մէջ մեր լեռներուն՝
 Կը բարախէ սիրտ մը ինչպէս,
 Հնչեցնելով սայնն արթնումի...
 Արի՛, մահրէ՛ երկիրը տուրք-
 Թող բարութեան սերմեր կոմսաչ՝
 Դետուած դիցազն պսակերէդ՝
 Ծլի՛ն՝ ինչպէս կալիաչները դաշտե-
 րու...
 Հեծի՛ր՝ ինչպէս շանթիմ ինչ հրա-
 վառի
 Երիվարիդ...
 Եւ բող ամոր վաճառէն
 Ու դստիւնէն սմբակներուն
 Գաշտերն ամէն ցնծերգելով արթն-
 նան...
 Հասցա՛ւր գարկը բազուկներուդ
 Մինչեւ մտարր ոստիւնի.
 Վամէ՛, փշրէ՛,
 Մինչեւ փչի չար այս աշխարհն
 Ու վերստին շինուի հիւժէն,
 Ու մենք դառնանք տէր մեր երկրին՝
 Մեր հայրենի քաղցր տունին...
ԴԱԻԻԹ (ժօռնալով եւ ճանդուժի ձեռ-
 քէն բռնելով) —
 Խորատ ծաղիկ սէգ սայրերու,
 Ի՞նչ ցաւ գեղց վա՛ր է սգեր
 Քու ցօղունէդ...
ԵԱՆՆՆՆՆՆՆՆ —
 Ես ցօղունէն փրցուած վա՛րդն եմ
 տխուր՝
 Ինկած Մասնայ դաշտին մէջ.
 Հայրս՝ Քաջանց Ազգին Արքան,
 Եղբայրներս՝ կոտիկն ահեղ՝
 Մեղիքին դէմ Մարտոյ՝ ինկած...
 Ո՛չ տուն, ո՛չ գամ, ո՛չ հայրենիք...
 Հայր չեմ տեսի, մայր չեմ տեսի.
 Անուշ եղբարքս չեմ տեսի...
 Ես զիս էսպէս որք ու ցաւիլ եմ տե-
 սի...
ԴԱԻԻԹ — Սի՛րտ մը՝ օտա՛ր ի՛ր տան
 մէջ...
 Իր ծաղկումին մէջ՝ անտէ՛ր...

(գալբոյթով)
 Ի՞նչ սեպ է ան, որ փրցրնէ
 Ծաղիկները մեր դաշտերուն...
 Ու սառեցնէ ծաղիկն անոնց՝
 Բացուած կապոյտ երկինքին...
 (ճանդուժի ձեռքէն բռնած՝ կը
 վերցնէ)
 Մի՛ լար, ցաւիլ լուսնադէմ...
 Քեզ տէր չկայ՝ ե՛ս տէր կ'ըլնիմ,
 Եղբայր չկայ՝ եղբայր կ'ըլնիմ...
 (Ժողովուրդը սարսափով եւ ազ-
 ժուկով եւ հրապարակ կը խուժէ):
ՁԱՅՆՆԲ — Հաւա՛ր է, շիւան...
 Գուժկա՛ն հանեցէ՛ք,
 Փող-փող հնչեցէ՛ք,
 Հագէ՛ք գեղեցիկ
 Գէ՛մ ելէ՛ք կոտի...
ԴԱԻԻԹ (գարձացած) —
 Ի՞նչ գոյժ է, քաջեր... Ի՞նչ գոյժ է
 կրկին.
 Ի՞նչ մուխ է իջեր մեր լայս աշխարհ-
 քին...
ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԷԿԸ —
 Մտայ Մեղիքն՝ բիւր-բիւր գորգով,
 Եօթը մեղիք հետը առած,
 Եօթ քամակէ՛ք բռնակ յերած,
 Կանգնած է դէմ մեր գուռներուն...
ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՈՒՐԻՇ ՄԸ —
 Այնքան հեղեղ գուլեր ունի,
 Քարին թիւ կայ՝ գորգին չկայ...
 Կանաչութիւնն արտերու մէջ կը ա-
 ւանայ
 Սմբակներուն տակ ճիւղերուն...
 Ու երբ ծաղիկ ցուր ըմպելու՝
 Կը չորցրնեն առուակ ու գետ...
ԴԱԻԻԹ (տակաւին գարձացած) —
 Բայց հեռաւոր իր երկիրէն՝
 Մեղիքն ինչո՞ւ մեզ կոտի գայ...
 Բա՛, սա դաշտերը մերը չե՞ն մի-
 քէ...
 Ո՞վ մեր սեպէն իլէ պիտի...
 Մեղիքն ունի երկիրն իր լայն,
 Մենք ալ ունինք մեր փոքր ամուն.
 Ան՝ տէր իրեն, ու մենք՝ մերին.
 Մենք ի՞նչ վնաս եմք օտարին...
 Ինչո՞ւ կոտի գայ ան մեր գէժ...
ԾԵՐՈՒՆԻ ՄԸ —

Ջահի՛ր՝ գառնուկ...
Ձէ՛նով ՅովԱ՛ն (Հսկայաբայլ ժանկումով...
գոռացող ձայնով)։—

Ով քնած է՝ արթուն կացէ՛ք
Ով արթուն է՝ ճիշտ քնարէ՛ք
Ով քնարէք է՝ գեմէ՛ր կապէ՛ք
Ով կապէք է՝ ելէ՛ք հեծէ՛ք,
Սեւ քշմամու ղէմ կոտեցէ՛ք...

ԴԱԻԻԹ (ցտակելով Ձէնով Յովանի
ժամ)։—

Ի՞նչ կայ, հե՛մի, ջան մօրեղբայր...

Ձէ՛նով ՅովԱ՛ն։—

Միրտի՛դ մեռնիմ, քառլա՛նց բանիլ-
էտանձ մեզ ղէմ՝ ոչ թէ տարւով, այլ
դարեւրով,
Ո՛չ թէ մի մարդ մարդու ղէմ,
Այլ սերունդով՝ երկիր-երկրի,
Թշնամի կան...

Կուզեն մեր սերմը չարցընել հողքի
վրայ...

Որ լսեցին մտեր անեղ Մհերին,
Եկել են ղէմ,
Հարկե՛ր կուզեն, ոսկի՛ կուզեն-
Ջահի՛ր կուզեն, ծառայ՛, գերի՞...

ԴԱԻԻԹ (վճռակամ)։—

Թէ՛ որ անո՞նք չարիք կուզեն՝
Պիտի ուրեմն գտնեն չարիք...
Դուք ա՛տու կացէ՛ք
Ես առանձին պիտի անոնց
Դե՛ւը կռուեմ...

ՎԱԿՈՏ ՎԻՐԳՕ։—

Ափա՛ս, հազար ափսոս քնք, ջան
Դաւիթ.

Դու մէ՛կ հաս ես, մը՛ գնար-
թող մենք թողք կոտորակին,
Մեր տունները անրին,
Դու մի՛ գնար, կը գնանք մե՛նք...

ԴԱԻԻԹ։—

Անվա՛ր կացէ՛ք, կը գնամ ե՛ս
Ափա՛ս է ձեզ՝ երբքա՛ք չգաք...
Ես Աստուծու քա՛յտ եմ բերք՝
Հօրս գօտիին տէր կանգնելու
Թէ՛ որ չերթամ՝ իմ ուխտի տակ ես
կը մեռնեմ...

Դուք տուն ունէ՛ք, երեխաներ-
Մի՛նք իր մօր միմուտարն է,
Մի՛նք՝ դեռ ներ հարսնեւոր,

Միւսը՝ սիւնը իր օճախին,
Միւսը՝ հանգած մի տան նրագ...
Ես մէ՛կ ջան եմ, երբքամ մեռնիմ՝
Բան հազար տուն անրի...
Անվա՛ր կացէ՛ք, ե՛ս կը գնամ...
Ամէն մարդու՝ իր գարծը կայ
Մհերորդի Դաւիթն իր հօր
Պարտէ՛ն անձամբ ի՛նք պիտ՝ հանէ...
Վերցնեմ պապուս թուր-կէծակին,
Երբքամ քաշեմ Հրեղէն Ձին...

ԽՄԻՆԻԳ։—

Գնալ քնք ըլլայ, դառնալ քնք ըլլայ,
Մեր ազրէր Դաւիթ.
Տուչմանիդ գալուն դառնալը չըլլայ,
Մեր ազրէր Դաւիթ.

Մէջքիդ կամար ես կապեք,
Ոստիդ սուր ես հագեք,
Ջան ազրէր Դաւիթ.

Դու երբ կռուէն յաղթող գամ՝
Ձեռներուդ ջուր տի քսակենք,
Քաջ ազրէր Դաւիթ :
Դու երբ ուրախ գամ՝
Գլխիդ ոսկէ նարուս տի կապենք,
Քաջ անյաղք Դաւիթ...

ԴԱԻԻԹ։—

Աղբերնե՛ր, քոյրե՛ր.
Աստուծու կամեմով,
Պապուս անուճով,
Ու սիրով ձեր քարմ,
Ես կ'երթամ կռուի.
Կացէ՛ք դուք բարով...
(Դաւիթ կը մեկնէ) :

ԽՄԻՆԻԳ (քիչ-քիչ հեռանալով)։—

Ոստիք, դուք ուժով ըլլա՛ք,
Վազեմով երթա՛ք, քոյրե՛ր գա՛ք.
Ձեռներ, դուք կանաչ ըլլա՛ք,
Ազոդ երթա՛ք, յաղթող գա՛ք.
Աչքեր, դուք լուսով ըլլա՛ք,
Հարով երթա՛ք, ծպտով գա՛ք.
Դաւիթ, դու՛ն ղէմն անօրէնին՝
Լուս-հանդուս երթա՛ս,
Պապով դառնա՛ս...
Յաղթութի՛ւն, յաղթութի՛ւն.
Հայաց Մարք բերդ է կանգուն՝
Սիւն լուսեղէն՝
Գալիք հազար սերունդներում...
(Գը մեկնէ քուրթը) :

Ե. Դ Ր Ո Ւ Ա Գ

ՏԵՍԱՐԱՆ

*Մտալ Մելիք կը ժտնէ հպարտ,
մեծ քայլերով: րիրտ զինուած, սեւ
ու սարսափելի, զրահագատ...*

ՄԵԼԻՔ —

Եսն — հաա՛, եա՛հ — հաա՛...
Վախկո՛տ, վերքո՛տ արարածներ...
(*Փեռտին կը զարնէ ձեռքի հաս
դուները*)
Քունդ—գունդ ինչպէ՛ս փախան, կռ-
րան՝
Հարուածներէն իմ գունձիմ,
Դաշտի ինչպէս ճագարները՝
Առի՛ծի ձայնը լսելունս...

(*Մելիքի գինուորը իր նիզակի սար-
սափին տակ, մէկ առ մէկ ներս կ'ա-
ռաջնորդէ դերուած ժողովուրդը, որ
ընկճուած ու լուս՝ ետ ներս կու
գայ ու կը կանգնի շարքով, նկուն*):

ՄԵԼԻՔ — Ինկած թեւատ՝ հպարտ ար-
ծին,
Ոտքիս տակը՝ փռչի լեռներ...

ԶԻՆՈՒՈՒՄ (ժուճակի թիւն կ'ընէ) —
Հէ՛յ, գերիններ, աւեր Մասնայ,
Բերէ՛ք շուտ—շուտ տուրքերը ձեր
Ոտքին՝ Արիս Մելիքի...

Տուէ՛ք հարկերը ձեր դէգ—դէգ,
Յարե՛ն, գինի՛, սկի՛, ակա՛նձ,
Դրէ՛ք ոտքին յաղթակամին...
Հաւաքեցէ՛ք՝ առ—ու—քայան՝
Բերէ՛ք կարմիր եզներ յծկան,
Սիրուն կովեր՝ բերէ՛ք կթան...
Դե՛ն, վեր կացէ՛ք, ճագ ազդիկներ,
Պարբրգ ըրէ՛ք յաղթ Մելիքին,
Թող յուսանայ աչքը արիւն...
Գինի՛ տուէ՛ք,
Թող գովանայ հարը սիրտին...

ՎԱՆԿՈՏ ՎԻՐՊՕ (ժողովուրդին մէջէն
յառաջանալով կը բերէ ու կը թափէ
գուռ մը ցորեն. ժողովուրդէն ուրիշ
մը՝ կը բերէ գուռ մը զարի) —
Հգո՛ր Մելիք հեռաւատս,
Ընծայ բերքեր մեր դաշտերէն՝
Այսքան ունի՛ք բան խնայած.

Ինչ որ կու տանէ՛ մեր ամբողջն է...
Խեղճ մշակներ ենք սեւ հողին.
Քո դո՛ւլն ըլլանք, բո ծառաներն.
Տարին ամբողջ մեծք կը տէնինք,
Սա ժայռերէն այսքան միայն կը
հաւքենք:

Մեր ցած երգի ռոնիկ ձմրան,
Մեր մանկուսոց բերնէն կտրած՝
Անա բերք ենք ինչ խարան...

ՄԵԼԻՔ (ցասկոտ, խուզոտ ձայնով) —
Այս էիչ է. ի՞նչ, գիտ ծա՛գր կ'ը-
նէք...

Բերէ՛ք, քալի՛ք ձեր ամբարներն.
Դուք գանի՛ք էք մերգով—մերգով,
Ձեր երկիրն է ծաղկած ածու,
Մենք չէ՛լերու մէջ կանէ՛ խան-
ձած...

Թէ դուք չտաք ձեր բերքերէն,
Եթէ չըլլայ քաւարի տարբն,
Ինչո՞վ ազրի խալիս Ալլահի...

ԺՈՂՈՎՈՒՐԻՆ (Ողորմա՛ծ տեր, մեծք
բերք չունինք...)

ՄԵԼԻՔ (իր գինուորին ցոյց տալով ցո-
րենի, զարիի դէպքերը) —
Հաւէ՛ք բոլորն. տարէ՛ք բեռքէ՛ք
Ինչքան գտնէ՛ք տուներու մէջ թէ
հանդի...

(Գետնի ապրանքը հաւաքելով կը
մեկնի):

ՄԵԼԻՔ (ժողովուրդին դառնալով) —
Ոսկի՛ կ'ուզեմ դեռ ես, սկի՛...
Բերէ՛ք ամենքն ինչ պահած կան
Կուտակ—կուտակ ձեր գանձերու...

(*ժողովուրդէն կիներ, ազդիկներ
կը հանեն իրենց օղակներն ու ապա-
րանջանները, կը բերեն ու վախով կը
գնեն Մելիքի ոտքին*)
Իսո՛նք միայն ունենք, հաւատա՛,
Մեր հարսնեկան գարդերն սիրուն՝
Մօր, հօր ձեռք մեզ ետակիեար...
Ալլահն գիտէ՛ ուրիշ չունենք...

(*Մելիք գլուներ կը զարնէ կիներէն
մէկուն կռնակին*)
Ուրիշ չունի՛ք...

ԿԻՆԸ — Ո՛ւշ, իմ գլխուն:
ՄԵԼԻՔ — Դուք շա՛տ ունի՛ք սկի, ար-
ծաք.

Պանձառուններն ձեր անապա

Մեղուի փեթակն հմ մշտնում՝
 Որ պարպածը կը լիցնէ շուտ...
 Ձեր գերեզմանին իսկ գանձ ծա-
 ծուկ...
 Բերե՛ք, փոր-փոր դուրս դիզեցէ՛ք...
 Իմ ուզուեցրը պիտի բեռցուին
 Քարանան-հարաւան աւարներով՝
 Զարգարեղու պալատն իմ պերճ:
 ԺՈՂՈՎՈՒՐՒԹՅՈՒՆ (Երեւնոց ուսէն դոյնդոյն
 շուրէրն հանկուտով, տարով) —
 Արդար Մելիք, մեմէ չունենէ գանձ-
 Տա՛ր մեզ գերի թա շէօլ երկրին,
 Թող ինչ համար հեմ աշխատիմք,
 Քա չէօլն ընենք ծաղկած դրախտ...
 Մելիք — Զէնքե՛րն բերէ՛ք ձեր ժամտա-
 սուր,
 Ձեր աղեղներն ու նիզակներ...
 ԵՐԻՏԱՍԱՍՏՐՈՒՄ ԵՒ ԵՐԼ. (առաջ անցնելով) —
 Բարեւէր տէր, մեմէ չունենէ գեմէ...
 Մելիք — Գի՛նի՛ր ընէ՛ք, այրած հոգիս
 գինի կ'ուզէ...
 Այրած հոգիս գինի կ'ուզէ...
 Բերէ՛ք առատ... Հոսի՛ր կարմիր...
 ԿԻՆ ՄԸ (փարս) մը գի՛նի ժատուցանե-
 յով) —
 Ընդէ՛ր բաժակն այս կայծկլտուն
 Անպաւկան մեր գինիին,
 Այգիներէն Նոյեան հիմ-հիմ,
 Ատուածահան ըմպանն ուրախ՝
 Որ մարդերուն կը բանայ
 Սիրտը լուսասող երկինքներու...
 Մելիք (կ'ըմպէ ամբողջ թասը մէկէն) —
 Պա՛ր պարեցէ՛ք, նազ ազգիկներ,
 Գինով գլխուս դարձէ՛ք իմ շուրջ.
 Կ'ուզեմ ըլլայ ուրախութիւն
 Յաղթանակի այս տուն օրիս...
 (Առջիկները հրապարակ կուզան ու
 շուրջպար կ'ընեն անձայն, օրորուն):
 ՎԱԽԿՈՏ ՎԻՐԳՕ —
 Շուշանն հոգիքը, պոյնօ՛ւղ մատաղ,
 Խուր-խուր պարէ՛ք, արագ դար-
 ձէ՛ք.
 Զուարթութեան մէջ թող խնդուի
 Վայրենութիւնն յաղթակամին...
 (Աղջիկները կը շարունակեն պա-
 րել, երգով):
 Մելիք (գի՛նովի շարժումներով կը մօ-
 տենայ, կը փորձէ բռնել աղջիկներէն
 մէկը) —

Եկա՛ր, նուշիկ, կակոն ազգիկ,
 Պարէ՛ ինձ հետ...
 ԱՂՋԻԿԸ (խուսափելով ձեռքէն) —
 Կորի՛ք, գի՛նով...
 Մելիք (ուրիշ աղջիկ մը բռնել ջանա-
 ւով) —
 Եկա՛ր, թռչնիկ,
 Տանիմ ինչ իմ պերճ պալատին...
 ԱՂՋԻԿԸ — Վայրա՛ց կգալ...
 Մելիք (ձանդութ իրաւունք բռնել ջա-
 նաւով) —
 Եկար, գլխուս ես թագ դնեմ,
 Քեզ նստեցնեմ գահ՝ թագուի...
 ԽԱՆՎՈՒԹՅՈՒՆ — Թագը գլխուս պահէ ա-
 մար
 Իմ թագս սիրտիս վէ՛րքն է խորունկ՝
 Քու պիպձ ձեռքովը բացուած...
 Մելիք — Կը սպաննեմ ինչ քէ մեր-
 ծես...
 ԽԱՆՎՈՒԹՅՈՒՆ — Մահը ինչպէ՛ս ընտիր է ինձ:
 Մելիք (կը հալածէ իրաւունք, սուրբ
 մէջքէն կ'իջնայ գետին. Մելիք կը
 դառնայ գի՛նով-դի՛նով) —
 Եղնի՛կ ազգիկ, մի՛ վախ ինձմէ...
 (Մելիք կը դայթի, կ'իջնայ գե-
 տին. յի կ'ընար վեր առնել գլուխը):
 (Աղջիկներուն պարը կը դադարի):

Զ. Դ Ր Ո Ւ Ա Գ

ՏԵՍԱՐԱՆ

Մելիք գետին ինկած է, գի՛նով-
 սուրբ ձեռքէն ինկած. պարող աղ-
 ջիկներ շուրջը կանգնած են, ապ-
 շած. ժողովուրդը հետաքրքիր ու
 վախով:
 ՁԵՆՈՎ ՅՈՎԱՆ (յանկարծ ներս խուժե-
 յով, հեւտտ) —
 Հասա՛ւ, հա, հասա՛ւ...
 Դաւիթը երես...
 Աւեց թափեց, փշուր ըրաւ
 Թանկները շարերու...
 Թուր-կէծակին կապած մէջքին,
 Զայալ Քարկիկ շանթին հետեւ,
 Երկու փոշին երկմի ամպին
 Խառնած՝ հասա՛ւ, հա, հասա՛ւ...

(Ժողովուրդը մէկ կողմ կը խըռնուի) :

Մեկի՛ք (ինկած տեղէն ուղղունելով վեր, սուրը կը փնտռէ, գետինները շօշափելով, գինով) —
Ի՞նչ... ո՞վ հասաւ...
Դաւիթ՞քն քսիր...
Դաւիթն ուրեմն դեռ ո՞րչ կ'ապրի...
ԴԱԻԻԹ (յաղթական ներս խուժելով) —
Ո՞վ է եկեր անեղ խալսէն
Գանձ կը քայլէ,
Գերի կ'ուզէ...
(Լռութիւն եւ սպառնալի սմէնքի միայն) :

Մեկի՛ք (ինքն իր անձին զաւրով, բայց առանց սուրը գտած ըլլալու, դեռ նէն վեր՝ ոտքի կանգնելով, տակաւին գրեթէ վիճակի մէջ) —
Հա, էդ դո՞ւ ես, խենթուկ Դաւիթ...
Որ լէեցիր շէն մեր երկիրն, փախար գող-գող...
Եկեր եմ էս հաշիւդ տալու...
Դուն չես կարող ա՛յ զիս խաբել...
Եօր ճամբէ բանակ հաւաքի,
Եօրը մեղի՛ք հետս եմ քերք...
Հանէ՛ր կռուի՛ք քո զինուորներն...
ԴԱԻԻԹ. — Մեղի՛ք, մեղի՛ չէ՞ որ ես գարնեմ,
Թափեմ քո խեղճ զինուորները...
Անոնք ալ մարդ չե՞ն հողածին,
Չունին՞ն տուն-տեղ, երկխաներ...
Արատ, քշուառ քո զօրամներն
Ինչո՞ւ քարդեմ ես ի գար տեղ...
Թող չգարդուի խալս-խալսի դէմ.
Ես էս դէմդ կռուեմ միակու...
Թէ ես յաղթեմ՝ քեզ կը քողենմ
Գնաս ազատ բայց ա՛յ չգաս.
Թէ դուն յաղթես՝ հալալ ըլլի
Աշխարհն ամբողջ էս ոտքի տակ...
Մեկի՛ք (ոտքի ցատկելով) —
Ընդունեցի՛ւ. պիտի կռուի՛նք
Քաջ-քաջի դէմ, ես-դուն միմակ...
(սուրը կը փնտռէ)
Ա՛հ, ո՞ւր է սուրս... ո՞վ գողցաւ
գայն...
Դա՛ւ է, դա՛ւ կայ...
Իմ զինուորներ... ո՞ւր էք... հաւտէ՛ք...

ԴԱԻԻԹ (Ձէնով Յօժանին) .—
Մօրեղբայր, սու՛ր սուրը չարիմ,
վերցա՛ւր գետնէն.
Տուր սուրն իրեն...
Լաւ չէ՛ դիւրին մահով մեռնի.
Թող հագնի իր գէնն ու գրանն,
Թող արթննայ գինով գլխէն...
Չըսեն՝ Դաւիթ գող-գող եկաւ,
Չարկաւ անգէնն, գնաց գող-գող...
Տուր գէնէն իրեն...
(Ձէնով Յօժան զէնքը դեռնէն կը վերցնէ, կու տայ Մեղի՛քին) :

Մեկի՛ք (զէնքը ձեռքին մէջ՝ կը կանգնէ Դաւիթի դէմ. բայց միշտ վարանոտ է: Յանկարծ մեղմ, ողորկ ձայնով կ'ըսէ Դաւիթին) —
Դաւիթ, վերջ տանք այս վատ խաղին...
Եկուր երթանք Մարայ մեր տուն,
Նստինք գահին մենք միասին...
Ըլլանք երգայր՝ ինչպէս հինին,
Տիրենք երկրի սարիմ, չէօյին...
ԴԱԻԻԹ. — Ես մեր սարի փոքրիկ ստուակրն այս չինք
Ձեմ փոխի, չե՛մ, պղտոր գետին քո հսկայ...
Պէ՛տք է կռուենք...
Մեկի՛ք (խորամանկութեամբ, քաղցրաձայն. մտաւալէ ետքը) —
Կռուի՛նք. բայց դեռ շատ ունի՛նք օր. Նստինք խմենք, մի էէֆ անենք.
Յետոյ կ'իյնենք վախճան քախտին...
ԴԱԻԻԹ (վճռակամ) .—
Ձէ: Մեր պապերն
Մեզ մի էպպէս խրատ են տուել,
Թէ տուչմանն, որ մեր դէմ կանգնեց՝
Պէտք է կռուենք մենք ճոյն ժամին,
Միմէս յաղթենք կամ սարսուռենք...
Դէ՛մ կաց. պէտք է կռուի՛նք, ես-դուն...
Մեկի՛ք (ճարտաւար) .—
Լա՛ւ. պիտ' կռուի՛նք...
(կը ցնցէ զինովութիւնը իր գըլ-խէն)
Հարուածն գորո՞վ տանք, քէ հերքով...
ԴԱԻԻԹ. — Ի՛նչպէս ուզես...
Չարենք հերքով,

Աւելն մէկս՝ երե՛ք հարուած...
 Մեկի՞ք. — Ընդունեցի՛ր.
 Նախ կը գարնեմ ես, զի մե՛ծդ եմ...
 ԴԱԻԻԹ. — Լա՛ւ. գարկն ցախ զո՛ւն...
 Ունես ինձ դէ՛ւմ երե՛ք հարուած...
 Մեկի՞ք (հոս-հոս կը քաշուի, թափով կը յարձակի). —
 Հա՛հ...
 (Հարուածը սուկաշն կը վրիպի)
 Ա՛յ, տնակեր, հարուածս լաւ քափ չառա...
 ԴԱԻԻԹ. — Մեյի՛ք, ունես երկու հարուած...
 (Մեյի՛քը հոս-հոս կը քաշուի, նոր հարուածի թափ սոսնելու):
 ԴԱԻԻԹ. — Կեցի՛ր մի շունչ...
 Հալա՛լ քրէ՛ք քո մօր կաթն ինձ...
 Մեկի՞ք. — Հարա՛մ քլլայ...
 (Վրասն կը ցատկէ, կը դարձէ ուժ-դին)
 Հն՛դ էիր, քեզ դարձնե՛ք փռչի...
 (Քայց հարուածը դարձեալ կը վրիպի):
 ԴԱԻԻԹ. — Մեյի՛ք, քեզ մէկ հարուած միայն մնաց...
 Մեկի՞ք (տոտեց միջոց տարու՛ յարձակելով). —
 Այդ մէկն էլ քաւ է՛
 Շիցեցնելու քո արեւն...
 (Հարուածը դարձեալ կը վրիպի. սուրբ գետին կ'իջնայ Մեյի՛քի ձեռքէն. Մեյի՛ք կը մնայ շուարած):
 ԴԱԻԻԹ (Մեյի՛քի սուրբն վրայ կոխած). —
 Մեյի՛ք, դուն քո երեք գարկերը պըրծա՛ր.
 Հերթը եիմի ի՛նձ է... պի՛նզ կաց...
 Մեկի՞ք (չուարած ու պաղատագրին). —
 Կեցի՛ր մի շունչ...
 Դու իմ մօրը կաթն ես խմեր.
 Նրան մի քախշ չե՞ս անի...
 ԴԱԻԻԹ (ինքնամոփոխելով պակ մը, բարեկուրթ). —
 Քանի դու մօր կաթն յիշեցիր,
 Երեք գարկէս միմը քրան քախշ քլլի...
 Ունեմ միայն երկո՛ւ հարուած...
 Մեկի՞ք. — Դաւիթ, քո հայրն՝ անեզ Մը-հեր՛
 Եղբայրաբեան զաշիմք ունի իմ

գահի հետ.
 Նրան հագայն քախշ չե՞ս անի...
 ԴԱԻԻԹ (իր հարուածելու դերքէն ուսում մը ես ընելով). —
 Քանի ազիզ հայրս յիշեցիր,
 Ես մի հարուած էլ քրան
 Անեզ անուան քեզ քախշ կ'անեմ...
 Ունեմ միայն արդ մէկ հարուած...
 (Դաւիթ կը պատրաստուի հարուածելու):
 Մեկի՞ք (Դաւիթիմ արեւի մօտ գալով՝ պաղատագրին). —
 Դաւիթ, դու ինձ եղբայր ես եղել.
 Դու իմ կեանքին չե՞ս խնայեր...
 ԴԱԻԻԹ (զայրացած). —
 Թէ ես քո մօր կաթն եմ խմեր,
 Թէ հայրս քեզ հետ զաշիմք ունի,
 Կամ ես եղբայր եղել եմ քեզ՝
 Դու գայս ինչա՞ւ չիշեցիր
 Մեզ աներեւ կ'ամ օրիդ...
 Ա՛ն հարուածն իմ քեզ պատախախտեմ...
 (Դաւիթ ուժգին կը հարուածէ, Մեյի՛քը կը ձգէ գետին. Մեյի՛ք գետին կը թաւալի):
 ԽՄԲԵՐԳ (ժողովուրդը կը ցնծայ). —
 Ինկա՛ւ չարք...
 Ապրի՛ր Դաւիթ...
 Մեկի՞քի ԶԻՆՈՒՈՐԸ (խուճապահար, դուրսէն պոռայով ու ներս խուժելով). —
 Մեյի՛ք, Մեյի՛ք. փախչի՛՛՛ք աքաղ...
 Մեր գործերը ցրուած քափած են,
 չոր տերեւ...
 (յանկարծ կը նշարէ Մեյի՛քը գետին ինկած)
 Ա՛հ, վիշապ-ձին, հուր-աուրովը
 քե՞զ այլ գարկաւ:
 (միւս կողմ գառնալով՝ կը տեսնէ Դաւիթը, առջէւ ծուռկի կու գայ)
 Ա՛հ, դու այստե՞ղ ես ուրեմն...
 Ես քո գո՛ւլն եմ.
 Քո ոտքի տակ մի խնամար...
 ԴԱԻԻԹ. — Եյի՛ր. հաւէ՛լ՝ գործդ Քըշուտ,
 Տա՛ր ձեր երկիր խաղաղութեամբ...
 Փայլի անուար արեւն իմիկ կաթու-հին...
 Քայց այլ անգամ գործ չուզարկէ՛ք՝
 Խարձ ու խարան խլի խալխէ՛մ...

Թէ որ դարձեալ գեճ վերցնէ՛
 ֆառսուն լերան հտին հեռու իսկ
 պահուրտի՛
 Ձեզ կը հասնի թարն-կէծակին...
 Աւարելէն ի՞նչ խեր կ'ելնէ...
 Ձեռքեր շունչ, աշխատեցէ՛ք.
 Դա՛ք ալ կերէ՛ք...
 Դուք ունէ՛ք ձեր լայն-լայն երկիրն,
 Ապրեցէ՛ք հոն բէ՛փսվ, փառքով,
 Մեզ էլ բողէ՛ք ապրիլ խաղաղ մեր
 սարերուն...
Մեկնիքի Ձեռնովն (խոնարհելով, հա-
 ետ Հեռանայով) :—
 Հագա՛ր շնորհէ՛ք...
 Արե՛ւդ անմար...
 Կեանք բաշխեցիր, կեանքն ան-
 վախճան...
*(երկրպագութիւններով կը մեկ-
 նի) :*
ԺՈՂՈՎՈՒՐԴԸ (ցնծերգելով) :—
 Կորա չարը...
 Ապրի Դաւիթ...
 Ազատութիւն բերաւ Աստուծ...
ԴԱՒԻԹ :— Արի՛ք հոյարք, մտա՛ք էոյ-
 բեր-
 Հա՛ւէ՛ք, տարէ՛ք մայրը ձեր...
*(Ժողովուրդը կը Հաւաքէ իր լը-
 ւած դոյրերը) :*
ԽՄԲԵՐԳ :— Ձար բշխամի՞ն գարկիր, Դա-
 վիթ.
 Աստուած քեզի տուցան չտայ.
 Մեռ գամձերը ետ բերիր տուն,
 Աստուած քեզի հագար գաճա տայ :
 Մեր ջահիլներն ազատեցիր-
 Ծառայ լինենք քեզի բոլորս.
 Պսակ կապենք գլխուդ նարոտ՝
 հանդուք հաքուն քեզ հետ, Դա-
 վիթ...
ՔԱՀԱՆԱՆԵՐ (կը մտնցնեն Դաւիթն ու
 Նանդուբը իրարու. երկուքին ալ
 զլոտխար պսակ կը դետեղեն) :—
 Օրհնութի՛ւն, օրհնութի՛ւն.
 Պսակն ըլլայ անթառամ.
 Լոյս, լս՛յս ծագի Դաւիթի տան...

ԽՄԲԵՐԳ :— Տօն, հարսանիք՝ ուրախու-
 քեան.
 Պսակ դրին Դաւիթ-Խանդուք.
 Ապրի ազատ տունն Սասունի,
 Ըլլան առատ դաշտեր բերրի.
 Ձիւնով մնան լեռներ մեր ծեր,
 Գետեր հոսին երկար ջաղ-ջաղ...
ԴԱՒԻԹ (վերացած զէպի Ծովասոր) :—
 Ահա ժայռը հարէն մեղքեր,
 Ծովասարի՞ն կապեր կամար,
 Մէջ կը հանգչեն իմ հէրն ու մէրն...
 Խաչ դնեմ վրան, ես մի վանք կանգ-
 նեմ...
 Մեքի ծայրն ըլլայ լուսեղ տուն
 հոգիի...
*(Ճունկի կու գան Նանդուբ ու
 Դաւիթ. Ժողովուրդը կը Հետեւի ա-
 նոնց) :*
ՔԱՀԱՆԱՆԵՐ :— Օրհնութի՛ւն, գովու-
 քի՛ւն.
 Թող ամէն մարդ խաղաղութեամբ
 դառնայ իր տուն...
 Կ'իշխէ տէրը ժողովուրդին...
 Սասուն մնայ կանգուն, անյաղք՝
 Գալիք անվերջ սերունդներուն...
ԺՈՂՈՎՈՒՐԴԸ (քէ-քէ կը Հեռանայ,
 կը մեկնի, կը Հեռանայ, մինչ իրժ-
 քերը կը տարածուի) :
ԽՄԲԵՐԳ :— Օրհնութի՛ւն, օրհնութի՛ւն.
 Տօն, հարսանիք ուրախութեան.
 Պսակ դրին Դաւիթ-Խանդուք...
 Ապրի ազատ տունն Սասունի,
 Ըլլան առատ դաշտեր բերրի.
 Ձիւնով մնան լեռներ մեր ծեր,
 Գետեր հոսին երկար ջաղ-ջաղ...
 Օրհնութի՛ւն, գովութի՛ւն.
 Թող ամէն մարդ խաղաղութեամբ
 դառնայ իր տուն.
 Կ'իշխէ տէրը ժողովուրդին...
 Մնայ Սասուն կանգուն, անյաղք՝
 Գալիք անվերջ սերունդներուն.
 Օրհնութի՛ւն, օրհնութի՛ւն...
*(Երկուքները հասնում են ժողովուրդին հ-
 աւելն՝ քէ-քէ կը Հեռանան. երկու
 ծայրը կը մարի Հեռասոր արձագան-
 քով) :*

Յ. Ն Ա Գ Ո Ւ Լ Ե Ա Ն

ՅԵՏԱԴԱՐՁ ՎԱԶՔ

Հին աստուածներու կործանումէն վերջ
հին երգերու անլսելի լուսփունը
ալ չարձագանգեց ներաշխարհիս մէջ
չբարեացայ

չար են աչքերս
օրուայ ընթացքին վայրկեաններ միայն կը բարեանան
ձիեր կը վազեն արիւմիս մէջէն դէպի անցեալս
ու մարմինս կը տանին հոգիիս մէջ դէպի ետ
կը լսեմ ձայներ նախահայրերս
մեծ Տիգրան Մեծէն
եւ Արտաշէսէն
կ'անցնիմ քայլ առ քայլ հանգրուաններէն
եւ կ'ուղղուիմ դէպի դիւցազներգական ակունքն հայրերուս
դէպի վահագնի ծննդավայրը
չորս հազարամեայ
ու դեռ չհասած
ու դեռ չհասած հեթանոսական հին խորաններուն
վէճեր կը ստեղծեն ու կը բարկանան ու կը բարկացնեն
նախահայրերուս նախահայրերը
հայ մարգարէներ իջան երկինքէն Քրիստոսի պէս
հոգիներուն մէջ նիւթ ստեղծեցին
ու կործանեցին դիւցազներգութիւնը երակներուն մէջ
նախահայրերուս նախահայրերուն

չար եմ էութեամբ
չար են աչքերս
ժառանգուած անհամբերութիւն

երկինքին մէջ երգի պէս գեղեցիկ են աստղերը
եւ բացօթեայ պարտն է այս
արտաշէսեան
որ կողմ դառնամ գեղեցիկ են ազդիկները ուրարտական

հոգիս մէջ լուսփունը մեղեդիս է հին երգերուն
նժոյզներ կը տանին զիս Սանահիւնի լեռներն ի վեր
եւ փոշոտուած հաւատամքի իրենց տեղով նախնիներս
աչքիս առջեւ կը կառուցեն եկեղեցին Սանահիւնի
տիեզերքէն կախուած կարծես

եւ իսկապէս կը հուստամ այս րուպէին
 որ աստուածներ պիտի իջնեն հոն բնակին
 կ'անցնիմ Հալրատէն ու Ղարաբաղէն
 կ'անցնիմ Տաքելէն ու Բիրականէն
 կը վերադառնամ նախահայրերէս
 ու կը գգամ արդէն
 հին երգի մը լոռի քիւնը
 ներաշխարհիս մէջ
 արձագանգի պէս
 ահա կը յուզէ
 կը մեղմացնէ զիս
 կը բարիացնէ
 ծանօթ ու հին երգի մը պէս

*

**

մեծ քաղաքին մէջ
 շարժող խնդացող տերեւներ չկան
 ստուեր կայ միայն

մեծ քաղաքին մէջ միայնակ կը գգաս
 անծանօթի պէս
 եթէ ի հարկէ անծանօթ ալ չես

արեւէն տնդին երկինքներ չկան
 մեր երազներուն առաստաղն է ան

բնութիւնը արեւին ձայնն է
 կը հմայէ Քեզ
 եթէ ի հարկէ ունկնդրելի գիտես

բնութեան բոլոր խիւղ ու հանոյժ է
 երբ շնչելի գիտես

ճառագայթները
 տարբեր հոգիներ իրար միացնող կամուրջներ են
 երեւակայէ

մերձեցման բարդոյթ
 հոգիին դպնալու տեճ

եթէ գիտես ի հարկէ
 մարդիկ
 մարինջ ծախելու հոգեբանութենէն գուրկ

digitised by A.R.A.R.@

որոնց հետ կամուրջ ստեղծես
 նառագայթային
 անասկարկ ապրիս

կեանքը մետալիոն
 մէկ կողմը բնութիւնն է
 գեղեցկութիւնը

միւս կողմը տիեզերքն է
 մտորումներու արեւած ծովը
 եթէ ի հարկէ մտածել գիտես

եթէ կարենաս երկու կողմերը իրար միացնել
 մէկ աչքով տեսնել

անկարելի բան
 եւ եթէ նոյնիսկ ամէն ինչ գիտես

ով կրնայ հասնիլ արեւին
 նախ քան իր կեանքին արեւամուտը

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԳՈՒԼԵԱՆ

Մ. Ի Շ Խ Ա Ն

Ս Պ Ա Ս ՈՒ Մ

(Վ Ի Պ Ա Կ)

Գրեթէ ամէն Շորաթ օր, յետմիջօրէին, Արշակ կու դար մեր գիւղը, պայուսակը կը նեաէր պանդոկ եւ ուղղակի կը վազէր մեր տունը: Շորաթ եւ հիրակի մեր առանձնութիւնը Սոնային հետ կը խնդարուէր, բայց ես դժգոհ չէի ատկէ: Արշակ իր կատակներով եւ պատմութիւններով նորութիւն կը մտցնէր մեր կեանքէն ներս: Կը խորհիմ, թէ գրախօի բնակիչներն իսկ, հակառակ իրենց վայրած անվախճան երանութեան, նորութեան ու փոփոխութեան կարօտը կը քաշեն: Արշակի ներկայութիւնը առիթ կ'ըլլար, որ մեր պտոյտներուն շրջանները ընդարձակենք, հեռաւոր արշաւներ կազմակերպենք դէպի զովարանուած անաղբիւր մը կամ տեսարժան վայրեր: Անպիտանը ծնած էր բնկերական միջնայրը զուարթացընելու համար: Լաւ գիտնալով հանդերձ իմ եւ Սոնայի յարաբերութեանց մտերմական բնոյթը, երբեք չէր կորսնցներ իր բնականութիւնը եւ երբեք չէր դադրեր Սոնան դարպասելէ: Գիտէի իր սիրտունքը.— սիրային հարցերուն մէջ յուսահատութիւն չճանչնալ եւ յարատեւել: Օր մը ըսած էր ինծի. «Եթէ դործի մէջ յաջողելու հիմնական պայմանը կամքն է, ինչո՞ւ նոյն պայմանը չյարգել նաեւ սիրոյ մէջ?»:

— Բայց, Արշակ, — պատասխանած էի իրեն, — դործը տարբեր է, սէրը՝ տարբեր, սէրը զգացում է եւ կամքին չի հպատակիր:

— Պարապ խօսք, ես փորձով գիտեմ, թէ ամէն ազգիկ ուշ կամ կանուխ կ'իյնայ: Միայն թէ դուն յարատեւես...

Սոնայի զիննալէն նուազադոյն վախն իսկ չունէի եւ ամէն անգամ, որ վերոյիշեալ տեսութիւնը միտքս դար, Արշակի ներկայութեան, խնդալս կը բռնէր: Յուզիչ եւ նոյն ատեն ծիծաղելի բան մը կար բարեկամիս բռնած ընթացքին մէջ: Մեր արշաւներու ճամբուն վրայ՝ տեսնելու բան էր անոր ծառայատիրութիւնը. կը շարկէր Սոնայի բոլոր պոյքերը, ձեռքի պայուսակը, բուրդէ փոքրիկ ժաքէթը եւ յաճախ զլիարկն անգամ: Առուէ մը անցնելու ատեն կը վազէր առաջ, կը բռնէր ձեռքէն, զպուշտութեան ազգարարութիւններ կ'ուղղէր յաճախ, կ'երգէր, կը շատախօսէր, խելքէն վեր բաներու մասին կը փիլիսոփայէր, ջուր եւ ուտելիք կը մատակարարէր: Եւ այս բոլորին փոխարէն, իբրեւ վարձատրութիւն, կը դահանք Սոնայի ժպիտներով:

Այլ ժպիտները սկսեր էին հետզհետէ նուաղիլ: Կը նկատէի, որ Սոնա առաջուան պոհունակութիւնը չէր զգար Արշակի հաճոյական շարժումները տեսնելով: Ընդհակառակն, կը նեղուէր եւ իր դժգոհութիւնը յաճախ կ'արտայայտէր դէմքին վրայ՝ ծուռ երես

ցոյց տալով: Այսպիսի պահերու եւ աւելի կ'ազդուէի, քան բարեկամս, որ անայլայլ կը մնար իր վերաբերումին մէջ: Կիրակի իրիկուն մը, չեմ յիշեր ի՞նչ տոկթով, Սոնա դայրացու եւ բուն խօսքերով յանդիմանեց Արշակը: Կարծեցի, թէ Արշակ գլխարկը պիտի առնէ ու մեկնի՝ ա՛լ չփրայտնուալու համար: Սակայն մեծ եղաւ զայրմանքս, երբ հանդարտ ու ժպտուն՝ կտտակի վերածեց Սոնայի կծու խօսքերը եւ մեկնելու ասոն հարց տուաւ.

— Գալ Կիրակի ա՛յր պիտի երթանք. սանկ աղուո՛ր պտոյս մը կազմակերպենք ամբողջ օրով:

Բարեկամիս մեկնումէն ետք դարձայ Սոնային եւ ըսի.

— Ինչո՞ւ այդպէս կը վիրաւորես տղան, անյարժար է...

— Է՞, ա՛լ չափը անցուց: Չեմ ախորժիր իր ձեռքերուն ճեւեռըն. շատ լաւ դիտէ մեր կտայրը եւ նորէն կը շարունակէ...

— Մեզի ի՞նչ վնաս կայ տակէ: Ուզածին չափ թող շարունակէ:

— Ո՛չ, չեմ ուղեր: Ես կ'ուզեմ, որ ամէն ինչ պարզ ըլլայ թէ՛ մեզի համար, թէ՛ իրեն:

Այս միջնորդէպը կացութենէն հիմնական քան մը չփոխեց ի հարկէ, սակայն Սոնայի վերաբերումը Արշակի հանդէպ այնուհետեւ մնաց պարզ եւ զգուշաւոր:

Մեր բնտանիքներուն յարաբերութիւնները գիւղին մէջ դարձեր էին մտերմական: Շարժումն մէջ քանի մը անգամ փոխադարձ այցելութիւններ կը տրուէին իրարու եւ երկուստեք զո՛ւ կ'երեւէին իրենց զուակնելու հոգեկան կապէն, որ ա՛լ գաղտնիք չէր ոչ մէկուն համար եւ որուն անխուսափելի վախճանը ամուսնութիւն կը թուէր ըլլալ: Սոնայի մաման գինաթափ էր շատոնց: Իր ոստիկանական հսկողութենէն աղատած էինք այլեւս: Կը բաւականանար մեր ամբողջութեան վրայ գուրգուրալով եւ զիս ճաղաս՝ կը կոչէր: Ամէն անգամ, որ իրիկուան դէմ իրենց տունը երթայի Սոնան առնելու, յանկերպի մը պէս կը սիրէր կրկնել նոյն խրատները.

— Օղջ զով է, կը մտիք, մէյ-մէկ քան հաղէք եւ այնպէս դուրս ելէք...

Գալով մօրս՝ չափազանցած չեմ ըլլար եթէ ըսեմ, թէ ինծի չափ կապուած էր Սոնային: Այս վերջինիս հեղահամբուր բնաւորութիւնը, շնորհալի կեցուածքն ու խօսուածքը, յարգալից վերաբերումը եւ տանտիկինի անփիճելի յարմարութիւնները գրաւած էին մօրս սիրտը:

— Ասանկ աղջիկներ հիմակուան դարուս շատ քիչ կը գըտնուէին, — կ'ըսէր ինծի, երբ Սոնան ժամու մը չափ հեալ զրուցելէ ետք ասուն վերադառնար:

Մօրս միակ փափաքն էր դիս ամուսնացնել, հարս ու թոռ ունենալ եւ մահացած հօրս օճախը վառած տեսնել: Սոնան իր աչքին լաւագոյն հարնցուն էր, որ կրնար գոյութիւն ունենալ երբեիցէ:

Քիչ անգամ սիրող սրտերուն առջեւ տարածուող ճամբան այսքան հարթ եւ պայծառ եղած է: Արտաքին ոչ մէկ արգելք՝ մեր վերջնական միացման դէմ: Ընդհակառակն, մենք ունէինք ամէն քաջալիքանք, որ մեր սէրը յանգէր իր տրամաբանական լուծումին: Սակայն ես անձնապէս (կը կարծեմ, նաեւ Սոնան) այդ մասին մտածած անգամ չունէինք: Սիրել ամուսնանալու համար՝ ի՞նչ հասա-

րակ եւ ընթացիկ պատմութիւն: Մեր սէրը վե՛ր էր այլ բոլորէն: Մենք իրար կը սիրէինք՝ սիրելու զեղեցկութեան ու վեհաթեան համար, ինչպէս իրողան արուեստը կը մշակուի ուրուեստին համար: Մեր սէրը երգ էր, նկար, վէպ, բանաստեղծութիւն եւ ժամէ ժամ, օրէ օր պէտք ունէր հիւսուելու, կերտուելու, բարձրանալու, հատարելադործուելու: Ինչպէ՞ս կարելի էր անոր զօրծնապաշտ նըպատակ մը ունեննել եւ կասեցնել անոր սլացքը մտնանախան կէտի մը վրայ:

Կրնայի՞ այս մտածումներս մօրս բացատրել: Խեղճ կի՛նը սպառն էրեւս պիտի նայէր եւ անդամ մը եւս պիտի կրկնէր կեանքի իր ըմբռնումը՝ իր հասկացած ձեւով:

— Քանի որ կը սիրես՝ ինչո՞ւ չամուսնանաս: Սոնան լաւ աղջիկ է, վստահ եմ՝ երջանիկ կ'ըլլաք... Լաւ չէ ատանկ սպասելը... Երկուքիդ ալ մեղք է:

Ես երդուեալ հակառակորդ մը չէի անուշտ ամուսնութեան: Բնագրաբար կը զրայի, որ սիրոյ ջուրերուն վրայ տատանող մեր նար վերջի վերջոյ պիտի հասնի այն նաւահանդիսար, ուր կը հասնին ընդհանրապէս բոլոր նուերը: Բայց կ'ուզէի, որ ատիկա պատահէր առանց կանխամտածումի, ոտանց քարտէսի եւ կողմնացոյցի, անծանօթ կողմի մը դիմաւորելու անակնկալ հանդիպում:

Բարեբախտաբար Սոնան, ինծի պէտ, կը զուշահար ամուսնութեան մասին խօսելէ եւ ես այն տղաւորութիւնը ունէի, թէ կը բաժնէր իմ ապրումներս: Մէկ անգամ միայն որոշակի ակնարկութիւն մը փորձեց կատարել այդ ուղղութեամբ՝ շատ փարպետ զարձակածքով մը: Ամայի ճամբաներէ պիտի կը վերադառնայինք. մատնեքուս եւ շրթներուս վրայ Սոնայի մարմնին ինքնայտուկ բոյրն ու ջերմութիւնը կը յամենային տակուին: Իրիկիսմտոր հստակապէս էր լեռներու կատարին: Գիմտցր, հովիտին մէջ, հոս-հոն ցրուած ճրագներ կը վառէին իրարու ետեւէ: Մենք կը քայլէինք անիրական աշխարհի մը մէջ կարծես, լուռ, թեթեօրէն ընդարձացած ու պտրտաբուն: Բաւական ստեղծ կողք կողքի ոնիսս առաջանալէ ետք, անդրադարձայ, որ Սոնայի գէժքին բնական դուարթութիւնը խոյս էր տուած եւ յօնքերուն միջեւ կազմուած էին դոյզ մը զիծեր: Այնքան լաւ կը ճանչնայի Հիմա անոր գէժքին բոլոր արտայայտութիւնները: Յօնքերուն միջեւ կազմուած խորշերը անպայման մտմտութեամբ կը կը պահէին իրենց մէջ:

— Ի՞նչ ունիս, — ըսի՝ թեւէն բռնելով:

— Ոչինչ, բան մը չկայ, — կ'մկմաց՝ հիւանդ ժպիտ մը խաղցրնելով այտերուն վրայ:

— Բան մը կայ, պիտի բռնես, — պնդեցի հրամայական: Երբ ես հրամայական այդ շեշտը տայի խօսքերուս, Սոնան լաւ գիտէր, թէ կռիւ կը փնտռէի եւ աննշան խնդիր մը արամաղիք էի մեծցնելու, մինչեւ որ ինք արտասուալից մեղաբանումով մը վերաշահէր սիրտս: Ուստի՝ փութաց ճշմարտութիւնը յայտնելու:

— Գիտես, Սրամ, տունէն սկսած են մտահոգուել:

— Ինչո՞ւ:

— Կը հարցնեն, թէ ինչո՞վ պիտի վերջանայ մեր այս... բարեկամութիւնը: Մայրս նորէն այսօր երկար-բարակ խօսեցաւ այդ մասին...

— Գո՞ւն ինչ ըսիր :
 — Ոչինչ : Ըսի, թէ քու պարկեշտութեանդ վրայ մէկ վայր-
 կեան իսկ չեմ կտակածիր :

Ի՞նչ կ'ուզէր ըսել չարկեշտութիւնք բացատրութեամբ : Իր
 կողմէ հնարուած ուղղամտութիւնն էր արդեօք տյա ամէնը, թէ
 իրապէս տնեցիներուն մտահոգութիւնը կը փոխանցէր ինծի : Յա-
 մենայնպէս, շատ չախորժեցայ իր խօսքերէն եւ չուզեցի վերա-
 ծել գանձիք : Լուսթիւնը մեզ տաքնորդեց մինչեւ տուն :

Սեպտեմբերի վերջերուն մեր սիրարշաւի խօսակոն թափը
 զլալի զանդաղում արձանագրեց : Ամէն շաբաթի յաջորդող անխու-
 սափելի թօլայումն էր ասիկա : Տարօրինակ խոնջկնք մը իջած էր
 ջիղերուս եւ ես հուսով անհամբերութեամբ կը փողէի ժամադրա-
 վայր՝ սոփրութիւնը յարգած ըլլալու վարժութեամբ : Անխառ-
 վանելի ցանկութիւն մը կը խլուէր իմ մէջ եւ ես կը մաղթէի, որ
 կեանքի խաղող ընթացքը բանով ժր խանդարուէր, նոր կացութեան
 մը առջեւ հանելով մեզ : Թէ ի՞նչ պիտի ըլլար այդ նորութիւնը՝ չեմ
 զիտեղ : Միայն թէ անհեթեթ կը թուէր ինծի կեանքի բոլոր արժէք-
 ներսն ուրացումը՝ ի ինչոյր միայն մէկուն : Մէկ օրէն միւսը ծիծա-
 դելի հակասութեան մէջ էի ինկած եւ ինծի հետ : Ես՝ որ միայն սէր
 երազած էի եւ հաւատացած, որ սէրը պիտի դառնար կեանքիս ի-
 մաստը, հիմա կուշկունդի : Եւ յողնեցող կը դանկէի անոր քաղցր լու-
 ծը : Մայրս իրաւունք ունէր, երբ յաճախ դիտել կու տար ինծի :

— Տարօրինակ տղայ ես, գո՞ւն ալ շեւ գիտեր, թէ ինչ կ'ու-
 զես...

Բուսական խոշոր ճշմարտութիւն կը պարունակէր այս խօս-
 քը : Եթէ ինծի յայտարարէին, թէ ա՛յ պիտի շտեմեմ Սոնան՝ կըր-
 նայի խենթանալ : Միւս կողմէ, սակայն, գոգոհութեան որդ մը
 զարդանորէն սպրդած էր իմ մէջ եւ կը կրճէր սիրտս : Ի՞նչ էր պատ-
 ճառը, ի՞նչ բանէ կը դժգոհէի՝ ի վիճակի չէի որոշելու : Սոնան
 միշտ այն էր, ինչ որ էր : Հեղ, բարի, ուշիմ եւ հաճոյսկատար :
 Հիասթափութեան ոչ մէկ առիթ տուած էր ինծի : Այսուհանդերձ,
 օրէ օր աւելի ջղային կը դառնայի, գործի ընթացքին խառնապա-
 հանջ, իսկ դիւր՝ քմայքոտ : Միտուած ըլլալու կատարեալ սպա-
 հովութեան մէջ՝ նախանձի տեսարաններ կ'երեւակայէի : Միտքս
 ակտուար հաճոյքը ունէր երբեմն-երբեմն իրողութիւնները շրջ-
 ւած տեղեւոր, ինչպէս օրինակ՝ Սոնան մեզանչող, ես՝ վշտահար,
 կեանքը՝ խորտակուած : Կը պատահէր նաեւ, որ առանձնութեան,
 իմ անձիս ու երազներուս վերադարձին զօրաւոր կարօտը զգայի՝
 տարաշխարհիկ ծաղիկի մը կորսուած բոյրին պէս : Անբացատրելի
 պարսպ մը կար կեանքէս ներս : Երջանկութեան լիահոս աստու-
 թիւնն էր արդեօք պատճառը, որ երջանիկ չէի : Սոնան կը նշմարէր
 անշուշտ ինձմէ ներս, հոգիիս հեռաւոր խորշերուն մէջ խմորուող
 փոփոխութիւնը եւ կը ջանար — յարի՛ աղջիկ — զիս սիրաշահել՝
 սիրոյ եւ հաւատարմութեան նորանոր ապացոյցներով : Ձիք դի-
 տած ատենս, երբ նայուածքիս հուրը նուաղած ըլլար, Սոնան կը
 կարծէր, թէ ինքն է յանցաւորը եւ ի զուր պատճառը կ'որոնէր : Երբ
 համբոյրներս շունենային իրենց նախկին ջերմութիւնը, մասհո-

զուժեան ստուեր մը կը յածէր անոր զէմքին վրայ, կը բռնէր ձեռքս եւ կը սեղմէր սրտապին խանդապատանքով: Այդ սեղմումին մէջ ես կը դանկի Սոնայի ապրած ամբողջ խոփը՝ անլուծելի հարցականին առջեւ: Ի՞նչ կրնայի ընել ստիպան. նոյն հարցականը կը տանջէր զիս ալ:

Զպացումներու աշխարհին մէջ ծայր տոտծ տակնուպի տառաջին զօրաւոր ցնցումը կրեցի շարժումն կէտերուն, լուս օր մը, պատահարաւ: Այդ օր զիւզ պիտի չբարձրանայինք երկուքս ալ: Գրասենեակը անյետածուկիլի գործ մը ունէինք եւ զայն աւարտելու համար պիտի աշխատէինք իրիկունը մինչեւ ուշ առեկ: Սոնան պիտի մնար ազգականներէն մէկուն տունը: Որոշեցինք զիշերը սինեմա երթալ: Իրարմով արրեցած՝ երկար տեսնէ գրկուած էինք այդ հաճոյքէն:

Երբ Փիլմը սկսաւ, նկարներու առաջին շարքն իսկ յուզեց զիս: Հերոսուհին՝ խարտիշահեր եւ նրբամտութիւն ազլիկ մըն էր, առաջաստանաւի մը վրայ, արիքներու յարաշարժ ծփանքին անձնատուր: Ամբողջ նիւթը կապուած էր ծովուն եւ զոյգ մը աշքերու կապոյտին հետ, ուր թէ՛ արեւ կար, թէ՛ ժպիտ, թէ՛ վտանգ եւ թէ՛ փոթորիկ: Աղլկան ղեղձան մազերը հովերուն մէջ քայուած՝ հովերուն հետ կարծես կու դային եւ կը շոյէին զէմքս: Մարմինն ամբողջ հողի էր, եւ համբոյրները՝ աննիւթական քաղցրութիւն: Ծովու փրփուրներէն ծնած երկնային էակ մը, որ երկրի վրայ կը շրջի եւ վերին ոլորտներու երազն ու հմայքը կը բաշխէ շուրջններուն:

Կարծես երազի մը թմբիւն կ'արթննայի եւ կը վերադառնայ յի յանկարծ իրականութեան: Պոստառին ազլիկը, իմ հին մտերիմս, իմ բուն եւ միակ սէրս զիմացս էր կրկին եւ ինծի կը ժպտէր իր կախարդական ժպիտովը, որուն լեզուն ես շատ լուս կը հասկնայի այդ պահուն եւ որ կ'ըսէր ինծի. «Տ'ըր էիք մինչեւ հիմա, մոլորած տրդայ, ինչպէ՞ս կրցար մոռնալ զիս, եւ խարկոյ ուրիշներու հետ...»

Հոգիս ալեկոծ էր՝ զիմացս տարածուող խոփայտոյց ծոյրուն պէս: Իրօք, ո՞ւր էի մոլորած քանի մը ամիսներէ ի վեր, ինչպէ՞ս կրցէր էի այլիւ առանց երազի, ո՞վ իստծ էր ինձմէ իմ տեսիլքներու կապոյտ պարիկը: Նայեցայ կողքիս. Սոնան նստած՝ Փիլմը կը դիտէր՝ հանդարտ, յոյնած, զրեթէ անտարբեր: Թեւը կը հպէր արմուկիս եւ մասները երբեմն կ'իյնային ձեռքիս վրայ: Ինչո՞ւ չքով էր ան, ի՞նչ կ'ուզէր ինձմէ, ո՞վ էր ի վերջոյ աներազ զէմքով խոնարհ այդ աղլիկը: Թուեցաւ պահ մը, թէ ես չեմ ճանչնար բարեկամուհիս, թէ՛ ան թիւրիմացութեամբ սեղմուած նստած է կողքիս, եւ թէ՛ իմ հոգեհատար մտերիմս ան միւսն է, հեռո՞ւն, առաջաստանաւին վրայէն ժպտացող սկիծամ եւ փրփրամարմին աղլիկը:

Երբ լրջաբը վառեցան եւ մենք դուրս ելանք սրահէն, վստահ եմ՝ զէմքիս վրայ կը կարգացուէր ապրած յուզումս: Սոնան քնկծբւած երեւոյթ մը ունէր եւ կը քայլեր սնիսս: Սիրտս պարպելու եւ խանդապատ վերացումին հաճոյքը մէկուն հետ բաժնելու պահանջ ունէի:

— Ինչպէ՞ս գտար Փիլմը, — հարց տուի Սոնային, նպասելով, որ իր անվերապահ հիացումը յայտնէ:

— Անքնական մասեր շատ ունէր, — ըստ ան, — բայց կարճեւմ չձանձրացանք...

Անքնական մասեր... ձանձրո՞յթ... իսկ իմ հողիւմ մէջ մեղեքներ կ'երգէին եւ ծովուն ամբողջ խորհուրդը կար: Ձարմանալի պիտի ըլլար տրդէն, եթէ Սոնան ասրբիւ կարծիք յայտնէր: Ոտքերը ամբողջն հողին վրայ դրած այդ աղջիկը ամէն բանի մէջ կը փնտռէր քնականութիւն եւ տրամաբանական եղբայրացութիւն:

Իր աղբականներուն տան առջեւ, բաժանման պահուն, գիշերուան մութին մէջ, Սոնան սպասեց, որ դիմք սեղմեմ կուրծքիս եւ համբոյրներով ողորդեմ դէմքը, ինչպէս կ'ընէի միշտ նման անթններով: Բայց ես գոհացայ շոր հողիւն-բարիտով մը եւ մեկնեցայ: Կ'ուզէի վայրկեան առաջ առանձին մնալ ես ինծի հետ: Սոնային տրուած ամէն համբոյր մեղանշումի եւ դաւաճանութեան նրման բան մը պիտի ըլլար այդ դիմքը՝ պատաստի աղջկան լուսէ յիշատակին հանդէպ...

Յաջորդ օր՝ տարագրութենէ հայրենի տուն վերադարձող մէկու մը պէս էի: Հողիւմ աչքերուն դէմ կանգնած էր երազագեղ նոյն էակը՝ եթերային իր ժպետով: Անոր թուերը ինծի կ'երկարէին կարօտապէս ու ես նոյնքան մեծ կարօտով կը դիմէի անոր, զոր ճակատագրին մէջ խաղը ատեն մը խլած էր ինձմէ: Ստուեր մըն էր ան, երազ մը, տեսիլք մը, բայց չէր դադար իմ առաջին սիրուհիս ըլլալէ: Իրաւունք ունին մարդիկ, երբ կ'ըսեն, թէ առաջին սիրուհիները երբեք չեն մոռցուիր:

Արտաքնասպէս ոչինչ կար փոխուած իմ եւ Սոնայի յարաբերութեան մէջ: Մենք կը շարունակէինք իրար սիրել առաջուան նրման: Գործնալ ժամադրութիւններ՝ հսկայ սօսիի հովանիին ներքեւ, պտոյտներ՝ պտբակներու մէջ եւ ամայի ձաճրաններու վրայ, համբոյրներ ու դրուանքներ՝ աստղերու զաղտնապահ նայուածքին տակ: Ասկայն, հիմա, ամէն անգամ, որ շրթունքներս կը միանային Սոնայի շրթունքներուն, օտարապէս զգայութիւն մը կը փոխանցուէր ինծի եւ ես յանկարծօրէն անդրադարձումը կ'ունենայի, որ թեւորուս մէջ դանուռ աղջիկը կապ չունի իմ ներքին էութեան հետ, ուր կ'իջէր միւսը՝ իրրեւ մեծատէր:

— Ի՞նչ ունիս, — կը հարցնէր Սոնա՝ քնազգական մտահոգութեամբ:

— Ոչինչ, բան մը չունիմ, — կ'ըսէի հանդարտ, բայց կը զգայի, թէ չէր հաւատար:

Սոնա իրապաշտ եւ կոտորատող աղջիկ էր: Իր մտահոգութիւնները շուտ կը փարատէին, քանի որ կը տեսնէր, թէ իրմէ պատուէլ ուրիշ կին չկար յափուած-ձեւուած կեանքիս մէջ եւ առաւրինէ մինչեւ իրիկուն ինք հնարաւորութիւն ունէր բոլոր քայլերուս վրայ հսկելու: Իսկ ենթադրելու համար, որ երազ մը կրնար իր վրտանալու մրցակիցը ըլլալ՝ անուշազն երազի թեւերուն վրայ ինք ալ յաճախ ճամբորդած պէտք է ըլլար: Մինչդեռ, Սոնա սիրած էր միշտ քայլել հաստատուն գետիներէ:

Սոնան առաջուան պէս զեղեցիկ եւ հմայիչ տեսնելու բոլոր ճիւղերս սկսան մի առ մի ի գրեւ ելլել: Ակամայ հաստատեցի, թէ մազերը չունէին երազներու մէջ փայլալուստ արեւմտան վարերու իրմտող փափկութեւնը, հասակը հեռու էր սլացիկ ըլլալէ, մար-

մինը ո՛չ միայն նուրբ չէր, այլև՝ իդական գիծերու բաւական փարթամ հարստութիւն մը կը ցուցադրէր:

Ախոսասնքով անդրադարձայ, որ իր ստացած միջնակարգ կրթութիւնը արտաքին փայլ մը միայն տուած էր իրեն, առանց հողիին ծախքերէն ներս թափանցելու: Գիտցած բանաստեղծութիւնները աւելի լրթունքի վրայ էին, քան սրտին մէջ, նկարչութեան մասին ունեցած ճաշակն ու գիտութիւնը զարդարուեալ սովորական բմբռնումներէն անդին չէին անցներ եւ ընթերցումներու ընթացքին բան մը սորվելու իր հակուժը աւելի մեծ էր, քան բանով մը յափրչտակուելու եւ յուզուելու պահանջը:

Յելացի էր, այո՛, նոյնիսկ քիչ մը շատ խելացի՝ իր սեռին եւ տարիքին համար: Կը դատէր ճիշդ եւ արագ: Այս էր պատճառը, հաւանորէն, որ իր կեանքին փեղկերը միշտ փակ էին մնացած երազի հոյերուն առջեւ եւ ամենարտոն յուզումի պահերուն անգամ չէր կորսնցնէր շփի ու կշիռի զպայարանքը:

Մէկ կիրք, հոպ չէ թէ քողարկուած, դրատծ էր Սոնայի ամբողջ էութիւնը — տան սէր: Մեծ հաճոյքով կրնար ժամեր շարունակ խօսիլ տան մը ներքին կահաւորումի մասին, գատորչել վարպետրի տեսակներ, ճշգեւ գոյնեքու ներդաշնաւորուժը հիւրանոցին մէջ, ոգևորուիլ մին: Եւ իսկ խոհանոցի մը սարքուածքով: Յաճախ կը սիրէր թղթատել ամերիկեան գունազարդ հրատարակութիւններ, որոնց էջերը յատկացուած կ'ըլլային ընդհանրապէս իրենց պարզութեան մէջ հմայիչ ննջարաններու կամ հիւրասրահներու ցուցադրութեան: Երկար ատեն զլուխը այդ էջերէն մէկուն վրայ հակած պահելէ ետք, կը դառնար ինծի ու կը բացազանչէր.

— Նայէ՛, Արամ, ի՞նչ գեղեցիկ է...

Աչքս պոչոյր հարկու ակնարկ մը կը նետէի ցոյց տուած շքեղ նկարին, որ ինծի մեծ բան մը չէր ըսէր, եւ կը պատասխանէի կատակով:

— Միրած սիրածի տային չոր գեանի զարին վրայ:

— Մի՛ ըսեր, — կը բողբոջէր ան, — աղուոր տուն մը ունենալն ալ ուրիշ բան է: Իմ երազս է ատիկա: Երջանկութիւնը գրաւիչ ըրջապատի մէջ կը սիրէ բնակել:

Տախակ եւ քաղքենի կը թուէին ինծի Սոնայի յայտնած այս մտածումները եւ լուրեայն անպամ մը եւս կ'ողբայի անոր թեւարեկ հողիին դեանամոծ խեղճութեան վրայ:

Ջղայնացուցիչ էր մասնաւորաբար իր անսակարկ գործին ու ոգևորութիւնը ծծկեր երեխաներուն հանդէպ: Դեռ ականջներուս մէջ կը հնչէ հաճոյքէն թրթուացող անոր ձայնը, երբ ծանօթ կամ անծանօթ երեխայի մը կը հանդիպէր.

— Ի՞նչ անուշիկ է, սիրե՛մ, ի՞նչ թոնթոնիկ բան է...

Ոչ մէկ կեղծիք եւ արուեստակածութիւն կար Սոնայի այս ղեղումին մէջ: Մեծագոյն ապրումն էր՝ ծոնօթ մօր մը դրկէն երեխան առնել վայրկեան մը, սեղմել կործքին, գոյել աչուկները եւ փաղաքական խօսքեր ուղղել անոր: Պատահած է նոյնիսկ, որ փողոցէն անցնող երեխայի փոքրիկ կառքը կեցնէր եւ մշիկ-մշիկ քնացող մանկիկը ցոյց տար ինծի.

— Նայէ՛, Արամ, ի՞նչ քեզուշիկ է...

— Մի՛ աճապարեր, — կը հեղնէի զինք, — վաղը կու գան եւ փեշերէդ կը կախուին...

Իմ խօսքերս յատկապէս կը վերաւորէին զինք, որովհետեւ երևալ կը կարէր քրթմնջելով.

— Ձեա հասկնար կոր զիս...

Ե՞ս էի արդեօք զինք չհասկցողը, թէ ինքն էր, որ բնաւ չէր հասկնար իմ հոգիս:

Իրողութիւնը այն է, որ սկսեալ էինք չհասկնալ իրար:



Սոնան անմեղ էր, իր մարմինն էր մեղաւոր:

Ես սէրը կը տեսայի իբրև ամբողջապէս ոգեղէն արբեցում, մինչդեռ զգայարանքներս զինուցած էին նիւթահոն հրապոյրաներով, որոնց գլխու պտոյտ պատճառով տիրակալութեան տակ իմ անձս օրէ օր կը պղտիկնար ու կ'ընկճուէր կարծես: Նման էի այն դիմեմուտին, որ խմելէ հրաժարելու հանդիսաւոր երգում կ'ընէ, կ'ուզէ ծաքրուիլ եւ սրբանալ, բայց երբ զինքին բաժակը իր առջեւ կը գտնէ՝ անդիմադրելի մղումով մը անձնատուր կ'ըլլայ կրկին հին փորձութեան: Սոնայի ներկայութեան իմ կրած անխուստփելի պարտութիւններս զիս կը լեցնէին դառնութեամբ եւ անբացատրելի զժողոճութիւններով: Արբեցութեան բաժակը դեռին զարնել փըշրելու խուլ բնազդներ կ'արթննային մէջս: Այն բաժակը, որուն կը վազէի տարող պապակով, բայց որմէ կը բազմայի խոյս տայ՝ յանուն աւելի բարձր եւ սրբալոյս տեսիլքներու: Ձկարծուի, թէ Սոնան հեշտաւէր աղջիկ մըն էր. ընդհատապէս, եթէ չըլլար իր բընածին պարկեշտութիւնը եւ եթէ իր մշտարթուն զգաստութեան շուքը չհետնէր մեր բոլոր քայլերուն, հաւանօքննեա՛ մեղքին նոգկանքով ատապաղ մաքրակրօն մեղանոցը՝ շատ աւելի ծանր եւ անդարմանելի փորձութեանց մէջ ինչայի շուտով: Գիտէի, թէ Սոնան կատարեալապէս երջանիկ էր նաև ուրիշներու ներկայութեան, հաւաքոյթի մը ընթացքին. կը բաւէր, որ ես հոն ըլլայի, ժպտէի իրեն կամ պարզապէս ձայնս լսէր, երբ կը խօսէի ուրիշներու հետ: Այդքանը կը բաւէր իրեն:

Իսկ ես առանձնութիւն կը փնտռէի տեւաբար, Սոնային հետ գլուխ-գլխի առանձնութիւնը, այն առանձնութիւնը, ուր լսկ կրնայ հոգիս թևեր ստանալ: Բայց ամէն անգամ, որ հոգիս փոխարէն զգայարանքներս կ'արթննային ցանկաւէր բոնկումներով, զայրոյթով կը լեցուէի թէ՛ իմ անձիս եւ թէ՛ Սոնայի անձին դէմ: Նուա՞տացման զգացում մը կը պաշարէր զիս եւ որքան ալ անմեղ ըլլար Սոնան, այս կացութեան պատասխանատուն կը նկատէի զինք: Ան, միւսը, երացիս լուսապեղ աղջիկը, նման վիճակներու չէր մասնէր զիս բնաւ: Անոր համբոյրները զով էին եւ թիթե՛ս՝ կրկինքի կապոյտ տին պէս: Անոր դառնանքներուն տակ զգայարանքներս կ'օրորուէին հեշտայի մրափով եւ հոգիս մինչեւ աստղերը կը բարձրանար:

Գէմքիս գժողոճ արտայայտութենէն եւ շորժումներուս օղային անկարգութենէն Սոնան կը հասկնար իսկոյն, որ ամպոտ էր ներքին աշխարհս: Ձէր կրնար բացատրել անբնական այս երեւոյթը եւ զարմացած՝ հարց կու տար ճիշդ մամայիս պէս.

— Ի՞նչ ունիս նորէն... տարօրինակ տղայ ես, դո՛ւն ալ շեւ գիտեր, թէ ինչ է ուզածդ:

Եւ երբ կը տեսնէր, թէ չէի պատասխաներ եւ ամպը կը խը-
տանար դէմքիս վրայ, մասնաւոր կը նետուէր բաղուկներու մէջ՝ իր
սղութիչ համբոյրներուն խառնելով նոյնքան սքտազին խօսքեր։

— Բարեկացե՞ր ես ինձմէ... ըսէ՛՜ ինչո՞ւ. ի՞նչ է յանցանքս...
Արա՛մ, լաւ չէ այսպէս լուս մնալը. սխալի մտես, թէ ինչո՞ւ բար-
կացեր ես նորէն...

Կրնայի՞ր ըսել բուն պատճառը։ Կրնայի՞ր յայտնել, թէ այո՛ւ,
յունցաւոր էր ինք եւ իր յանցանքը մարմին մը ունենալն էր, աաք,
յորդ եւ իրական հրապոյրներով զեզուն մարմին մը, որ իր շօշա-
փելի նի։ թակահոսթեամբ տեղ չէր ձգեր երազին...

Մտահոգ էի ես ալ։ Ո՛ւր պիտի յանդէր ի վերջոյ մեր այս
խնկոթ սէրը։ Վերջնական խզում մը չէի կրնար պատկերացնել։ Իմ
խոռովայոյզ հոգիս չէր հաշտուէր այդ դադարաբերին հետ։ Իսկ սըր-
զողանքներով, վէճերով եւ քողարկուած պայթարներով շարունակ-
ւող մեր սէրը կենդանի պահել՝ նոյնպէս անհնարին կը թուէր ըը-
լալ։

Երբեմն կ'ազօթէի, որ անսկնկալ զէպօ մը դար մեկ բաժնե-
լու առժամեայ կերպով։ Օրինակի համար, օտար երկիր մեկնէի
զօրծով քունի մը ամիս, հոգիս վերազանէր իր անդորրութիւնը,
Սոնային կարօտը ծաղէր իմ մէջ եւ լուսաւորէր ներաշխարհս ան-
նիւթական հրդեհով եւ ես նամակներ գրէի իրեն, սիրոյ ու կարօտի
նամակներ... Սակայն անոյց մտկատաղիբը մեկ չէր բաժներ իրար-
մէ մինչեւ իսկ մէկ օրուան համար...

Եղաւ ատեն մը, որ փորձեցի արուեստականօրէն ստեղծել
այդ ժամանակաւոր բաժանումը։ Խոյս տուի մեր ժամադրավայրե-
րէն, դադարեցուցի այցելութիւններս, տարականն ժամերու զէւզ
բարձրացայ, մէկ-քանի գիշեր ալ մնացի քաղաք՝ առանց որեւէ բա-
ցատրութիւն տալու։ Սոնան այլալլած երեւոյթ մը ունէր։ Գրասեն-
եակին մէջ շարունակ շուրջ կը դառնար՝ զիս առանձին գտնելու եւ
բացատրութիւն պահանջելու համար։ Ես կը խուսափէի այդ առիթը
իրեն ընծայելէ, սրով հաղիւ կրնար ուրիշներու ներկայութեան չը-
լանջել։

— Ո՛ւր էիք երէկ։

— Երէ՞կ... հա՛, բարեկամի մը հետ էի, — կ'ըլար պատաս-
խանս՝ չոր ու կարուկ։

Սոնան կը նայէր ինծի թերահաւատ եւ թախծոտ նայուած-
քով, բայց չէր բողոքեր, չէր բարկանար, չէր յանդիմաներ։ Յան-
ցաւոր եւ հլու ազնուակի մը պէս կ'երթար կը նստէր մեքենային առ-
ջեւ եւ լուս ու մունջ կ'աշխատէր ամբողջ օրը։ Երեւի կը սպասէր,
որ քէն ընող տղու իմ քմայքս այս անգամ ալ վերջ գտնէր սովորա-
կանին նման, բայց ես կը յամառէի պահուելու խաղալ՝ իր տա-
ռապանքին հանոյքը ըմբռնելով եւ իմ կամքիս դօրութեամբը
հպարտ։

Այսպէս անցան հինգ-վեց օրեր, մինչեւ որ իրիկուն մը Սոնան
զիս ձերբակալեց գիւղի ամայի կածաններէն մէկուն վրայ։

Կը քալէի թեթեւօտն, վերացած, վայրի խոտերու եւ շոճինե-
րու բոյրով արբշիւ։ Այն վստահութիւնը, որ քիչ մը անդին, ճամ-
բուս մախ կողմը, բլուրի փէշերուն ծուարած ասն մը մէջ աղջիկ մը
կար, այդ աղջիկը կը սիրէր զիս եւ կը տառապէր ինծի համար, տա-

բորինակ եւ տրամազին գոհունակութիւն մը կ'ընծայէր ինծի, մինչ հոգիս կը վազէր անկարելի ու մեծ սէրերու երազին ետեւէն: Արդ- եօք նոյն հանդարտ ու քաղցր երազը կ'օրօրէ՞ր զիս, եթէ գիտնայի, թէ Աոնայի սրտին մէջ տեղ չունէի այլեւս: Այդ ուղղութեամբ չէի մտածեր իսկ:

— Արամ, կեցի՞ր, բտելիք ունի՞մ, — լսուեցաւ ետեւէս Սո- նայի աղաչական ձայնը երկու անգամ:

Ձէի կրնար փտրուսալ տալ, կանգ առի՞ կիտովին դէպի իր կողմը դարձած: Սոնան կը հեւար երբ շոյս հասաւ. դէմքը ամբողջ էր՝ հակառակ գառիվերը ելլելու համար ի դործ դրած ճիգին: Ի- րիկնային կիտալոյսին մէջ աչքերը ասորոյնակ փայլով մը կը վա- աչէին: Նոր աղջիկ մըն էր կարծես տն, նոր յայտնութիւն մը, աւելի գրասիւն, տակն չողեղին էակ մը: Ձինք թեւեւ տակն ամենի մղում մը հասին կը յաջողէի գտնել: Եթէ մեր միջեւ տիրող լռութիւնը քիչ մը աւելի երկարէր, հաւանորէն սրտիս զարկերը մտանէին դիս եւ ես պարտուած դուրս գայի այս մեծամարտին: Բայց արցունքով թրջուած ձայնով մը, որ հետուններէն կու գար, Սոնան խզեց լռու- թիւնը.

— Արամ, լաւ է, որ անկեղծ ըլլանք իրարու հանդէպ, լաւ է, որ ճշմարտութիւնը չծածկենք... լաւ է, որ բացատրուինք...

— Բացատրուելիք ի՞նչ կայ որ, — բնորոշեցի ես, վերա- գառնալով պայքարի դիրքերուս վրայ:

— Ո՛չ, ո՛չ, ձեռակահունքիւնները մէկ կողմ. ես կը զգամ, ես գիտեմ. ատենէ մը ի վեր դուն Հինը չես, խոյս կու տաս ինձմէ, ներկայութիւնս կը յողնեցնէ քեզ: Ըսէ՛՞ ճիշդ եմ, թէ սխալ:

— Մէկը չի՞ կրնար, զուտ անձնական պատճառներով, քիչ մը առանձնութիւն փնտռել: Տրամադրութիւն է ստիկա, միշտ միեւ- նոյնը չ'ըլլար:

— Ո՛չ, ո՛չ, քու ընթացքը տրամադրութեան խնդիր չէ. ու- րիշ աւելի լուրջ պատճառ մը կայ եւ դուն կը պահես ինձմէ...

— Պարտապ խօսք:

— Պարտապ խօսք չէ, Արամ, ես երկար մտածեցի այս մա- սին... եթէ յոգնած ես ինձմէ, եթէ այլեւս չես սիրեր, եթէ... Ի՞նչ գիտնամ... ուրիշ մը կայ սրտիդ մէջ...

— Խեղճ ես...

— Ես պատրաստ եմ ամէն գոհողութեան. ես չեմ ուզեր բնա ըլլալ վրադ:

— Ի՞նչի՞ ըստնիր կ'ըսես:

— Ներք ինձի, Արամ, ես յանցաւոր եմ, գիտեմ. եւ իմ յան- ցանքս՝ քեզ շատ սիրելու է...

Մանկական համբուրելի ինքնախօսումով մը, որուն յաճախ ա- կանատես էի եղած, Սոնայի գլուխը ինկաւ կուրծքիս: Մատներս կը խաղային մաղբրուն հետ՝ վեհանձն ներողամտութեամբ մը...

Անգամ մը եւս նորոգուած էր հաշտութեան մեր սուրբ դա- չինքը:

Ծառերու ստուերին մէջ կեցած՝ իր ստորին դէմքով եւ թաց աչքերով Սոնան այնքա՛ն նման էր երազիս աղջկան:

Փ. Ճ Ե Ր Ա Ն Ե Ա Ն

Լ ՈՒՐ Պ Ա Հ Ե Ր

Երբ մթնշաղմ յամրաբար կ'իջնէ խաղաղ դաշտերուն,
 ու կածաններ ամայի աշնամառներ՝ կը դադան,
 Հի՛ն օրերէն շըշուկներ կարծես ստուե՛ր առ ստուե՛ր
 Լուռ կը տեղան տնակիս դարպասին մէջ ծաղկաւէտ...

Ես այն ոտնն կը խորհիմ, մակատս յակ՝ սեղանիս,
 Եա՛տ հիմ սիրոյ մը, որուն ժպիտը դեռ կը յածի
 Պատկերին մէջ, որ եղաւ շէնուքիւնը տնակիս,
 ու մերք տարաւ զիս քա՛մուն ճամբաներէն անուրջի...

Ուր ան ու ես թեւանցուկ կը քալէինք մեղմօրօր,
 Մինչեւ ցայգերզն հեռացող հիւսիսային աստղիկին,
 Հնգիս յանձնած ալեծուփ իր ծամերուն ծփաճիւն...

Արդ, տարիներ վերջ հիմա, տնակիս մէջ մենաւոր,
 կը մտածեմ, ի՞նչ մնաց այդ հին սէրին երբեմնի.
 — Պատկեր մը լո՛կ, որ ինձի էրոջ մը պէս կը ժպտի...:

Ե Ր Է ...

Եթէ լռէին աշխարհի բոլոր
 Զանգերն ուղեցո՛յց...
 ու մարդ չունենար հանդիպումի օր,
 Ո՛չ ալ ժամացո՛յց...
 Ես կ'ունկնդրէի գարկերը սրտիս,
 Քեզ հանդիպելու համար սիրելիս...:

Լ Ե Ռ Ն Ե Ր Ի Մ Յ Ո Ւ Թ Ե

Ճամբուս վրայ հեռագնաց, բարձր լեռներ մշուշէ...
Ո՞ր տեսիլքն էր լուսայտ՞րդ, որ դարձ դար կը դիպէ
Ձեր կատարներն արփագեղ, հեռուներո՞ն սեւեռուն,
Ու կը թողու ձեզ այդպէս ոյրտներուն մէջ խոկուն...:

Մի՞թէ աշխարհ մը հեքիաթ, հին դարերէն դեռ ապրող,
Ջոր սիրեցիք քրմական մե՞ծ սէրերու ապրումով՝
Ձեզ առինքնեց համասփիտ ճաճանչներովն երկնածիզ,
Ու պահին մէջ ակնապիշ դուր քարացած մնացիք...:

Այսպէս, մինակ ու թախծոտ ճամբուս վրայ հեռագնաց,
Կը խորիէի հեռաւոր հայ լեռներուն որբունակ,
Ու սրտիս մէջ կ'արիւնէր երկիր մ'ամբողջ աներակ,

Երբ ձիաւոր մ'ալեհէր ինձ մօտեցաւ յամբընթաց,
Ճակատն ափին՝ ծանրախոտ, կարծես կու լար գաղտնաբար
Ու հոգոյն մէջ անսահման քարանայու ըղձանք կար...:

Ծ Ո Ծ Ր Ա Կ Դ Ի Վ Ե Ր

Ծոծրակդ ի վեր ձիւնաթո՞յր ուր կարապներ կ'երապեն,
Պիտ՝ այս գիշեր չարչարեմ համբոյրներուս մեղեդին...
Ու շրթներուդ ընդմէջէն պիտի հոսին լայնօրէն,
Տագնապահար շըռուկներն անտառներու կատարին...:

Պիտի հանդարտ ըլլայ այդ՝ ինչպէս գիշերն, որ կ'իշնէ
Դարպասին մէջ, ուր ձիւնէ թիթեռնիկներ կ'երապեն...
Մինչ կուպերուդ տակ փառուղ բախիդին մէջ լուսեղէն,
Պիտի բանամ ես հոգոյդ բոլոր դո՞ներն անարգել:

Ու մերկացած օրերու խարխափումէն երբեմնի,
Պիտի քայլմ ընդերկար մինչեւ գիշերն արիւնի...
Մինչեւ հոգիս ա՛լ կըթի իր մեղքերուն ծանրոյթէն,
Ծոծրակդ ի վեր ձիւնաթո՞յր, ուր կարապներ կ'երապեն:

ԶԻՆՔԸ ԵՏ ԿԱՆՉԷՐ...

Թո՛ղ սիրտս ըլլար լճակ մը խաղա՛ղ,
 Դաշտերու անհո՛ւն ամայքին վրայ...
 Ու պահ մը յանկարծ, իրիկնաժամին,
 Հարսնուկներ հազա՛ր բոցով վառուէին...
 Ու բոցերուն մէջ հո՛ժ, աստեղասփի՛տ,
 Թո՛ղ սիրտս ալիք-ալիք փոթորկէ՛ր,
 Մինչ աստուածներու շքուն ականջին,
 Մո՛լթ-մո՛լթ աչքերով տերվիչ մ'ալեհեր,
 Ալեաց ընդմէջէն զինքը ե՛տ կանչէր...:

ՎԵՐՅՈՒԺ

Օ՛ր, անուրջներու ծաղկաւէ՛տ ճամբան...
 Գիտեմ թէ հետո՛ւն, տեղ մը լուկեայն,
 Եղծնիներու շուքին հեշտօրօ՛ր՝
 Կը յաճի տակաւ յիշատակն ազուր
 Հեքիա՛թ աղջկան...
 Որուն աչքերուն կապոյտն անյատակ,
 Գիշերներու մէջ տարփատ ու համբուն,
 Հոգիս օրօքնց ճիճրովն աստղերուն...
 Ու իր նայուածքին կախարդանքը լո՛ւրթ,
 Որ դեռ կը գզուէ սիրտս խո՛ւնկ առ խո՛ւնկ
 Ու կը կանչէ զիս իբր սիրոյն կտրծես...:

Փ. ՃԵՐԱՆԵԱՆ

Ա. Ա Ր Փ Ի Ն Է

ՄՕՏ ԷՐ ԳԱՐՈՒՆԸ

Կը գգար, թէ իր մէջ բան մը վերջ-
նակնօրէն փոխուած էր. էութիւնը
բանէ մը պարպուած, թէ այլեւս նախ-
կիծր չէր ու չէր կրնար բլլալ:

Սեւեռաբիր կը դիտէր ուրուակաւ-
ներու նման շարժող կմախացած ծառե-
րու շարքը, որոնք լուսնէն մազուող շա-
ղերուն մէջ կարծես կը ծաղկէին, կը
ծաղկէին... Ու անոնց հետ սկստու նոր
յոյս մը ծաղկիլ սրտին մէջ:

Քանի՞ օր առաջ էր... Դարերու
հեռաւորութիւն մը կարծես... Հաս
կանգնած՝ շօգիացած ապակիին վրայ
մտող բնագոյրար գրեց «Գուրգէն» ու
յանկարծ սքափած՝ ետեւ դարձաւ, ստու-
գելու համար, թէ առանձին էր սեմնակին
մէջ: Խօլ սրտին գրողմած սիրելի անունը
սրբեց իսկոյն ու դիտեց երկու օրէ ի վեր
զինք վիատեցնող սպիտակ տարածու-
թիւնը:

«Շուտով պիտի հայի ու գարունը,
գարունը, այնքա՞ն մօտ է գարունը»
երգեց սիրտը:

Յորդոզ հրճուամբը նետեց զինք ան-
կազմին վրայ ու դէմքը թաղեց բարձին
մէջ:

«Մէրեր կան, որ կը տժգունին, ու-
րեր կան, որ կը խամրին, կը մոխրանան,
սէրեր ալ կան, որ շիջելու մօտ՝ անթեղ-
ւած կայծերէ կը բռնկին դարձեալ», շը-
շընջաց: Բույէ մը ետք սակայն, կարծես
մզճաւանջէ մը հալածուած՝ ցատկեց ու
հայելիին մօտեցաւ:

Արտացոյցող պատկերին անտվոր
պայծառութիւնը թռիչք տուաւ հագիին:
Ուսերուն թափած մագերում վրայ ձկնի
ցոլեքը, շագանակագոյն խոշոր աչքերուն

մէջ ներքին հուրէն ինկած շողեր, բերա-
նը՝ կիսաբաց վարդի մը նման, գեղագիծ,
բոսոր շրթները համբոյրի պատրաստ:

— Սիրուն եմ, սիրուն եմ, սիրուն
եմ, — գոչեց կրանկին վրայ դառնալով,
— սիրուն եմ ու տակուին երիտասարդ...

Լուս գիտէր, թէ լոյսին հետ դաշինք
կնկած այդ հայելին ամէն ինչ փայլուն
ցոյց կու տար: Տարիներուն դրոշմած
շարք մը գիծերը կը սեղէր ու զինք կը
խաբէր: Բայց լուս էր, հանելի էր այդ-
պէս: Շպարը հրաշքներ կը գործէր:

Յուրացող պատկերը քանաց մտքով
տանկիլ ետ. տարիներ՝ ետ: Այնպէս՝ ինչ-
պէս Գուրգէնը պիտի յիշէր:

Գորոզը քացաւ ու երգչախումբի
խմբակարը հանեց դուրս: Թարմութիւն
ու առողջութիւն նառագայթող դէմք մը:
Իր էով՝ Հերամը, երագուն խոշոր աչ-
քերով: Ետեւի շարքերուն մէջ Գուրգէ-
նը՝ թուխ, առատ մագերով, կրակոտ
նայուածքով:

Հիմա...

Հաւանաբար այդ առատ գանգուրնե-
րը կիսով ճերմկած էին... Թերեւս նախ-
կիծէն բոլորովին տարբեր երեսոյթ էր
ստացած. ճաղատած, գիրցած, քայց
փայթը չէր: Սիրած էր գայն ու պիտի
սիրէր դարձեալ: Այն ատեն չէր յաջու-
ղած, քայց պարագան տարբեր էր հիմա:

Սիրուն շրջագցեստ մը անցուց վրամ
ու կրկին դիտեց ինքզինքը հայելիին մէջ:

Մագերը այդպէս ուսերուն, նուրբ
ու ճկուն իրանը համաչափ գիծերով,
հանելի կորութիւններով՝ թարմատի
պարմանուհիի մը պտորանքը կը ստեղ-
ծէր:

— Ի՞նչ կ'ընես, հագո՞ւստ կը փորձես: Սա փեշիդ կարճութեանը նայէ, կը հաւնի՞ս կոր... Ամէն բան չափ մը ունի: Մագերդ ըսես՝ մինչեւ ե՞րբ տասնընտրու տարու ազգկայ պէս ատանկ ուտերուդ պիտի ձգես: Մտածէ մէյ մը քի՛ եթէ արկածը պատահած չըլլար՝ քսան տարու գուակ ունեցած պիտի ըլլայիր եիմա...

Արագ հաշիւ մը բրաւ մտովի աւ ինք իսկ զարմացաւ: Նման բաներու մտօնն երբեք չէր խորհեր: Միշտ ցանցած էր աւ կը ցանար մտէն վանել ամէն անհաճոյ դէպք: Լաւ որ արկածը պատահեր աւ զինք հագարուէլէ հոգէ ազատեր էր: Մայրութիւնը իրեն համար չէր: Մահաւանդ այդ տարիքին աւ առանց հոր ինչպէ՞ս պիտի մեծցընէր...

— Մա՞, հագար անգամ ըսած եմ, որ նոյութիւնը աս է, մտտան աս է, ինչա՞նչ չես հասկնար... Կ'ուզես, որ քեզի՞ պէս հագուիմ, մագերս քեզի պէս ատանկ վե՞ր սորտեմ... Ամէն ատեն տարիքս կը յիշեցնես... Ես քսանէն օր մը աւելի չեմ գզար. ասիկա՞ է կարեւորը:

Լաւ գիտեր, թէ իր այդ խօսքերուն պատասխանը ինչ պիտի ըլլար: Այլեւս քոջ սարկած էր: Հերանը օրինակ պիտի բերուէր: Հերանի պարկեշտութիւնը, յրօսութիւնը, թիպարութիւնը, խելացութիւնը, ծնողքին հանդէպ ցոյց տուած գուրգուրանքը, հոգածութիւնը: Ո՞ր մէկը թուէր... Այլեւս ձանձրացեր էր:

Երկու քոջ գաւակներ էին, բայց բարոյովին հակառակեայ խառնուածքներ: Հերանը խեղը տեսնէր այդ բոլորին: Կարծես կեանքը կապած էր իր նախանձնի պաշտօնին, գրադարանի ծրարած գիրքերուն, ձայնապնակներուն աւ հասարակական աշխատանքներուն: Ինք կ'ուզէր մնալ այնպէս՝ ինչպէս որ էր: Ինք կրակ ունէր իր մէջ: Ապրիլ՝ կեանքը վայել կ'ուզէր: Բայց բախտ չունէր:

Ո՞ր էր կարգացեր. սպանական առած մըն էր. «Ջակիլո բախտ տայէ ետէ՛ կրնաս նոյնիսկ ծովը նետել գայն»։ Այո, բախտ չունէր. այլապէս, չէ՛քէն առաջ Գուրգէնին պիտի հանդիպէր աւ կեանքը

փայլուն ուղիէ մը պիտի ընթանար:

Գուրգէն երկրորդ տարին՝ օտար ուշիւ տղաւ մը կողմէ տառապիլը ինքնապարտութիւնը շոյեց աւ պարսնէներովը գայն երմայեց...

«Ո՛չ հարսանիք կ'ընեմ, ոչ ալ այլեւս երեսը տեսնել կ'ուզեմ», գոռացեր էր հայրը: Իր քարսիրտ, բռնակալ հայրը:

— Ամէն բան չափ մը ունի, — կըրկունց մայրը, — խիպ, ամօք ըսուածը վերցեր է աշխարհէն: Միե՛կ փեշերը հագուեցան, պորտերնին, կարծէրնին քացին. վաղը մերկ պտղտիննն՝ ներսութիւնը աս է ըսելով դո՞ւն ալ պիտի ընես... Ծանրագլուխ մարդը կարեւորութիւն չի տար մտաւ ըսուածին: Հերանը...

— Ես ծանրգլուխ չեմ նէ՛ դուն ալ հին գլուխ ես, — իսկոյն կտրեց մօրը խօսքը կրճատ շեշտով:

Ձէր ուզեր, չէր հանդարժեր այլեւս կրկին Հերանին գովէր լսել, բայց խկոյն զգաց:

Յանձն առաւ յանկարծ կը բարբառէր, ձայնը կը բարձրացնէր: Կը ցուցնէր, կը վիրտարէր մայրը, բայց կը զգար: Իր սրտին մէջ բացառիկ անկիւն մը գրաւած էր ան աւ Յշմարտօրէն կը սիրէր գայն: Երբեք նման գզացում չէր ունեցած անկայն հօրը հանդէպ, մա՛նաւանդ՝ չափախա ըլլալէ ետք: Ո՛չ, երբեք: Կը գարմանար, որ մայրը այդքան սայրի կրցած էր հանդարժել անոր արեւելիցի քմայքները, ցատկոտ բնաւորութիւնը, բարկութեան նպանները: Այդ գարմանքը գզգաբնացաւ, անբացատրելի դարձաւ, երբ հօրը մտեկն ետք մօրը աշխարհուն արցունքը ցամփի չցիտցաւ: Ամիսներ ամբողջ անմխիթար լացաւ աւ սգաց, մինչ իր աչքերը մնացին չոր:

Չէ՛քին հետ ամուսնութիւնը յիշողութեան սրբել չէր յաջողեր: Առաջին սէրն էր եղած: Սէ՛ր թէ յափշտակութիւն, չէր գիտեր: Գուրգէնին հանդէպ գզացածը տարբեր էր եղած: Հիացուէն ծնունդ առած խորունկ գզացում. քաղցր տառապանքի մէջ նետալ անփոխարինելի ապումներ:

Առաջին ամիսը ձէճին հետ ապրեր էր գինովութեան մէջ: Երգային արքեպիսկոպոստի վերջապէս պիտի սքաւիէր ու իր առջեւ դժոխքը գտներ:

Մօրը գաղտնօրէն նուիրած գումարը ու ձէճի արձակուրդի ամիսներուն խնայողութիւնը սպառելիէ անմիջապէս հտֆ՝ նիւթակահի անձկութիւնը բազմագլխածի հիւանդի մը Ոման ցցուեր էր իրենց դէմ: Անխաւաքի Վեները թունաւոր իծերու պէս սողոսկեր էին ներս: Սկսել էր աշխատիլ ու զգացեր, թէ աշխատիլը իրեն համար չէր: Ամբողջ օրը գրամբնակարանի առջեւ կանակը կը ջարդուէր ու երբ պահ մը հանգչելու համար աղջիկներէ մէկուն քանի մը խօսք ուղղէր՝ վերակացուին խոժոռ ճայուածքը գինի կ'ըմբոստացնէր, ետքին կը փոքորկէր:

Վեները օրէ օր սկսեւր էին սաստկանալ:

— Ինչո՞ւ գործդ ձգեցիր, լաւ գիտես, որ ես ուսումս պէտք է շարունակեմ...

— Բայց չե՞մ կրնար, այլեւս չե՞մ կրնար, չե՞ս հասկնար... Առաւօտները դուրս կու տամ, գլխու պտոյտ կ'ունենամ, ուտել չեմ կրնար...

— Հայրս հարուստ է բերք ու գիւղարեցի...

— Քեզ չխարնցի ես, դժն գիւղարեցիք, թակարդ լարեցիք, հիմա կը տեսնեմ, որ հայրս ինչքա՞ն իմաստուն ու հետաւսեւ է եղեր, որ այդքան ընդդիմացաւ մեր ամուսնութեան:

— Գնա՛, հասկցուր վիճակը իրենց. ես պարտքի տակ մտնել չեմ ուզեր, քաղ հայրդ հոգայ ծախսերը, մինչեւ դպրոցը աւարտեմ:

— Կը մեռնիմ եւ ատիկա չեմ ըներ, կը հասկնա՞ս, չեմ ըներ: Ան իմ երես տեսնել չ'ուզեր այլեւս:

Ու ձէճ օր մըն ալ տուն չէր վերադարձեր...

Անցնող երկար տարիներու ընթացքին այդ բոլոր պէտք է զննուած ըլլային յիշողութեանէն, բայց հակառակ ջանքերուն՝ յամառօրէն կտաշած կը մնային՝ անջնջելի սեւ արատի մը նման: Թերեւս

բարեբաւ դեր մը եւս կ'ունենային...

Օտար բարեկամահիներուն հետ շահախաղի խմբական պտոյտներու ընթացքին՝ կը հանդիպէր համակրելի այրերու, որոնք կը փնտռէին իր ընկերակցութիւնը: Կ'ախորժէր անոնց ուշադրութեանէն, զգուսնեմներէն, բայց տկարանալու պահներուն անխաւաքի օրէն ձէճի շարացած աչքերը կը տեսներ ու կը զգատանար:

Յագորդ ամուսինը Ամբաստիմ պէս կրկին հայ մը պիտի ըլլար, բայց այս անգամ՝ իր սիրածը, իր փնտռածը...

Մայրը խռահուցը նստած էր գաւաթ մը սուրճի առջեւ: Խոհուն ու տրտամ աչքերը շուղեց իրեն, երբ մտաւ ներս:

— Անուշիկ մամա, բարկացա՞ր ինձի, — բաւ մտնեալով ու թեւերը բարեց մօրը վզին շուրջ: Ներքին խնդրէն էր մղում տուողը:

— Ինչ որ կ'ըսեմ՝ էն բարիքիդ, էս լաւաբեանդ համար է կ'ըսեմ: Երկու անգամ կարգուեցար, Մերսաը գէշ տրոպայ չէր. ինչո՞ւ չկրցար պահել... Այն ո՞վ պիտի ամուսնանայ քեզի հետ...

Միտն յեցուց բարամուսուտ սուրճը գաւաթին ու նստաւ մօրը դիմաց: Գիտէր, թէ այդտեղ կանց պիտի չտուէր մօր կիսասատը: Գլուխը կծիկի մը նման թելը պիտի բախուէր ու բախուէր եւ ինչ կրկին պիտի բորբոքէր: ձէճին հետ ամուսնութիւնը իր տարիքին, իր անփորձութեան հետեւանէն էր եղած, իսկ Ամբաստիմը... Ոչ ոք, ոչ ոք գիտէր: Իր գաղտնիքն էր ատիկա:

— Այսօր ուզեմ՝ այսօր կ'ամուսնանամ նորէն, — պռթկաց իսկոյն, — քանի՞-քանի՞ հագի կայ ինձմով ետաքրքրուող, գիւղարպետող, բայց միտքս դրած եմ նորէն հայու հետ եւ իմ սիրածիս հետ ամուսնանայ միայն... Մերսաը չուզեց հոս մնալ. չէի կրնար իր պահանջներուն գոհացում ստալ: Իր շահածովը ո՛չ իմ ազածիս պէս տեղ մը կրնայինք բնակիլ, ոչ ալ իմ ազած ձեռովս գաւակ մեծ գընել: Յարկարածին մըն էր գտեր՝ գացի նայեցայ, ապրելիք տեղ չէր:

— ձէճին հետ մէկ սենեակի մէջ ապ...

րեցար հասցա, — մայրը վրայ տուա
հանձնարումը մը:

— Ճիշդ այդ փորձառութիւնն էր,
որ զիս ետ կեցուց: Գոնիքը տեսնելէ
ետք՝ երկրորդ դժոխքի մը մէջ չէի կըր-
նար նետուիլ. ուրիշներու նման ալ չէի
կրնար աշխատիլ:

Այդ կենսակցութեան շրջանը եղեր էր
ամբողջ. չըսելու համար տառապագին:
Փնտրեի էր Գուրգէնի անհատականու-
թիւնը, աչքերուն կըմպը, ժպիտին կա-
խարդանքը: «Երբայ բարով» ըսեր էր,
երբ բառն վե՛նէ մը ետք Սմբատ տեղի
չէր տուած ու հեռացած էր: Հանգիստ
կեանք մը պիտի չգտէր Սմբատին հա-
մար:

— Տղան ուզեր է անձնական գործի
ձեռնարկել՝ ուզածներդ կարենալ տալու
համար...

— Ի՞նչ ապահովութիւն ունէի, որ
պիտի յաջողէր... Դիւրի՞ն է այս երկրին
մէջ անձնական գործը. դրամագլուխ
չունէր, հորմէս կը սպասէր...

— Ինչո՞ւ չըսիք հորդ...

— Քոյդ ի՞նքը ըսէր...

— Կեղծ հայրդ սրտի ցաւի տէր ե-
ղաւ. ամէնուն առջեւ մեզ նուաստացու-
ցիր, աւելցուցիր, սիրտերնիս ցուցուցիր:
Լուսանոցին ուրախացաւ, երբքը Սմբա-
տին հետ ամուսնացար. հայ տղայ էր,
մեզի պէտ անդի՛ն կողմէն եկած, հայ
մեծցած: Մարդու հետ վարուիլ, յարմա-
րիլ չես գիտեր, շուտ մը կը բորբոքիս:

— Հորմէս ժառանգեր եմ, — ըսաւ,
մօրը խօսքերուն հաստու պատասխան մը
տուած ըլլալու գոհանակութեամբ:

— Հայրդ խելացի մարդ էր, իմաս-
տուն մարդ. երբ բարկանար՝ միշտ ալ
իրաւունքին մէջ կ'ըլլար: Գիշեր-ցերեկ
կը մտնում. ես մեռնիմ նէ՛՝ առ աղջիկը
ի՞նչ պիտի ընէ, ի՞նչ պիտի ըլլայ կ'ըսեմ:
Հօրդ կտակը գիտես, հարստութիւնը ազ-
գին կ'երթայ, կը մնայ տունը, ան ալ
կը ծախես՝ ու առ դրամը կը մսխես, քա-
նի մը տարիէն հաշիւը կը մաքրես:

Նման պարագաներու, մեծ ու պզտիկ
վէճերէ ետք, միշտ ալ գլխարկն ու վե-
րարկուն առած՝ դուրս էր նետուած:

Բայց այսօր, խաղաղ կը մնար հոգին:
Կը գզար Գուրգէնի մօտութիւնը ու էտ-
թիւնը կը խայտար բերկրանէով, յայտն
նոր ճառագայթներով: Մօրը խօսքերը
հազիւ իրեն հասած՝ օդին մէջ արձակ-
ւած պղպջակներու նման կ'ընչանային
կարծես:

— Պարապ բաներու մասին կը խօ-
սիմք, իրար կը ցուցնեմք... Դուն շա՛տ
երկար պիտի ապրիս ու պիտի տեսնես,
թէ ես քեզ ինչպէ՛ս պիտի երջանկացնեմ
տակտիմ...

Շոյնց ստփերուն ճաւաղ տան կա-
տուն, գուաք մը սուրճ հիւ լեցուց, ու՝

— Երէկ գիշեր պակներ էիր, երբ ե-
կայ: Հիլէնեց տունը գիտե՛ս ինչ իմա-
ցայ... Գուրգէնին կի՛նը մեռեր է առջի
ամառ... Ինք ալ, այս օրերս, քանի մը
շարքուան համար հոս կու գայ եղեր:

— Վա՛րս, վա՛րս, — գռչեց մայրը
անկեղծ վրդովումով, — անանկ մը ըսիր,
կարծես ուրախ լուր մը կու տայիր:

Բացառիկ, բացառիկ արժանիքներով
տղայ մըն էր Գուրգէնը: Վայելուչ ար-
տաքին, քաւ ու բովիչ ձայն, քեզ պար-
տութեան մատնող լրջութիւն մը, որով
ուելի հիւ կը գրաւէր սիրտերը: Աչքերը
հուր ունէին, խօսքերը՝ կշիւ:

Արկածէն ետք, երբ այլեւս կազդու-
ւած էր՝ Հերան գինճը տարեր էր երգչա-
խումբի փորձերուն: Առաջին օրէն իսկ
խեղճի նման սիրահարուեր էր Գուրգէ-
նին: Գուրգէնն էր այլեւս մտածումին ու
երազներուն առանցքը: Զայն գրաւելու
նոր ձեւեր կը փնտրէր ու օրերը կը համ-
րէր: Փորձի օրերը:

Իր շնորհալի արտաքինին վստահ՝ կը
մօտեմար անոր համարձակօրէն ու պըշ-
բանէներովը գայն հմայել կը փորձէր:
Շարաքները, ամիսները կ'անցնէին ու
Գուրգէն գարմամալիօրէն կը մնար ան-
տարբեր:

Անտիկ բերդ մը: Սառնասիրտ ա-
բարած մը: Մինչ իր սէրը կը խորանար
ու կը խորանար, երբեմն արցունքի կայ-
լակներ ցայտեցնելով աչքերէն:

Սկսաւ փնտրել պատճառը ու գտաւ
վերջապէս: Ճէ՛քը... Այա՛, ճէ՛քը: Անու-

նացած ու բաժնուած ըլլալը: Իր անցեալի դժբախտութիւնը, որ կ'անդրադառնար ներկային վրայ անկարծելի չարիքի մը նման:

Խայթաւածի զգայնութիւնը կ'ունենար ամէն անգամ, որ Գուրգէն մտեմնար աղջկան մը, մա՛նուանդ Հերանին: Ի՞նչ կը տեսնէր Հերանին մէջ... հար ու խոտուն նայուածք մը, ո՛չ հագամէ, ոչ քացառիկ գերմութիւն: Կոյր չէր, պէտք է զգացած ըլլար իր սէրը, պատրաստակամութիւնը ու Հերանի անտարբերութիւնը: Կրկին ու կրկին կը նուազէր անոր ձայնագրուած մեներգները. խոր քաշիւն մը, աչքոյ կարօտ մը կար այդ ձայնին մէջ! Գերող, մագնիսացնող. բեզ իրեն կանչող կախարդանք մը: Փորձեց զայն գրաւելու ուրիշ ձեւ մը: Սկսաւ աւելի ուշադրութիւն դարձնել զինքը դարպասող Սմբատին, բայց անօգուտ: Ու օր մըն ալ Գուրգէն հեռացաւ Նիւ Եարքին: Լացաւ ու զինք կրծող վիշտը քմեքեքեղանքով, մոռնալու համար Սմբատի քեռերուն յանձնուեցաւ, երբ միտքն ու հագին Գուրգէնի հետ էր տակաւին:

Ու հիմա, տարիներ ետք, քէ՛ ինք, քէ՛ ան կը գտնուէին նոյն դիրքին մէջ. երկուքն ալ ամուսնացած ու երկուքն ալ ազատ դարձեալ... Հին օրերու քաղցրութիւնը յիշեցնող նոր հանդիպումներ, անքեղուած կայծեր կրնային բացալանել սիրտերը:

— «Գուրգէնը չգտնուած տղայ է», կ'ըսէր լուսանագի Քոյրս. սիրտին ցաւ էր եղած, որ ռոտք եկած ուրիշ աղուոր բայտներու հետ՝ Հերանը անոր ալ չէր մտնեցած, — ըսաւ մայրը:

— Հերանը ամուսնանալ չ'ուզեր, — վրայ տուաւ ինք հապենքով:

— «Գիտեմ, մեզի համար է չ'ուզեր ամուսնանալ», կ'ըսէր ոգորմած հագի Քոյրս: Հիմա ի՞նչ եղաւ... չոր գլուխ մնաց:

— Մա՛, խենթ բաներ կ'ըսես, Հերանը հայ ու օտար երացողներ շատ ունի, եթէ ուզէ՝ եիմա կ'ամուսնանայ, բայց չ'ուզեր: Իր կեանքէն գահ ու իր աշխատանքներով շատ երջանիկ է:

Փռք տարիքէն Հերան միշտ նախանձ էր շարժած: Դպրոցին մէջ ունեցած յաջողութիւնները, այժմու նախանձի պաշտօնը, որով միշտ շինձան մէջ էր, ըլլա՛յ մտաւորականներու, ըլլա՛յ բարձրաստիճան մարդոց հետ: Ինչ որ իրեն անբացատրելի կը մնար, երբ միասին տեղ մը գտնուէին՝ ամ էր, որ խելոյն ուշադրութիւն կը գրաւէր, հակառակ ամենավարդ արդուգարդին: Առանց որեւէ նիգի՝ իր խօսակցը կը սպաւորէր, յարգանք ու հիացում կը պարտադրէր: Կախարդական ի՞նչ ունէր այդ աղջիկը՝ չէր հասկնար: Ի՞նք կեանքով լեցուն ու խօտուն, մինչ ան՝ կեանքէն ու շրջապատէն հեռու կարծես:

— Այսօր կ'ուզեմ Հերանին հանդիպիլ, — ըսաւ, ոտքի ելլելով, — քերես կ'ուզէ ինձի հետ քաղաք իջնել: Վաճառատուները մասնաւոր գեղջեր ունին օրուան տօնին առթիւ:



Օղբ հանելի էր: Չոր ցուրտ մը: Շնչեց խորունկ: Վերաբերուին օճիքը դարձուց յետ ու դէմքը կիսով քաղեց մուշտակին մէջ: Ոտքերուն տակ ձիւնը կը խորտար: Ամէն քայլափոխի այդ խըշքիտուէր կարծես երգի կը վերածուէր: Հերան երբ դուռը բացաւ՝ մարտնչաւ, տեսնելով զարմուտիին հառազայթող դէմքը: Հաւամբար սիրային նոր կապ մը, նոր խենթութիւն մը, մտածեց ամենց ակնարկութիւն մը ընելու:

Հերանի անձին նման անսովոր զգրաւորութիւն մը ունէր նաեւ իր փոքր յարկաբաժինը: Ջուրթ, պայծառ գոյններու համադրութիւն մը: Ակնարկը խելոյն ինկաւ գրասեղանին վրայ դրուած թուղթին ու գրչին:

— Կամա՛կ կը գրէիր...

— Ո՛չ, ո՛չ, — խնդաց Հերան, թուղթը գիրքի մը մէջ դնելով, — ձափուտուէնք միայն... Այսօր գարմանալի, անբացատրելի ապրումներ ունեցա՛յ. մտեցըսած, քաղուած զգացումներու յանձնախմբ: Ձեմ կրնար պատճառը բացատ-

րնի... Տարօրինակ հագեցվիմակ վր...
Երբեմն կը կարծես, որ պիտի կարենամ
գրել, բայց երբ գրիչը ձեռք առնեմ՝ խու-
ժառ քառերը, գաղափարները, միտքերը
ուղղակի կը ցնդին, կը շագիտանան ու ծի-
ծաղելի բան դուրս կու գայ միայն: Գը-
րելու շնորհիք բացարձակապես չունիմ:

«Ունեցած շնորհներովն ալ չի գո-
հանար, առանց շպարի, սա պարզ պարե-
զօտին մէջ ինձմէ՛ սիրուն կ'երեւայ»,
խորհեցաւ:

— Կ'ուզե՞ս ինձի հետ խաղալ իջնել,
կարեւոր սէյլեր կան այսօր. գնումներ
կ'ընենք:

— Զեմ կրնար... Կրթական Յանձ-
նախումբի ժողով ունիմ. ժամէ մը հոն
պէտք է ըլլամ: Օրուան քերթը սեղանին
վրայ է. նստէ մինչեւ հազարիմ, յետոյ
միասին դուրս կ'ելլենք:

Զգաց, որ կ'անցապարէ, չուզեց տա-
լիք ուրախ լուրը անմիջապէս յայտնել:
Երբ սենեակին մէջ առանձին մնաց՝
հետաքրքրութիւնը մզեց զինք անպար-
կեշտ արարքի: Մտեցաւ գրասեղանին
ու վերցուց քուրքը գիրքին մէջէն:

«Ինչո՞ւ» խորագրուած կարճ ռուս-
ճաւոր մըն էր: Նստաւ ու կարդաց: Իրա-
պէս ձափառուէ, խորհեցաւ ու կրկին
կարդաց: Դեպի խաղաք գնացքին մէջ
սակայն, անոր քառերը սկսան արձա-
գանգել, մտքին պատերը հարուածել՝
փնտռութի մը անգոր զանգով:

*Ինչո՞ւ ես կամային խեղդեցի կեանքի
դիզեցկապոյն, հզօրագոյն զգացումը.
Ինչո՞ւ, ինչպէ՞ս անտեսեցի բնութեան
ամենաթանկազին պարզեւը.
Ինչո՞ւ զխոսկեցօրէն, ախարաբէն հա
ժողցի
դէպ՛ ինձ ձգտող սերտերը.
Աձէն յիշեցում աչքերէս արցունքի
կայսակներ պիտի խլէ
Ու հողիէս մէջ վերք մը սպիտակ
պիտի չուզէ:
Ինչո՞ւ, ինչո՞ւ անտեսեցի, խեղդեցի,
խորտակեցի ամէն ինչ, որ սիրելի էր
ինձ համար»:*

Ջրո՞ւմ... Յանեցած աղաշա՞ւ...
Այդ ազդիկը երբեք սիրտը չէր բացած ի-
րեն:

Հինգերորդ սրբապատանի վրայ ճիւղի
ու մէկ հետք: Արեւը կը փայլէր, շէնքե-
րը կը պսպրային կարծես: Վաճառատա-
ներու ցուցափեղկերէն յորդող պերճանք
զինք կը հմայէր: Կը մտնէր, գնումներ
կ'ընէր: Մօրը ամսական յատկացումը
գրեթէ ծախսեր էր:

Երջանկօրէն կը խաղէր՝ հոգիին մէջ
ծաղկած երազը փայփայելով: Աւէն
վայրկեան Գուրգէնին քիչ մը անելի մօտ
գգայով: Զայն կրկին տեսնելու գաղա-
փարէն արթննալով:

Յանկարծ քարացաւ: Քայներուն հետ
կարծես սիրտը եւս կանգ առաւ: Երեւ-
կայութիւնը խաղե՞ր կը սարքէր...

Անքորք աչքերով կը դիտէր: Մխ-
լած չէր. ան էր, *պատի* կանգառին: Նոյն
վայրկեակով Գուրգէնը. քիչ մը անելի
պատկառագողա՛ մագերան մէջ ինկած
արծաթով:

Քայլ առ ճայլ սկսաւ յառաջանալ,
չանալով հանդարտեցնել սիրտը, որ
կարծես դուրս թռչիլ կ'ուզէր:

— Գուրգէն...
— Ա՛հ, Սիրան, Սիրա՞ն, ամառա-
տայի հանդիպում... Ինչպէ՞ս ճանչցար
զիս... Երբեք չես փոխուած դուն:

— Գուն եւս չես փոխուած, — յա-
րեց իսկոյն, — ե՛րբ եկար...

— Երեկ գիշեր ուշ ատեն հասայ:

— Լսել էի, որ պիտի գաս... Լսեցի
նաեւ պատահած դժբախտութիւնը, —
աւելցուց, թէ՛ յետին նպատակով եւ թէ՛
Գուրգէնին խնայելու միտումով:

Գուրգէնի տաք նայուածքին մէջ
փաթարկուտ ծովերու մտայլը ինկաւ,
բայց իսկոյն կրկին պայծառացաւ:
— Տղայ մը ունիմ, գուլե՛ր ուսանող
շատ ուշիւ տղայ մը եւ գիտե՞ս... Մտա-
տի աղջկան հետ գրեթէ նշամուտ է...
Չախորժեցաւ անշուշտ Մտատի ամ-
ւան յիշատակութենէն, բայց զուարթ
շեշտով մը՝

— Ի՞նչ լաւ, — գոչեց եւ իսկոյն, —

կը շնորհաւորեմ, մեծ յաջողութիւններ ունեցեր ես...

— Ատիկա՞ եւս յսեցիր, — ժպտեցաւ Գուրգէն, — մեծ բաներ չեն... Պարգաւալէս բախտաւոր եղայ... Միշտ նոր տեղերու վրայ կ'աշխատիմ:

— Ո՞ր կը մնաս հիմա, ե՞րբ պիտի կարենաւ աշխույժ մեզի. այսօ՞ր, վա՞ղը... Մայրս որքա՞ն պիտի ուրախանայ:

— Անյետաձգելի գրադուներ ունիմ, ինչպէս նաեւ դասախօսութեանց շարք մը: Առաւելապէս անձնակազմ ծրագրի մըն էր, որ մղեց զիս դրական պատասխանի. եթէ յաջողիմ՝ շատ առիթներ պիտի ունենանք միասին ըլլալու...

Ակնարկը երկար պահ մը յառած մընաց հեռացող հանրակառէին, որ հասեր էր, երբ ինք կը պատրաստուէր անուշ խօսքեր ընելու, հուր առած էութենէն կայծեր արձակելու:

«Անձնական ծրագրի» մասին արտայայտուել էր տեսակ մը խորհրդաւորութեամբ ու յուզեց մը աչքերը վառեր էին հին օրերու կրակով: «Եթէ յաջողիմ՝ շատ առիթներ պիտի ունենանք միասին ըլլալու...»: Այդ բաները անվերջ կրկնելով սկսան մարմին տալ ծաղկած յոյսին:

Գուրգէնը, միայն Գուրգէնը ճշմարտօրէն սիրած էր ու նոյն սաստկութեամբ պիտի սիրէր: Անմիջապէս որ միասին ըլլային՝ լաւագոյնը պիտի ընէր զայն գրաւելու համար: Ի հարկին... նոյնիսկ եսելէն պիտի երթար:

Երբ տուն հասաւ՝ մեծ ոգեւորութեամբ մօրը պատմեց հանդիպումին մասին: Անհանդարտ էր: Հեռաձայնեց նաեւ Հեքանին, բայց պատասխան չտուցաւ: Յաջորդող երկու երեկոները կրկին փորձեց ու՝ «այս ազգական ժողովները վերջ չունին», ըսաւ:



Երկար պտոյտէ մը բարձր տրամագրութեամբ տուն վերադարձաւ: Դրան ետեւ մայրը գլխարկը կը դնէր՝ բարեկամաւոր մը այցելելու համար: Հայե-

լիին մէջ տեսաւ անոր շէնշող դէմքը, երբ խօսիլ սկսաւ:

— Քիչ առաջ Հերանը հեռաձայնեց... «Մօրաճո՞ր, ականջներուդ պիտի չհաւատաս», ըսաւ. ձայնէն հասկցայ, որ ուրախ յուր մը ունէր տալիք: Նշանուել է Գուրգէնին հետ...

Շանթահարուեցաւ: Ձեղումը կարծես մեծ շառաչով ինկաւ գլխուն, պատերը կ'էնցան վրան, շուրջը ամէն ինչ սեւցաւ: Պիտի ուզէր ճշտել, բայց կռկորդը ափսոսանք էր:

Կռքմած էր սեղանին ու եզունգները անոր մէջ կը խրէր: Օրերէ ի վեր երազներուն կերտած շքեղ կառայցն էր, որ ակնթարթի մը մէջ կը փլէր, կը թափուէր՝ փլատակներուն տակ խորտակելով իր հոգին, իր երջանկութիւնը:

Լսեց դրան գոցուիլը: Գինովի մը ֆայլերով սիրուեցաւ իր սենեակը: Գլուխը կը պայթէր, կռկորդը կը սեղմուէր, կարծէր կը ճնշուէր: Կարծեց, թէ պիտի նուաղէր. կանչեցաւ իրի մը, որ գլորեցաւ ու չարդասփշուր եղաւ: Առաջին ցնցումէն սթափած՝ զգաց, որ իր էութեան մէջ բացուած պարսպը կը լեցուէր գալարաւող օձերով, իրենց թռչող թափելու պատրաստ իծերով:

Կ'ստէր, կ'ստէր երկուքն ալ: Հաւատարմապէս կ'ստէր: Կարծեց տեսնել գանձ մըն ահա՞ ձեռքի ու դաշոյնի մը միտիլը զգաց կարծիքի մէջ: Եթէ իր մօտ ըլլային՝ ինչպէ՞ս պիտի ուզէր թանկել, արիւնել անոնց դէմքերը:

Ակնարկը յանկարծ ինկաւ հայելիին մէջ ու արասփեցաւ: Այդ աչքերը, այդ անմարդկային արուայտութիւնը... Այդ ինք չէր, ո՛չ, այդ ինք չէր...

Վերջուց գետնէն կտորած լամբին մէկ կտորը եւ երկա՛ր նայեցաւ անոր բացակայ աչքերով, յիմար ֆայլ մը առնելու տարտամ մտածումով, երբ հեռուներէն, թերեւ իր էութեան խորքերէն կարծեց լսել ձայն մը, որ կ'ըսէր. «Մի՛ մոռնար, որ Հերանին կը պարտիս կեանքը»: Ձայնը կրկնուեցաւ ու կրկնուեցաւ, որուն յաջորդեց անփառարար արցունքը: Նետուեցաւ անկողինին վրայ,

քաղեց դէմքը բարձր մէջ ու հեկեկաց, երկա՛ր հեկեկաց: Բախտ չունէր, ա՛յ, բայտ չունէր:

Մտոցուած, թաղուած պատկերը կը կենդանանար... Ճէ՛քը լքեր էր գինձ տանտիրուհին վարձքը կը պահանջէր: Ձեր գիտեր որս դառնալ, ինչ ընել: Յիշեց Հերանի ձայնին ջերմութիւնը. «Անմիջապէս կու գամ, ճեգ հոս կը բերես»: Ու... արկածը, երբ պայուսակը վար կ'առնէր: Այ՛ճերը քացաւ հիւանդանոցին մէջ. Հերանն էր իր քով տրտում աչքերով. «Երեխան կորսնցուցիր», ըստ ձեռքը բանելով: Կը կարծէր, թէ ատիկացաւ պիտի պատճառէր իրեն:

Մշուշը կը փարատէր. կարծես աւպերուն հտեւէն արեւն էր, որ դուրս կու գար ու իր կոյր աչքերը պայծառօրէն կը տեսնէին Գուրգէնի սիրոյն խորութիւնը Հերանի հանդէպ: Ու Հերանը...

Մօրը խօսէրը, եւ «իմշու»ներու շարքը սկսան իմաստ գգնել: Յիշեց Հերանի տժգունիլը, ցնցուիլը, երբ Գուրգէնի լուրերը կը հաղորդէր եւ յիմարօրէն ցուրտին վերագրեց ատիկա:

Որքան ատեն մնացեր էր այդպէս անկողնին վրայ: Արցունքները խեղդեր էին իր մէջ ծնունդ առած հրէշը: Ելաւ ու՛՛՛՛ր ու ակնարկը կրկին հանդիպեցաւ

հայելիին: Նախկին սարսփազդու դէմքը չկար այլևս բայց հոն, եւ ուտած, կարմրած աչքերուն մէջ քարացած վիշտ մը կար: Ձեր ուզեր: Ատիկա եւս չէր ուզեր: Ատիկա եւս նոյնքան վանողանք էր: Պէտք է անոր արմատները պռկէր իր էութենէն ու պիտի պռկէր: Պիտի յաջողէր:

Առաջին անգամ ըլլալով զգաց տարիք: Ձգաց, թէ այլեւս նախկինը չէր ու պիտի չկրնար ըլլալ: Պիտի ուզէր դառնալ լրջախոհ եւ հօրը նման իմացտուն:

Մահը քայլերով մօտեցաւ սրտուհանին: Ձիւնը ցրեթէ հալեր էր ու մըշտադարձները անլորդ բռնէն թեթեւացած, կ'էսծ նիւզերը ուղղած: Անոնց նտեւ, ուրուականներու նման, կ'մայտացած ծառերու շարքը, որոնք շուտով պիտի ծաղկէին կրկին: Գարունը մօտ էր, շատ մօտ:

Ակնարկը երկար սրահ մը յառած մընաց բարձրացող լիպուսին: Անոր պայծառութենէն, արծաթ շագերէն լաւատեսութեան շող մը ինկաւ նաեւ հոգիին մէջ:

«Մօտ է գարունը, շշնջաց, ու կ'եստէք՝ անակնկալներով լի»:

Ա. ԱՐՓԻՆԷ



ԻՎայական Հարվուստ

«ԲԱԳԻՆ» Ի

Վարչութիւնը, հմբագրութիւնը,
Տարեց թէ երիտասարդ գրողները,
Ինչպէս նաեւ

Տպարանի տնօրէնութիւնն ու
Անձնակազմը որոշած են
Հնարաւոր բոլոր գոհողութիւնները
Յանձն առնել՝

Կանոնաւորելու համար ահաւայ
Խախտած մեր ամսագրին
Ժամանակացոյցը:

Անոնց համոզումով, Լիբանանի
Ապրած տազնապը հետեւանք էր
Նոպայի մը, որ չի կրնար
Վճռական անդրադարձ ունենալ
Կենսական գործերու վրայ:

Ս. Ս Ա Ն Ի Ն Ե Ա Ն

Մի գրոզի գրական մտարումներ

ՀԱՄԱՌՈՏ ՄԻ ԱԿՆԱՐԿ

ԳՈՐԱԿԱՆ ՎԷՊԻ ՎՐԱՑ

1. ԵՐԿՈՒ ԽՕՍԻ

Վերջերս, գրական մի թերթում, ամերիկացի մի գրաքննադատ գրել էր՝ «Մեր այս օրերում ամէմէր վիրուսների եւ գաքական վէպի մասին եմ խօսում, եյր չգիտեմ, քէ իսկապէս ինչ եմ գրանէ»:

Ասեմ, որ ես վիրուսների մասին ոչինչ չգիտեմ, եւ չեմ էլ խօսում գրանց մասին: Բայց դժբախտ վէպի մասին մի քիչ գիտեմ:

Ընթերցողներից ամէն մէկը երեւի յիշում է, որ երբ մենք զպրօցականներ էինք, Հայերկնի մեր ուսուցիչները մեզ բացատրում էին, թէ դեղաբուսական գրականութիւնը բաժանուած է երեք հիմնական ձեւերի, այն է՝

- 1.— Արձակ, նորավէպ, պատմուածք եւ վէպ:
- 2.— Բանաստեղծութեան կամ չափածոյի, եւ
- 3.— Թատերգութիւնների (գրուած յատկապէս բեմի վրայ ներկայացընելու համար):

Սակայն մեր ուսուցիչները մեզ չէին բացատրում (եւ կարծում եմ լաւ էին անում, քանի որ մեր գյուղներում մեծ քառս կը ստեղծուէր), որ դեղաբուսական գրականութիւնն իր երեք ճիւղերով հանդերձ բաժանուած է բազմաթիւ հոսանքների, դեղադիտական բժշկութեան, աշխարհահայեցողութեան, կեանքն ու մարդը ճանաչելու առանձնայատուկ փիլիսոփայութիւնների, գրական զարոցների, եւ այլն:

Թէեւ ամէն մի գրող գրական մի զպրօց կամ հոսանք չի ներկայացընում, բայց ամէն գրական մի հոսանք մի քանի գրողներ ներկայացնում է: Միաժամանակ գրական ամէն մի զպրօց կամ հոսանք իւրայատուկ է այն դարի ոգուն, երբ այն ծնունդ է առնում:

Թէեւ դիտական ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ հիմնականում մարդը ամենեւին չի փոխուած (իր բնոյթի մէջ), բայց նա փոխուած է վարք ու բարքի մէջ, կեանքն ու մարդկանց ճանաչելու եւ աշխարհահայեցընների մէջ, դիմացինին հանդուրժելու եւ նրա իրաւունքները ճանաչելու համբերատարութեան մէջ, եւ այլն:

Այսպիսով՝ ինչքան նոր դար, այնքան նոր հասկացողութիւններ: Մալ-

նաևանդ մեր այս քոսներորդ դարում հասկացողութիւններն շատ են: Եւ որովհետեւ գրականութիւն ստեղծողները գրողներ են, իսկ գրողներն նախապէս իրենց ծնուած ժամանակաշրջանների մարդկային արտադրանքներ են, այդտեղից էլ առաջանում են այդքան շատ պրական դպրոցներ, հոսանքներ, եւ հասկացողութիւններ:

Հին Յունաստանում, գրողներն իրենց ստեղծագործութիւնների գլխաւոր գործող անձանց ճակատագիրը կապում էին այս կամ այն Հեթանոս աստուծոյ բարի կամ չար կամքի հետ: Հասկանալի է, որ քոսներորդ դարի մի գրող էթէ այդպէս բացատրելու լինի իրերը եւ երեսոյթները, նախ՝ նրան չեն կարգայ, եւ յետոյ էլ՝ նա ծագրանքի առարկայ կը դառնայ:

Գոթական վէպն էլ իր ժամանակի ծնունդ է, թէեւ այսօր էլ դեռ շարունակում են գոթական վէպեր գրուել:

2.- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Գոթական վէպը իր անունը սերել է դոթի կուլուող հինաւոր ժողովրդից, որի նախնական հայրենիքը ընկած էր Դնեպր եւ Դոն գետերի առանջում:

Չորրորդ դարի վերջին՝ գոթ ցեղախումբը բաժանուած է օստգոթերի եւ վեստգոթերի, կամ էլ՝ ինչպէս նրանք իրենց էին անուանում, օսարգոթերի եւ վիդիգոթերի: Այդ ժամանակ նրանց սահմանն էր հանդիսանում Դինեսար գետը: Վիդիգոթներն ապրում էին Դինեսարից արեւմուտք: Սակայն գոթերն անհանդիստ ժողովուրդ էին: Դրանք առնական էին, կուսազան եւ իրենց արիւնով թարմ: Կռիւնեքով լեցուն մի պատմութիւն է գոթերի պատմութիւնը: Առենք միայն, որ սկզբում վեստգոթերը 410 թուին գրաւեցին Հռոմը, աւերեցին եւ կազուպեցին: Այնուհետեւ նրանք շարժուեցին դէպի Իսպանիա եւ գրաւեցին տմբողջ Պիրենեան թերակղզին ու այժմեան Ֆրանսիայի հարաւարին նահանգները: Սակայն ութերորդ դարի սկիզբներին, վեստգոթերի կամ վիդիգոթերի անունն այլեւս չի յիշուած Իսպանիայում:

Հռոմի վրայ գնացել են նաեւ օստգոթերը (493): Նրանց նոյնիսկ յաջողուել է իրենց թագաւորութիւնը հաստատել այժմեան Իտալիայի սահմաններում, որը տեւեց մինչեւ 554 թիւր: Բայց ամէնօրեայ հերոսական կռուիներից յետոյ, 554 թուին բիւզանդական Ներսէս զօրավարը ճակատագրական մի մարտում վերջ տուեց այդ թագաւորութեանը եւ օստգոթերը ցրուեցին տմբողջ Իտալիայով մէկ, եւ ըստուցին տեղացիների հետ:

3.- ԳՈԹԵՐԸ ԵՒ ԻՐԵՆՑ ՄՇԱԿՈՅԹԸ

Նախապէս ասացինք, որ գոթերը պատերազմաւոր եւ շատ անհանդիստ ժողովուրդ էին: Նրանք արիւնով թարմ էին եւ համակ եռանդ: Արտաքինով չիկական էին, մարմնով՝ մեծ, անխնամօրէն տնած բեխտօրուքով: Սկզբնական միջնադարում գրանք ուղղակի Աստուծոյ պատիժն էին համարում Արեւ-

մշտեան Եւրոպայի ժողովուրդներէ համար: Կոխը նրանց Հարանիքի նման զուարճութիւն էր թւում եւ նրանք սրտանց զուարճանում էին, երբ դրաւում էին այս կամ այն երկիրը. կոզոպտում, աւերում, հրկիզում եւ բնակչութեանը գերի տանում: (Բայց կանանց նրանք չէին դիպչում):

Այդտեղից էլ այդ ժողովրդի տնուան հետ կապուել է վայրագութիւնը, բրտութիւնը, զազանութիւնը: Հնում, հիմա՛ էլ, դո՞ւ անունը երկու իմաստով է դործածում: Որպէս ժողովուրդ, եւ որպէս վայրագ, բարբարոս: Հին Հռոմում եւ Բիւզանդիոսում նրանք այդպէս էլ բարբարոսներ էին կոչւում:

Մակայն դո՞ւք բարբարոս մարդկութեանը փոխանցել են ո՛չ միայն իրենց զազանական բնադները, այլեւ իրենց ճարտարապետական ոճը, որն դո՞ւ թակաս է կոչւում: Նրանց ճարտարապետական այդ ոճը շատ զարգացաւ մանաւանդ այն ատեն, երբ նրանք քրիստոնէութիւն ընդունեցին եւ սկսեցին եկեղեցիներ կառուցել:

Գոթերը իստում էին Հին գերմաներէնով (անետներէն): Նրանք հաստատեցին իրենց այրուքները, որը ցարդ զուգընթաց լատինականին դործածւում է այսօրուայ Գերմանիայում: Գոթերը հաստատեցին իրենց ինքնուրոյն արձանագրութիւնը, արանկարչութիւնը, երաժշտութիւնը եւ մշակոյթի այլ անակներ:

Մակայն այսօրուայ աշխարհին հիացնողը դո՞ւք կան ճարտարապետական ոճն է: Այն արտայայտում է այդ անհանդիստ, խոյանքի, ճարտանքի եւ միեւնոյն ժամանակ միատիք (քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ) ժողովրդի արդային հոգին: Ճարտարապետական այդ ոճը զուգահից չունի: Շատերը հիանում են այդ ոճով, շատերն էլ տիրութիւն են զգում զոթական ոճի մի եկեղեցի դիտելիս, որովհետեւ նոր են միայն զգում, թէ իրենք ինչքան փոքր են մարդակերտ այդ սէզ, հպարտ եւ երկնաչու կառոյցների հետ համեմատած, որովհետեւ հարազատ չեն զգում իրենց: Հետո՞ւ են համարում իրենց, չեն մերում չենք հետ: Խորթ են զգում: Ճիշդ նոյնն է ամերիկեան երկնաքերծ շէնքերի հետ: Ազդեցիկ են այդ շէնքերն իրենց հակաութեամբ, բայց զգում ես, որ դրանք իրենց համար են, եւ ոչ քեզ համար:

Ձուգակշիռ անցկացնելու համար, ասենք, որ այդպէս չէ մեր ազգային ոճով կառուցուած, ասենք մի եկեղեցի: Մերն ուրիշ է: Այն մեր ազգային հոգու պէս համեստ է, մարդամօտ: Սնուպարծութիւն չունի: Պարզ է, շինի, տաք ու վերմ: Մեր ճարտարապետութեամբ կառուցուած մի եկեղեցի, մի շէնք շարժուած է, կանչում է քեզ, հազորդակցութիւն ստեղծում քո եւ իր միջեւ:

Վերջերս, սփեւոքահայ թերթերը հրատարակեցին Եղիվարդ գիւղի մատուռի լուսանկարը: Նայում ես այդ լուսանկարին եւ աչքերդ թացանում են այդ ազոթատեղիի պարզ գեղեցկութեան նկատմամբ, Քեզ թւում է, որ այդ մատուռը մարդկային ձեւով չի կառուցուել, այլ ստեղծուել է ինքնիրեն: Ծիւլ է, ինչպէս մի մանուշակ, մի շուշան, սիպարանծ հայկական մի բարդի: Այն նման է հայոց մի նորահայտի, որին ուզում ես մօտենալ եւ ելքայարար ու հարպտասօրէն գիրկդ առնել, համբուրել ու համբուրել:

Ինչո՞ւ է այդպէս: Որովհետեւ մեր ճարտարապետութիւնը հոգուց եւ սրտից բխած ոճ է: Այդ ոճով մի ազոթատեղի, մի շէնք կառուցուել է միայն ու միայն մարդկային օգտագործման համար, այլ ոչ ցուցադրութեան: Ուրիշներն՝ ուժ ցուցադրելու, վախ ազդելու համար:

Գոթական ճարտարապետական ոճն էլ ուժ ցուցադրելու ոճ է: Բայց

այն ուղղունքի է, որովհետեւ բաղձադանութիւն մտցրեց Համաժողովային արուեստների դանձարանից ներս: Յայտնի բան է, որ միայն մէկ տեսակ ծաղիկով մշակուած ծաղկանոցն այնքան զեղեցիկ չէ, որքան ծաղիկների բաղձաթիւ տեսիլներով մշակուած պարտէզը:

Միւս կողմից էլ գոթական ոճը փոխարինեց հռոմէական ճարտարապետական ոճին, որը յայտնի է իր միասարքութեամբ, անշարժութեամբ եւ բարայրն հսկայական դանդաղանների անդուրեհկան կուտակումով: Հռոմէական ոճն էլ ստեղծուած էր ուժ եւ սարսափ ազդելու համար:

Մական գոթական ոճը մեծ զարգացում էր հռոմէական ոճի հետ համեմատում: Այն մարդկային մտքի գեղեցիկ թռիչք է: Թռիչք զէպի երկինք, զէպի կապուտակ անյայտութիւնը եւ խորհրդաւորութիւնը: Եռայլ ճոխութիւն են զոթական եկեղեցիների սլաքասուր գմբէթները: Այդ գմբէթները թեթեւ են, եւ զարդարուն բազմաթանդակներով: Եկեղեցիների ներսերը ընդարձակ են եւ զարդարուն:

Գոթական ոճի եկեղեցիները, ամրոցները, բազաբայետարանները տարածուած են սկանդինաւեան երկրներից մինչեւ Գերմանիա, Պրանսիա, Անգլիա:

Այդ սքանչելի կառոյցները տեսնելու համար սրբէ Եւրոպա գնալ՝ հրանալու համար մարդկային մտքի եւ ստեղծագործութեան այդ յուշակոթողներով: Գոթական ոճով կառուցուած ճարտարապետական կառոյցի գլուխգործոց է հանդիսանում Ճիւլլոբուրգի սաճարը՝ Գերմանիայում: Այդ ճարտարապետական մի հրաշալիք է: Գեղեցիկ է նաեւ Բրիւսէլի քաղաքապետարանի շէնքը, ինչպէս եւ Նոտր Դամի սաճարը՝ Փարիզում:

4.- ԳՈՐԹԱԿԱՆ ՎԼՊԻ ԵՍԳՈՒՄԸ

Բայց ինչու՞ւր գոթական վէպ:

Ասենք անմիջապէս, որ չպիտի կարծել, որ այդ վէպերն իրենք, կըռադան գոթերն են գրել: Ոչ, նրանք չեն գրել:

Գոթական վէպերի այդ ընդհանուր անունը (գոթական) առաջացել է այն բանից, որ առաջնորդում այդ վէպերի գործողութիւնները կատարում էին գոթական ճարտարապետական ոճի ամրոցներում եւ ընդհանրապէս այդ ոճի այլ շէնքերում:

Առաջին անգամ գոթական վէպեր սկսուեցին գրուել 18րդ դարի երկրորդ կիսում: Այդ այն ժամանակ էր, որ Եւրոպայում տիրապետում էր զըրբական, ինչպէս նաեւ նկարչական, այսպէս կոչուող «նոր դասական» դրոյրոցը կամ ուղղութիւնը: Նոր դասականները, այսօրուայ բոտով ասուած՝ մտքով զբոսակուսիներն էին: Նրանք մտքի թռիչք չունէին: Ամէն բանի մէջ կարելու կանոն էին ուղղում տեսնել: Գտուել էին հին յունական եւ հռոմէական կան ձեւերին եւ մեծ տեղ էին յատկացնում հին յունական եւ հռոմէական ոճերի արտաքին ձեւերին: Օրինակ, նրանք հին յունական թատերադրերի պէս ողբերգութիւններ էին գրում, որից դուրս էին հանել միայն այդ ողբերգութիւններին մաս կազմող երկեցիկ խմբերի դերերը: Միաժամանակ նոր դասականները աւտում էին այն ամէնը, ինչ մերաբերում էր գոթական մշակութային տարրերին: Այն ամէնն ինչ գոթերին էր վերաբերում՝ նրանք Համարում

էին վայրադե և բարբարոս : Նոր գտնականներէ այդ սահմանափակումներն անշուշտ ճշուժ էին արուեստի ասպարէզի երեսասարդ ուժերին և ընդհանրապէս բոլոր նրանց, որոնք արուեստի նոր սեղաններ էին փնտռում :

Այդ բոլորն անշուշտ պիտի ունենար իր հակադարձութիւնը : Եւ ունեցաւ : Գրական մասնադէտներէջ շատերը գտնում են, թէ որպէս հակադարձութիւն առաջ եկաւ միպոպոստական դարոյցը կամ ուսմանստիժը :

Բայց շատ տեսարաններն էլ կտրծում են, որ նոր գասականութեան նկատմամբ առաջ եկաւ դոթական վէպը, որը միպոպոստութիւն չէ անշուշտ, բայց որը ճանապարհ բացեց միպոպոստութեանը :

Ինչոյէս էլ եղած լինի՝ մի բան պարզ էր, որ նոր գասականութիւնը մասնուէր տակ էր պոստմոդերնիստական դեզպոպոստական մտքերը, զարդոյցով ստիզորէն նմոնուէլ չին յունական և հռոմէական դեզպոպոստական հասկացողութիւններին : Օրինակ, նոր գասականները արդահատունքով էին վերաբերում գոթական ճարտարապետութեան նկատմամբ, համարելով այն բարբարոսութիւն :

Միւս կողմից էլ, նոր ու բմբոստ դէմքերը այցելում էին դոթական սաճարներին, ամբոցներին և այլ տեսակի շէնքերի փլատակները և թախիժով դիտում չին ժամանակներին ու փառքերին այդ միպոպոստութիւնների մնացորդները : Եւրոպական ջինջ արեւի տակ նրանք տեսնում էին մասնապատ տաշւած զարբեր, որոնց արանքներից պղտիկ ու դարմացած աշքերով նրանց էին դիտում դորշ-կանաչաւուն մողէները : Վիպոպոստ, ստաբարիւն և հարուստ երեսակապութեան տէր դրոպները յանձինս այդ մողէների երեսակապում էին այդ ամբոցների նախկին բնակիչներին՝ սպոպոստներին, իշխաններին, իշխանուհիներին : Նրանք մտքով երեսակապում էին, որ այդ մողէներին մէջ են մտել լանթիպ մի սպոպոստ, թուանորում մի իշխանուհու, թնամուճճեքն ընկած և տանջանքներ տակ մեռած մի իշխանի հոգիները, և նրանք շեն ուղում հետանալ այդ ամբոցներից, սրալատներից, որոնք թէեւ այլեւս փլատակ, բայց նորից իրենց է : Նրանք ծնուէլ են այդ ամբոցներում, այլուէլ այդ ամբոցներում, և թերեւս նաեւ մեռել այդ ամբոցներում, և որոնց հետ նրանք կապուած են հագար ու մի ուրախ ու երջանիկ, տխուր ու դրժբախտ յիշողութիւններով :

Նրանք՝ այդ երապիտ երեստարդները այցելում էին ողջ մնացած ամբոցները, դիտում երբեմն ընդարձակ սրահներ, ննջարանները, ստորգետնեայ գաղտնի անցքերը : Նրանք դիտում էին երկաթեայ ոլորապոստ աստիճանները, որոնք այժմ հնութիւնից թիթեւ հպումից անպամ ճշում էին ու ճանշում : Այդ ամբոցները թէեւ այժմ անմարդարնակ էին, բայց այդ ոսմանտիկ երիտասարդներին էին նայում պատերից կախուած այդ շէնքերի հին տէրերը, միշտ խիստ դէմքով, միշտ պինուած, իսկ կոնոյք նուրը և երապուն : Եւ այդ այցելուներին թուում էր, թէ շարժում են այդ նկարները, ժպտում իրենց, թարթում իրենց աշքերը :

Այն ժամանակ փառ երեսակապութիւն ունեցող այցելուները երեսակապում էին, որ երեւի գիշերները, պատերից դար են իջնում նկարուած այդ անձինք, եթէ թնամիներ են՝ յարձակում են միմեանց դրայ, եթէ սերահարներ են՝ ապա գրկում են իրենց սիրուհիներին հետ, եւայլն :

Գոթական այդ երբեմն ողջ, երբեմն աւերակ ամբոցներից, տաճաններից, մասուուանքից և լքուած դերեզմանոցներից էլ տառաջաւ ողիների գոյութեան հուատամքը և այն մտաւ եւրոպական ժողովուրդների, առանձ-

նասպան գերման ժողովուրդի առասպելների մէջ, որոնցից ամէնից յայտնին է «Փառնասը»:

Իր մտքի եւ երեւակայութեան թռիչքով, հողեկոն հաղորդակցութեամբ, ջերմութեամբ, իր գիտակցութեամբ, իմացականութեամբ եւ այլ յատկանիշներով եւ առաւելութիւններով, մարդն հրաշալի մի արարած է: Հրաշալի է, որովհետեւ քնութեան հրաշալիքների վրայ ինքը եւս աւելցնում է նոր հրաշալիքներ՝ իր ստեղծագործութիւններով, իր մրտքի ու հողեկոն կարողութիւններով: Փաստորէն, արուեստագէտ մարդը, լինի նա ճարտարապետ, նկարիչ, երգահան, արձանագործ թէ գրող՝ կրկնապատկում է կեանքի գեղեցկութիւնները, ճոխացնում է կեանքը եւ այն աւելի հաճելի դարձնում:

Նոյնն արեցին նաեւ գոթական վէպի միտադրները: Ճիշդ է, որ նրանք բոսխ լայն իմաստով հասկացուող գեղարուեստական գրականութիւն չըստեղծեցին, որովհետեւ նրանց վէպերն ոչ Ստենդալի «Կարմիրն ու սեւն» էր, ոչ Փլյարէրի «Մաղամ Բովարի»ն, ոչ Տոլստոյի «Աննա Կարենինան», ոչ Զեյնովի «Հագուարնիրը», ոչ Բոմբիի «Ինքնը», ոչ Մտեֆան Զորեանի «Յանկապար»-ը ու ոչ էլ Յոյ՝ Թումանեանի «Գիշոր»ը եւ ուրիշ շատ գրական արժէքներ, բայց նրանք ստեղծեցին մի գրականութիւն, որն իր բովանդակութեամբ ու էութեամբ այս աշխարհից չէր:

Մարդկային մտքի եւ երեւակայութեան առջեւ նրանք, ինչպէս բեժի առաջամասից, յետ քաշեցին վարագոյրը՝ ցոյց տալով ողիներին, անհասկանելիութիւնների, խորհրդաւորութիւնների, զերբնական ուժերի գործողութիւնների եւ սարսափով յեցուն մերացական ու անհեթեթ մի աշխարհ: Այդ գրականութեան մէջ թէեւ չեն գործում երկնային ուժերը, բայց գործում են «երկրային սղիները»:

Անուշտ ոչ ոք չի հաւատում այն բոյորին, ինչ պատկերացնում է այդ գրականութիւնը, բայց մենք այժմ չենք հաւատում նաեւ Զմեռ Պապիկի դոյութեանը, երբ հաւատում էինք, երբ երեխաներ էինք: Բայց միթէ մենք տարեց երեխաներ չենք:

Ճիշդ է, որ մենք այլեւս չենք լացում կաթի համար, բայց մենք մանուկների պէս ինքնապաշտ ենք, կառուպան ենք, առանց ամօթի զպսժան փորձում ենք հարուածել մեր հակօտակուրդին, խռովկան ենք, նախանձոտ ենք եւ պակասաւոր՝ զիմացինի իրաւունքը, նրա ինքնասիրութիւնը յարգելու մէջ — եւ գոթական վէպերը գրուած են եղեր մեզ պէս մեծցած մանուկների համար:

5. ԳՈՐԹԱՎԱՆ ՎԷՊԻ ԲՆՈՅԹԸ

Ասացինք, որ գոթական վէպերը կատարեալ գեղարուեստական գրականութիւն չեն համարուում:

Բայց ի՞նչ է կատարեալ կամ ճշմարիտ գեղարուեստական գրականութիւնը:

Ա՛հ, Աստուած իմ, ո՞վ կարող է սպասել կերպով պատասխանել այդ հարցին: Ո՛չ ոք: Ո՛չ գրաքննադատները, ոչ գրականութեան մասնագէտները: Ո՛չ ոք: Որովհետեւ գրանք բոյորն էլ՝ սխալականներ են: Որովհետեւ նրանք

գատողութեամբ, մտքի ճիշտիքն են մտնելում գրական մի երկի: Նրանք փորձում են վերծանել վէպը այնպէս՝ ինչպէս քիմիկոսը վերլուծում է քիմիական մի անձնութիւնը, եւ վէպի արդիւնքը ստացւում է այն, որ չի ցանկացել հեղինակը: Համալիարհային գրականութեան պատմութիւնից այդ ուղղութեամբ բացմութիւն օրինակներ կարելի է բերել:

Այդ հարցի պատասխանն այն է, որ գեղարուեստական ճշմարիտ մի երկ ճանաչւում է ինքն իրեն, առանց միջնորդութեան: Այն ճանաչւում է intuitive կերպով եւ այդ մեթոդը միշտ էլ ճշգրիտ է լինում:

Արդ՝

Հարց է ծագում, թէ կարո՞ղ է արդեօք գոթական վէպը ճշգրիտ գրականութիւն համարուել:

Ո՛չ, որովհետեւ չի լրացնում ճշմարիտ գրականութեան գլխաւոր յատկանիւնները:

Առաջինը՝

Ճշմարիտ գրականութիւնը յազեցուած է լինում հոգեկանութեամբ: Վէպի գործող անձանց, մասնաւոր գլխաւոր «հերոսի» հոգեկան ապրումներով, նրա հոգու վերլուծումներով: Հոգեկան ապրումների խաչաձեւումներով եւ ընդհարումներով: Մարդկային հոյու վերլուծումներով:

Գոթական վէպը պարզ է այդ բոլորից: Գոթական վէպը զուրկ է մարդկային հոգեկան աշխարհից:

Երկրորդ՝

Ճշմարիտ մի վէպը զարգանում է տրամաբանութեամբ, հաստատումներով, բացասումներով եւ մխտումներով: Ճշմարիտ վէպը, նոյնիսկ իբր բացասական երևոյթներէ մէջ՝ մարդկային է: Այսինքն՝ գործողութիւնները մեկնում են մարդու բնոյթից: Այլ խօսքով ասած՝ ճշմարիտ վէպը հոգեղէն մարդկային է:

Գոթական վէպը՝ ո՛չ: Այդ վէպը տրամաբանութիւնից, ինչպէս ուզում էք, վեր է կամ վար: Այդ վէպի գործողութիւնները տեղի չեն ունենում արեւի տակ, այլ խաւարի մէջ: Գոթական վէպը գործ ունի ողբերգի գոյութեան հետ, որը մենք ժխտում ենք:

Եւ երրորդը՝

Եթէ ճշմարիտ վէպում նկարագրւում է նոյնիսկ մարդկային ամէնից զագրելի արարքներն ու սճիւրհները, գրանք արւում են միայն նկարագրութեան համար, գործողի հոգին ցուցարեւելու համար, բայց ոչ ընթերցողի վրայ սարսափ ազդելու նպատակով:

Իրա հակասակը, գոթական վէպի միակ նպատակն է սարսափ ազդելը ընթերցողի վրայ: Գոթական վէպի կենտրոնում է դառնում սարսափը: Եթէ վէպում սարսափ կամ սուկում չկայ, ապա տուեալ վէպը գոթական չէ:

Այդքան երկարօրէն խօսելուց յետոյ, վերջապէս ի՞նչ է գոթական վէպը:

Առաջինը սարսափի երեւակայութիւն:

Մարդ արարածը ամէն բանի կարիք զգալով, երեւի նաեւ սոսկումի կարիք է զգում, այլ կերպ չէին գրուի գոթական վէպերը եւ, եթէ գրուէին էլ՝ այդքան տարածում չէին ունենայ:

Գոթական վէպի բաղկացուցիչ տարրերն են կաղմում խաւարը, ահաբեկումը, խորհրդաւորութիւնը, բռնութիւնը, շրջուն ողբերգը: Գոթական

վէպը նկարագրում է մութ ու խոնու զնդանները, նեղ ու մութ զաղտնի ընդ-
դետնեայ անցքերը, բարձր-թողի տրուած ամբողջեր, հնադարեան գերեզմա-
նոցներ, վանքեր, եկեղեցիներ, զնդաններ, զնդաններ, զնդաններ: Ընդ-
դետնեայ, մութ, խոնու եւ ահարկու...:

Գոթական վէպերում նկարագրում է, թէ ինչպէս ասայի մի շինքում
բացւում եւ ծածկւում են դոները, թէ ինչպէս այդ դոների տակից արին է
հոսում: Մի ինչ-որ տեղում մշուում է կտուռն, կաղկանձում է մի լուսն...:

Բուն շինքում, մի ինչ-որ տեղից լուսւմ է մի կնոջ ցառատանջ նեղկը-
տանքը, եւ այդ վայրկեանին էլ լուսւմ է մի սողամարդու զիւային հրհոտը:

Գերեզմանոցներում մահացածները էլնում են իրենց տեղերից եւ շըր-
ջում աւանի փողոցներում, կամ էլ՝ գալիս մտնում են այն շինքերը, ուր
նրանք ապրած են եղել նախապէս: Ամայի եկեղեցիներում պատարագ է մա-
տուցւում, երբ այդ եկեղեցիները տասնեակ տարիներ առաջ լքուած են եղել,
եւ զրանց դռներն անդամ տարիներով շեն բացուել:

Գոթական վէպերում ամէնուրեք սարդի ստայներն են, շղթիկներ,
կատաղած շներ եւ կտուռներ: Փայլեր, որոնք մարդ են դառնում, եւ մար-
դիկ, որոնք դայլ են դառնում:

Գոթական վէպի համարեա՝ ամէն մի էջը ահուդող, սոսկում, սարսափ,
սարսուռ ու զարհուրանք է ներշնչում:

Այդ բոլորն անշուշտ, կազուտեմ միմեանց հետ՝ դարձան պատմութիւն:
Պատմութիւններ ահատարած եւ ընթերցողի արիւնն իր երակներում սրտե-
ցընող:

Նման վէպեր կարողում են նրանք, որոնք գորչ ու միապագայ կեանք են
վարում, եւ քնելուց առաջ ցանկանում են մի քիչ դրդուել իրենց երեւակայու-
թիւններն ու ջղերը:

Ապացուցուած է, որ այդ «վէպերի» եւ ուստիկանական «վէպերի» սի-
րահարներն են կրօնաւորները, գրասենեակային աշխատողները, դիւանագէտ-
ներն ու «քաղաքագէտները»: Եւ ընդհանրապէս նրանք, որոնք յօրանջում են
զրական ճշմարիտ արուեստի մի երկ ընթերցելուց, որովհետեւ շեն հաւա-
նում իրենց կարգացածը:

Գոթական առաջին վէպը գրուել է 1764 թուին: Հեղինակն է անգլիացի
Վիպագիր Հորացիո Վոլպուլը (1717-1797): Նրա գոթական վէպը կոչւում էր
«Օտրանտոյի ամրացը»: Այդ վէպը իր ժամանակին ցնցում առաջացրեց եւ
արագօրէն սպառուելով անմիջապէս ունեցաւ իր երկրորդ հրատարակու-
թիւնը: Յարդ այդ վէպն ունեցել է բաղմաթիւ հրատարակութիւններ եւ հա-
մարում է գոթական վէպի դասականներից մէկը:

«Օտրանտոյի ամրացը», որ համարւում է ախպական գոթական, մեծ
ազդեցութիւն ունեցաւ, եթէ կարելի է այդպէս ասել, այն ժամանակների
գոթափիպականօրէն մտածող գրողների վրայ, եւ այդ վէպին հետեւեցին ու-
րիշները, մէկը միւսից ահուելի բովանդակութիւններով:

Եւ այդպէս, «Օտրանտոյի ամրաց»-ին հետեւեցին բազմաթիւ ուրիշները
եւ, ինչպէս ասացինք՝ դեռ մինչեւ հիմա էլ գրւում են գոթական վէպեր:
Սակայն մեր այս ակնարկում տարիս ենք միայն մի քանի դասականների ա-
նուններ:

Եւ այդպէս՝

1794 թուին լոյս տեսաւ անգլիացի Էնն Բազկլիֆի (1764-1823) «Ուղարկ-
Փռչի խորհրդաւարութիւնները» խորագրով վէպը:

Այդ վէպի հրատարակումից երկու տարի յետոյ լոյս տեսաւ Մաթիւ
Լիւիսի կամ էլ Մանք Լիւիսի (1775-1818) «Վանքը կամ արեղան», որը իր ահ-
ռելի բովանդակութեամբ մի ամբողջ սերունդ սոսկումի տակ պահեց:

Նորից անգլիացի վիպագիր Վիլիի Կոլինզը (1824-1889) 1866 թուին
հրատարակեց «Սպիտակ զգեստով կինը» գոթական վէպը:

Այս վէպերը, որ մինչեւ վերջերս բիրտորոշաֆիական հազուադէպա-
թիւներ էին համարուած, անցեալ տարի հրատարակուեցին ամերիկեան մի
հրատարակչական տան կողմից, ամէն մէկ հատորի արժէքը նշանակելով
տաս անգամ աւելի, քան մասնադիտական մի գրքի արժէքը, բայց նորից ան-
միջապէս սպառուեցին, մասնաւոր՝ որ այդ վէպերը դնելու համար նախա-
պէս արուած պատուէրներ թիւը շատ մեծ էր:

Սակայն շատերը երեւի տեսել են Վիրաք կամ չգիտէր, «Փրանկիեն-
տայն» եւ «Իրախլա» շարժապատկերները, որոնք պատրաստուած են գո-
թական մեղմ բովանդակութեան վէպերի հիման վրայ:

«Փրանկիենտայն»ը 1817 թուին գրել էր վիպագրուհի Մէրի Շէլլին
(1797-1856): Եթէ նախապէս թուած գոթական վէպերի նպատակն էր սովոր-
ական սոսկում պատճառել ընթերցողներին, ապա «Փրանկիենտայն»ի նպա-
տակն էր գիտական դարձուցումից միայն չպատճառել ընթերցողներին:

Անգլիացի վիպագիր Բրէմ Ստոկէրը 1897 թուին հրատարակեց իր
«Իրախլա» գոթական վէպը, որը այդ փանրի մէջ համարուած է ամէնից
մեղմը, ահ ու սոսկում աղդելու մէջ:

Հիմա էլ դեռ շարունակուած են գրուել գոթատեսակ վէպեր, որոնց
հեղինակներն թէեւ երբեք գոթական չեն անուանուած: Բայց նրանք ասում
են, որ իրենց գոթական վէպերն աւելի շատ իրապաշտական բնոյթ են կրում:
Նոր տեսակի այդ վէպերը մեծ սպառում ունեն, եւ իրենց բարոյական բա-
ցասական ազդեցութեամբ անմեղ բռններ են:

Սակայն ինչո՞ւ գոթական վէպի այդքան մեծ սպառում:

Այդ բացատրում է դարիս տնտեսական, քաղաքական եւ հոգեւորա-
կան պայմաններով:

Մարդկային պատմութեան մէջ մեր այս դարն ամէնից այլանդակն է՝
իր բոլոր կողմերով եւ բովանդակութեամբ:

Նախ ամբողջ մտայնութիւնն զտնուած է նիւթի շուրջը: Նիւթը գարձել
է աստուած: Գոյարը գարձել է կուռք: Ասեմ, որ գոյար ասելով ես հասկա-
նում եմ աշխարհի բոլոր պետութիւնների դրամանիշերը: Նիւթական մտա-
յնութիւնից բացի, տիրող է նաեւ իրաւաբանականութիւնը: Այսինքն՝ համա-
տարած կեղծիքը: Սուտը օրուայ կարգախօսն է դառել: Սուտն են բոլորը,
որոնք ստելու առիթ ունեն: Բայց ամէնից շատ սուտն են կառավարութիւն-
ները: Նրանք սուտն են միմեանց եւ սուտն ու խաբուած են իրենց ժողովուրդ-
ներին: Միջազգային հիփոքրիթականութիւնը ահուկի չափերի է հասել:

Այս դարում մեզ, շարժային անգամներու համար, կեանքը ծանր է
դառել, շատ ծանր: Կառավարութիւնները վարակուելով «ժողովուրդների
հօր, աշխարհիս ամէնից իմաստունն ու մարդասէր արեւափայլ առաջնորդի»
«կեանքն ուրախ է դարձել, ընկելու, կեանքը երբեմնիկ է դարձել» կարգա-
խօսից, իրենց ժողովուրդներին նոյնն են կրկնում, երբ այդ ժողովուրդները
իրենց կեանքի կարիքները չեն կարողանում ծայրը ծայրին հասցնել եւ մեծ
մասով թշուառութեան մէջ են ապրում:

Մեր այս դարում անհատները ահաբեկուած են: Վախ՝ անտեսական դժուարութիւններից, վախ՝ հիւլէական պատերազմից, վախ՝ կեանքի պայմանների օրից-օր թանկացող սպառանալիքից, վախ՝ նրեխանների պատշաճ դաստիարակութեան համար չգոյ պայմաններից: Վախ ու ատրտափ: Սուր-սափ ու վախ:

Արդ՝

Այսօրուայ ընթերցողը կեանքի կոչութիւնից, կեղծ ու ձանձրալի ա-նօրեայից մի քանի ժամով փախչելու համար, մոռանալու համար, դիմում է սասիկանական, կամ՝ թէեւ ալիանդակ, բայց գոտցումները գրգռող «վէպե-րին»:

Այդ «վէպերը» հրատարակուած են թղթակաղմ, ուրեմն եւ համեմա-տաբար աման են: Դրանք իրենց շապիկի վրայ միշտ էլ ունենում են գունա-զարդ մի պատկեր:

Այդ գրքերով լեցուն են ամերիկեան դեղատները, դրախտութիւններ, լրագրային կրպակները:

Կարգում են բոլոր նրանք, որոնք կա՛մ կարողութիւն չունեն հասկա-նալու ճշմարիտ գրականութիւնը, կամ էլ նրանք, որոնք իրապէս չեն ուզում «գլուխ ցաւեցնել» ընթերցելու պատական համարուող գրականութիւնը:

Վերջում ասենք, որ թէեւ այս ակնարկը դրուեց գոթական վէպի վր-բայ, բայց նորից գոթական վէպը անմեղութիւնն է, այսօրուայ աշակէս կոչուող «Commercial» գրականութեան մէջ, որի միակ նպատակն է դրամը, ամենագոր, ամենասիրելի դրամը:

Ս. ՍԱՆՆԵԱՆ

Լ. Մ Կ Ր Տ Չ Ե Ա Ն

ՓԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՔԻ ՎԻՃԱԿԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

— Բ. —

Համախորհրդային այն պայմանները ուրուագծեցուց յետոյ, որոնց շրջանակում ընթանում է փիլիսոփայութեամբ զբաղւողների գործունէութիւնը, այժմ դառնանք բուն նիւթին՝ հայաստանեան իրականութեանը: Ես այս պարագայում ելուցաբերում եմ ամբողջ խորհրդային՝ աւելի քան յիսնամեայ ժամանակաշրջանը: Ճիշդ է, փիլիսոփայական մտքի զրսեւորման ծաւալի ու խտութեան առումով, այդ ժամանակաշրջանը իր բոլոր փուլերում նոյն ցայտունութեամբ չի ներկայանում, Համաչափ չէ, բայց եւ այնպէս՝ ամբողջութիւնը աչքի առջեւ ունենալը հսկան հանգամանք է:

Առհասարակ, փիլիսոփայական միտքը կարող է ներկայանալ կամ ներկայացուել երկու ճանապարհով: Առաջին ճանապարհը բուն եւ անմիջական փիլիսոփայական մակարդակի խորհրդածութիւններն ու դատողութիւններն են որեւէ նիւթի կամ դադափարի շուրջ, երբ մտածողն ու մտածողութեան առարկան են ներկայ միայն, պատմական ու աշխարհագրական արտաքին ու յաւելեալ կապերից անկախ: Դա անհատական մտածողութեան եւ ստեղծագործութեան ճանապարհն է: Եւ յատկապէս այդ ճանապարհն է, որ փակ է պահում խորհրդային պայմաններում, քանի որ անհատական ու ինքնուրոյն մտածողութիւնը փաստորէն օրէնքից դուրս է հոշակուած:

Միւս ճանապարհը՝ փիլիսոփայական մտքի արդէն գոյութիւն ունեցող դրա-

ւոր վկայութիւնները համեմատելու, համադրելու եւ դասակարգելու փորձերն են: Կարճ ասած՝ փիլիսոփայութեան պատմութիւնը: Այդ դէպքում եւս, ի հարկէ, մտածողն ու մտածութեան առարկան են դէմդիմաց դտնուում, ջանք է թափւում մերձանել ու իմաստաւորել առարկան եւ կապ հաստատել աւելի կամ պակաս անկապ իրողութիւնների միջեւ: Բայց այս անգամ ջննութեան զառարկան» տարբեր է թէ՛ ծաւալով եւ թէ՛ բնոյթով, երբ մանաւանդ ներկայանում է միջնորդաբար, բազմաստիճան փոխանցումների ճանապարհով:

Փիլիսոփայութեան պատմութիւնը բաւ հուժեղան նման է միւս յուրը պատմութիւններին: Պատմութիւնը դրողը ընդհանրապէս պատմաբանի հայեցակէտից է դիտում իր առջեւ փռուած պատմական իրականութիւնը: Բայց փիլիսոփայութեան պատմութեամբ զբաղուողը, պատմագրական հետաքրքրութիւններից եւ ունակութիւններից բացի, պէտք է նաեւ իրազեկ լինի բուն փիլիսոփայական մտածողութեան ներքին առանձնատկութիւններին: Ուրեմն, փիլիսոփայութեան պատմութեամբ զբաղուելն էլ փիլիսոփայութիւն է, փիլիսոփայական մտքի արտայայտութիւն:

Խորհրդային պայմաններում, շնորհիվ բոլոր կաշկանդիչ հանգամանքների, փիլիսոփայներին համար համեմատաբար լայն ու քիչ թէ՛ շատ տանելի հնարաւորութիւններ կան հենց փիլիսոփայու-

թեան պատմութեանն ասպարէզում: Այդ առիթով է, որ կարելի է նաեւ քիչ թէ շատ սեփական տեսակէտներ արտայայտել, պատմութեան անցած ուրիշներին տեսակէտները շարադրելու ընթացում:

Փիլիսոփայական միտքը կորհրդային Հայաստանում, ամբողջութեամբ վերցրած, արտայայտուել է թէ՛ առաջին եւ թէ՛ երկրորդ ճանապարհով: Ի Հարկէ, ինչպէս որ արդէն ասուեց, առաջին ճանապարհը փաստորէն փակ է եւ, Հետեւապէս, փակ ճանապարհով անկարելի է որեւէ շօշափելի բան արտայայտել: Բայց այդ «փակութիւնն» ունի իր իւրայատուկ կողմերը, աջպէս որ՝ գործնականում չեն բացաւում յատկանշական ու անխուսափելի կողանցումները: Դրանցով Հանդերձ, այդ եղանակով ձեռք բերուած փիլիսոփայական բերքն այնքան աննշան է, որ, բծախնդիր լինելու զէպքում, կարելի կը լինէր բոլորովին անտեսել ու դրա փոխարէն զբաղուել միայն փիլիսոփայութեանն պատմութեանն բնագաւառում ձեռք բերուած քիչ թէ շատ վաւերական արդիւնքներով:

Սակայն անտեսելն անկարելի է՝ Հետեւեալ երկու նկատառումով:

Նախ՝ փիլիսոփայութեամբ Հետաքրքրուելն ու գրողուելն արդէն ինքնին որոշ բան է նշանակում, անկախ գրաւոր ու Հրատարակարկին վկայուած արդիւնքներէ: Իսկ Հայաստանում, անցեալ տասնամեակների ընթացքում, փիլիսոփայութեամբ Հետաքրքրուողներ ու զբաղուողներ իսկապէս եղել են եւ կան: Այդ պարագան պէտք է արձանագրուի: Այնուհետեւ՝ որքան էլ անինքնուրոյն լինեն փիլիսոփայութեան անունով Հրատարարուած շարադրանքները, գրանք արտադրում են մարդկային մի որոշակի վիճակ, պատմական որոշակի ժամանակաշրջան ու Համապատասխան մտայնութիւն, ինչ որ նմանապէս արժէ գտնէ արձանագրել, ի տեղեկութիւն անտեղեակներին:

55 արբուայ կորհրդային ժամանակաշրջանը Հայաստանի Համար փոքր ժամանակաշրջան է: Այն ամէնը, ինչ որ

այդ ընթացքում դրսեւորուել է նաեւ փիլիսոփայութեան ասպարէզում, որքան էլ միակողմանի եւ սահմանափակ լինի, բաւականաչափ նիւթ է արամագրում այս կամ այն ծաւալի պատմութիւն գրելու Համար: Իմ կողմից ներկայացուող բուն իմաստով պատմութիւն չէ, ի Հարկէ, այլ Համառոտ ակնարկ՝ Հանդուցային իրողութիւններէ ժամանակադրական յարողականութիւնը պատկերելու, ինչպէս եւ փիլիսոփայական մտքի ընդհանուր վիճակը բացայայտելու եւ բնութագրելու փորձ:

Պատմութիւն գրելու Համար շատ բուն է Հարկաւոր՝ նիւթը ընդգրկելու ճանապարհին: Բայց նմանապէս շատ բան է Հարկաւոր, թէ՛ ոչ նոյնքան, նաեւ Համառոտ ակնարկ գրելու Համար, եթէ իսկապէս ժողովրդութիւն կայ բացայայտել իրականութեանն էական առանձնատկութիւնները: Ահա թէ ինչու սոյն ակնարկը եւս կարելի է Համարել որչափի Հետաքրքրութիւնների, կուսակուսաների եւ Հետազոտութիւնների բնական արդիւնք:

Փիլիսոփայական մտքի Հայաստանեան վկայութիւնները արձանագրուած են առանձին աշխատութիւններում, ուսումնական զասրնթացքներում, այլեւայլ ժողովածուներում եւ, մասնաւոր՝ Համապատասխան պարբերականների էջերում: Ժամանակ առ ժամանակ, յոբելեանական առիթներով տպուած Հանդէսների յատուկ Համարներում կամ ժողովածուներում, յետագայում կարգով ամփոփուած են անցած ճանապարհի տեսանկի տրդիւնքները, բայց նման զէպքերում, իրեւ կանոն, մարդկային մերկ անուններէ ու զբերի նոյնպէս մերկ վերնադերից բացի Հիմնաւոր ոչինչ չի ասուած Հեղինակներին ինքնութեան ու փիլիսոփայական վաստակի վերաբերեալ: Դա պարմտաւորուած է, անշուշտ, նաեւ յիշեալ ամփոփումների ծաւալով ու ընդթով:

Միակ Հրատարակութիւնը, որի մէջ անՀամեմատ մանրամասնօրէն են ներկայացուած Հայաստանեան փիլիսոփայական

մտքի արտայայտութիւնները, Նորայր Գասպարեանի «Փիլիսոփայական միտքը Սովետական Հայաստանում — 1920-1960» աշխատութիւնն է: Աշխատութիւնը տպուել է 1963 թուականին Համալսարանի Հրատարակչութեան կողմից: Համապատասխան բացատրականում ասուում է, թէ գիրքը հեղինակի «20րդ դարի հայ փիլիսոփայական մտքի պատմութիւն» աշխատութեան երկրորդ մասն է, բայց մինչև հիմա, ի պէս, առաջին մասը դեռ չի հրատարակուել: Այսպէս թէ այնպէս, Գասպարեանի աշխատութիւնը խորհրդահայ փիլիսոփայութեան պատմութիւնը շարադրելու միակ ամբողջական փորձն է:

Հեղինակն այդ պատմութիւնը պարբերացնում է ըստ խորհրդային երկրում ընդունուած օկղբունքների, համապատասխան կարգով նիւթը բաշխելով երեք անհամաչափ բաժիններ մէջ: Ահա բաժինների բովանդակութիւնը.

- 1) «Սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջան» (1920-1937),
- 2) «Սոցիալիզմի ժամանակաշրջան» (1937-1952),
- 3) «Կոմունիզմի ծաւալում կառուցման ժամանակաշրջան» (1953-1960):

Սա բխում է համախորհրդային պարտադիր կադապտաներից եւ այլ կերպ չէր կարող լինել:

Բայց ինձ համար այդ պարբերացումը զուրկ է իրական հիմքից: Ինչպէս որ բնկերային ու քաղաքական առումով՝ «սոցիալիզմի» կամ «կոմունիզմի կառուցման» նշանախօսքերով պայմանաւորուած պարբերացումները ըստ էութեան անիմաստ են, այնպէս էլ փիլիսոփայութեան նկատմամբ երկրաչափական ու արհեստական սահմանափակումները չեն կարող արդարացուել, թէեւ ժամանակային մտաւոր ու պայմանական խմբւորումները առհասարակ հնարաւոր ու նաեւ անխուսափելի են, մասնաւոր խորհրդային պայմաններում, որտեղ պետական քաղաքականութեան ելիւէֆները

ճակատադրական հետեւանքներ են յարուցում նոյնիսկ փիլիսոփայութեան բնագաւառում:

Եւ ահա այդի առջեւ ունենալով զուտ Հայաստանեան «փիլիսոփայական նիւթը», նրա դրսեւորուած գրաւոր վկայութիւնների ծուալը, խոտութիւնն ու բնայութիւնը, կարելի է պատմական ամբողջ ժամանակաշրջանը մտաւորապէս կիսել, ջրբաժան դիժ համարելով 1914 թուականը, այսինքն՝ ընդունել փիլիսոփայութեան պատմութեան երկու գլխաւոր փուլեր, որոնցից առաջինն ընդգրկում է 1920 թուականից մինչև 1944 թուականը, իսկ երկրորդը՝ 1944ից մինչև մեր օրերը:

Բնականաբար, սա չի նշանակում, թէ յիշեալ փուլերում, իւրաքանչիւրն առանձին գերցրած, փիլիսոփայական միտքը անրնդհուտ դրսեւորուել է միատեսակ, միեւնոյն կլոնիքով եւ ուղղութեամբ: Բուն պատմութիւն գրելիս, ի հարկէ, կարելի է իւրաքանչիւր փուլ նոյնպէս ստորաբաժանել, քանի որ դրա համար բաւարար հիմքեր կան: Սակայն միայն գլխաւոր յատկանիշները հաշուի առնելու դէպքում՝ երկու գլխաւոր փուլերը լիովին բնութագրում են պատմական իրականութիւնը, կամայական չեն եւ յենում են փաստական անվիճելի տուեալների վրայ:

Առաջին փուլում փիլիսոփայութեամբ զբաղուողները Հայաստանում թուով քիչ են: Փիլիսոփայութիւնը կենտրոնացուած է սոսկ մարքս-լենինեան դոյթների կազմադրային եւ ընդօրինակած արծարծումների վրայ: Այդ փիլիսոփայութիւնը ո՛ր միայն լիովին միահիւստուած է քարոզչական միջոցառումներին, այլև ուղղակի փոխարինուած է քարոզչութեամբ: Երկրորդ փուլում եւս, բնականաբար, մենաշնորհ մարքսիզմ-լենինիզմին է պատկանում: Սակայն ակնյայտ են եւ քանակական ու որակական փոփոխութիւնները, նոր տարրերի երեւան գալը: Փիլիսոփայութեամբ զբաղուողներ թիւն անհամեմատ մեծ է: Մասնագիտական առումով զգալի է բազմեքանդութիւնը,

Տիրույթին ու հետազոտական սահմանափակումները: Փիլիսոփայական ընդլրկումները ասպարեզը նախորդից նկատելիորեն լայն է եւ գնալով լայնանում է: Իսկ, ամէնից կարեւորը, հայ փիլիսոփայութեան պատմութիւնը դառնում է մասնագիտական ու հետազոտական հետազոտութիւնների նիւթ, ինչ որ նորութիւն է՝ թէ՛ բոլոր ձեւի եւ թէ՛ ըստ բովանդակութեան:

Հայաստանեան փիլիսոփայական մտքի տեւիչ քան 50ամեայ պատմութեանը անդրազտանալիս, խորհրդային հեղինակները սովորաբար չեն սահմանափակում 20ական թուականների երեսայթներով: Քանի որ պատմական դաստիարակութիւնը, իր փիլիսոփայութեամբ հանդերձ, մարքսիզմ-լենինիզմն է, անհրաժեշտ է համարուած ներկայացուող նիւթի ծննդաբանութիւնն սկսել հայաստան այն մարդկանցից, որոնք մասնանակին ծառայողներն են լենինեան շարժմանը, կարգադրել եւ ծանօթ են եղել մարքս-լենինեան դրականութեանը ու իրենք էլ որոշ թուով յօդուածներ են գրել մամուլի համար:

Ճիշդ նոյն ձեւով իրրեւ փիլիսոփաներ են ներկայացուած այն անձինք, ովքեր 20ական թուականներին աչքի բնկնող պաշտօններ են վարել իշխանութեան զօրով եւ միտածանակ դրական որոշ հետաքրքրութիւններ են ունեցել: Այդ մտեցումը հետապնդում է մի շարք նրպատակներ, որոնք որեւէ առնչութիւն չունեն ս'չ փիլիսոփայութեան, ոչ էլ նրա պատմութեան հետ: Դա կոմունիստ գործիչներին ամէն գնով առասպելականացրելու, ամենագէտ ու ամենակարող ներկայացնելու քաղաքականութեան արտայայտութիւններից մէկն է եւ ոչ մի, նոյնիսկ նուազագոյն, քննութեան չի կարող դիմանալ:

Ի հարկէ, յիշեալ կարգի կոմունիստ գործիչները անդրազէտ չէին, զպրոց ու նոյնիսկ համալսարան էին յաճախել, չէին շարժել, իրենց չափով խօսել ու գրել գիտէին, որոշակի հետաքրքրութիւններ ու աշխարհի մասին պատկերա-

ցումներ ունէին, ինչպէս եւ հանրային գործունէութեան բաւական ունակութիւններ եւ փորձ: Բայց դա չի նշանակում, թէ նրանցից իւրաքանչիւրը միատանակ կարող էր լինել, այն էլ առաջնակարգ, քաղաքագէտ, տնտեսագէտ, ռազմագէտ, գրականագէտ, արուեստան, փիլիսոփայ, եւ այլն: Նոյնիսկ իսկապէս ռազմակողմանի հետաքրքրութիւններ դեռեւս մտաւոր առաջնակարգ ու օրինակիլի մակարդակի հասնելու ապացոյց չեն, ոչ էլ անմրցելի վաստակաւորի պիտակ կրելու արդարացում:

Սակայն տասնամեակներից ի վեր Տիրույթ այդ սկզբունքն է գործադրուած խորհրդային ու հայաստանեան հրատարակութիւններում, երբեմն թոյլ, երբեմն էլ ցայտուն արտայայտութեամբ: Գորութիւն ունի զականուար գործիչներն՝ մի ցանկ, որոնց անունները ներկայացուցչական են զարմուտ գրեթէ անխտր բոլոր բնագաւառների համար, երբ հարկ է լինում շարադրել հասարակական կեանքի ու մշակութիւն այս կամ այն ուղղութիւնով պատմութիւնը: Փաստական ու արժէքային դատարկութիւնը, այդպիսով, լցուած է մերկ ու ոչինչ շատող անուններով, որով եւ խախտուած է իրականութեան պատկերը:

Այս պարագան նշելիս, մտքովս չի անցնում կարծել, թէ հայաստանեան հեղինակները, զոնէ նրանցից առաւել արժանաւորները, չեն տեսնում ու չեն հասկանում նման մտեցման անհեթեթութիւնը: Բայց տուեալ դէպքում նկատի ունեմ սոսկ այն, ինչ որ ի տես ամէնքի արևում եւ գրւում է, քանի որ, այլապէս, անկուրելի է թափանցել շարտայառուած մտքերի ոլորտը: Անվիճելին այն է, որ զականուար կոմունիստ գործիչներին բոլոր ասպարէզներում ցուցադրելու սովորութիւնը համախորհրդային հիւանդութիւն է, համահարակ, որից պաշտպանուելու միջոցներից զուրկ է նաեւ Հայաստանը, անկախ իր բունած տարածութեան չափից, բնակչութեան թւաւոր ու կենդանի մտաւոր ուժերի բուն տրամադրութիւններից եւ արժանատութեան աստիճանից:

Ուրեմն, փխխոփայութեան պատմութիւնը դրոզները եւս չեն կարողանում շրջանցել զազանաւոր դործիչներին ու պարտականութեան կարգով նրանցից շատերի տեղ են տալիս իրենց համապատասխան շարադրանքներում: Քանի որ փաստական ու համոզիչ աւելիքներ չըկան, սովորաբար անհուսալի յիշատակում են այդ օժանդակ ու փոխարինող «փխխոփաների» անունները եւ ազատ ծածկում ընդհանուր ու չպարտաւորեցրնող արտայայտութիւնները փրփորով:

Եւ, ի հարկէ, այդ ուղղութեամբ շարժուելու հարկադրանքի տակ չեմ եւ ազատ եմ զականաւորներին» շրջանցելու հարցում, քանի որ նպատակս է անզրադառնալ բուն փխխոփայական մտքին:

Սկզբից եւեթ հարկաւոր է շեշտել, որ ԼԹԷ բուրգովին լուրջ ընդունենք «փխխոփայ» բառը, — իբրեւ թէ՛ ներքին ինքնարուխ հետաքրքրութիւնների ու հակումների եւ թէ՛ զրաւոր վաւերական աշխատութիւնների ամբողջական գումար, — ՉՍական եւ ՅՍական թուականների հայաստանեան իրականութիւնը գրեթէ հաւասար է զերսի: Որովհետեւ չկայ մէկը, որին ինովին պատշաճի «փխխոփայ» արտայայտութիւնը: Այդպիսին է կացութիւնը, որի պատճառները վերլուիչու եւ կրկնելու հարկ չկայ, երբ ընդհանրապէս դիտենք, թէ ինչ է նշանակում բռնակալութիւն, ազատութեան բացակայութիւն, խաւարամոլութիւնը բռնեցք, եւ այլն:

Բայց հայոց պատմութիւնը հնուց ի վեր նշանակելի թուով փխխոփաներ է ճանաչում: Հայ իրականութեան մէջ շեշտուած յատկանիշներով փխխոփաներ կային եւ Հայաստանի խորհրդանշանաձից առաջ ու նոյնիսկ յետոյ՝ Սփիւռքում, որոնց անունները այս կամ այն շափով յատնի են եւ այստեղ յիշատակելու հարկ չկայ: Բացառութեան կարգով բաւական է յիշել թէկուզ Երուանդ Փռւանդեանի անունը, որը իսկապէս եւ միայն՝ հասարակագիտական թեքումով փխխոփայ էր, մտածողութեամբ, հետաքրքրութիւններով եւ վաստակով:

Բայց այսպէս ասած «մաքուր փխխոփաների» բացակայութիւնը չի խոչըրում, որպէսզի, այնուամենայնիւ, թօսուի հայաստանեան փխխոփայական մտքի գոյութեան մասին, ՉՍական եւ ՅՍական թուականների շրջանակում: Ուրովհետեւ բուն եւ ամբողջական փխխոփաները միշտ էլ եւ ամենուրեք առկաութիւ են լինում, մինչդեռ փխխոփայական միտքն ինքը անհամեմատ շատերի է գայելում: Դա արտայայտուած է «փխխոփայական մտածողութեամբ», որը եւ կարելի է հիմք ընդունել փխխոփայական գանձակալովը ընտրելու եւ ներկայացնելու ճանապարհին: Սակայն «փխխոփայական մտածողութիւնը» զուտ անձնական ու բնական յատկութիւն է եւ կարող է ներկայ լինել նոյնիսկ փխխոփայութեամբ հրապարակութիւն չըրազուողներին՝ ընդհուպ մինչեւ ամենահասմաստ դասերի պատկանող մարդկանց մէջ: Պարզ է, որ բոլորն էլ չեն կարող հուշուի անուել տղազիք շարադրանքներում: Հաշուի են առնուած միայն նըրանք, ովքեր հանրաճանաչ դժգոյք են, ունեն դրական որոշակի վաստակ եւ ընդամին աչքի են ընկնում «փխխոփայական մտածողութեամբ»:

Ահա այս սկզբունքով է, որ պիտի ջանամ բնութագրել ՉՍական եւ ՅՍական թուականների հայաստանեան որոշ դժգոյքերի, երկնով այն ներքին համոզումից, որ նրանց յատուկ էր «փխխոփայական մտածողութիւնը», անկախ նրանց դիրքերից, միջախարի պայմաններից եւ նոյնիսկ նրանց գրած ու հրատարակած աշխատութիւնների բովանդակութիւնից ու արժէքից: Սա, թուում է, իւրայատուկ մտեցում է, բայց ինձ համար միակ ճիշդն է այժմ:

Բայց իմ խօսքն առիւց առաջ անտեղի չեմ համարում մի փոքրիկ հատուած մէջբերել Նորայր Պատարեանի արդէն յիշատակուած գրքից, որտեղ թըւարկում են 1920-37 թուականների փխխոփայական առաջադրանքները: Ահաւասիկ.

«Աշխատաւորութեան կոլտուրա-

կան-ֆազաճանկամ դաստիարակութեամբ, ասել է թէ ճանաչող փիլիսոփայութեան գծով առաջնակարգ ճշմանակութիւն ունեւին հետեւեալ հարցերը: Պայժարագրային-նացիոնալիստական ամեն տեսակի հայեացքների եւ արմատաւորումը բարբոսի դէմ, ինտերնացիոնալիզմի սզով դաստիարակութիւնը, գիտա-աթէիստական արծազանդան եւ եկեղեցու ռեակցիոն, հակասովետական գործունէութեան մերկացումը, պայքար անցեալից ստացւած լաւագոյն ժառանգութեամբ համար, անցեալի կուլտուրայի մկատմամբ ճիշտիզմի, այսպէս կոչուած՝ պրոլետարիստականների, մարքսիզմ - լենինիզմի խորք հասանքների ու հայեացքների, տրոցկիզմի եւ այլ օպորտունիզմի դէմ: Ահա այդ ուղղութեամբ իրենց գործունէութիւնը ծաւայեցիմ սոցիալիզմի կուլտուրայի շրջանի (1920-1937 թթ.) փիլիսոփայական ըմբռանալի աշխատողները:

Այդ էր, ընդամէնը, Հրայրաբեկային փիլիսոփայութեան բոյանդակութիւնը...

Հայաստանեան փիլիսոփայութեան անդրադառնալիս տեղին է նախ յիշել Հայկ Գիւլիքեախեանի (1885-1951) անուանը: Նա շուշեցի է, սկզբնական կրթութիւնն ստացել է Ծննդավայրում, իսկ 1906-1914 թուականներին ուսանել Գերմանիայի Համալսարաններում (Ենս, Հայպիդ, Հայդելբերգ), նաեւ Ճիւրիխում՝ յատկապէս փիլիսոփայութեան գրծով: 1914-18 թուականներին անտեղ արդեւստիկոն է իրրեւ ուսուցչատակ: 1918-20 թուականներին գործել է Ռուսաստանում (Աստրախանում): Հայաստանի խորհրդայնացումից յետոյ գրադուել է զանազան գործերով (քարոզչութիւն, մամուլ, Համալսարան, զանազան գիտական Հաստատութիւններ, եւ այլն): Կուսակցութեան մէջ էր 1906 թուականից եւ մասամբ տուժեց ստալինեան ջարդերի ու Հալածանքների ժամանակ:

Գիւլիքեախեանը օւնէր փիլիսոփայական Հիմնաւոր կրթութիւն, նոյնպիսի մտածողութիւն, նախապէս պատրաստուել էր այդ ասպարէզի Համար, բայց իրականում աւելի շատ անուան էր Համարաւեր, քան գործ: Նա, եղիչէ Չարենցի բաւերով ասած, «Երկար ասլրից, բայց հերոսաբար ոչինչ չգրեց»: Նրա անուանով յատնի են սակաւթիւ յօդուածներ ու յատուածաւարքեր՝ գրականութեան, թատերագրութեան, գեղագիտութեան կապակցութեամբ, եւ ծոյնքան թիչ գրքեր («Սովետական դրամատուրգիայի մասին», 1948 թ., «Պննդատուական յօդուածներ», 1955 թ.): Թէեւ Համարաւարանական անուանի ու սիրուած դասարիօս էր, յեղուներ իմացող ու զիտեյիքներ ունեցող Հմուտ անձնաւորութիւն:

Ուրեմն, իր տեսակի վրիպած փիլիսոփայ: Այդ ճակատողիբը չի կարող իր պատշաճ բացատրութիւնը շունհնալ: Յիբուել, բարեկիրթ ու զգալուն Գիւլիքեախեանը ենթակայօրէն ու առարկայօրէն անկարող էր բացուել զիւտեյիների իշխանութեան ներքոյ: Նրա կեանքի գտնադան շրջանների վերաբերող կողմնակի վկայութիւնները, որոնք երեւացել են մամուլում կամ յուշագրութիւններում, միարեան Հաստատում են, թէ ինչպիսի՞ յուսահատօրէն ուղերգական ասպրումների միջով է անցել Գիւլիքեախեանի ճանապարհը, թէեւ նա ինքը բուական ժամանակ չձախերի ճակատին էր պատկանել իրրեւ գրական գործիչ:

Գիւլիքեախեանի հետ իր սերնդի մարդկանցից կարելի է Համեմատել միայն Արշալիբ Մելիքեախեան (1879-1937): Նրա զհերոսութիւնը մի թիչ պակաս էր, որովհետեւ Համեմատաբար աւելի շատ է գրել զանազան նիթերի շուրջ, որոնք, սակայն, դարձեալ ցրուած են ու անկարգ, եւ շարդրուած՝ հեղինակի կարողութիւններից թերեւս ցածր մակարդակով: Նա եւ օւնէր Հասարակագիտական ու փիլիսոփայական բուական լայն հետաքրքրութիւններ, ի վիճակի էր մընաբար գործ կատարել, եթէ այլ լինէին պայմանները: Ինքնին Հակականի է, որ Մելիքեախեան եւս զուգ զնաց ոտալինեան ջարդերին:

Գիւլիքեւիտեանը եւ Մելիքեանը ներկայացուող ժամանակաշրջանում արդէն «Հին սերունդի» մարզիկ էին: Բայց նոյն ձեւով վրիպեցին նաեւ խորհրդային օրօք անած երիտասարդները: Երիտասարդների այդ սերնդի ցայտուն ներկայացուցիչն է Լեւոն Արխանը (1903-1938): Նա վանեցի է, նախնական կրթութիւնն ստացել է ծննդավայրում («Նորմեան» դպրոցում): Այնուհետեւ օպերել է դաշքի Հեռ կապում անհրապոյր կեանքով, շուրջ քաղաքից քաղաք: Հաստատնի խորհրդայնացումից յետոյ վարել է ընթացիկ դրժներ՝ կոմերիտական, կուսակցական, պետական, Համալսարանական եւ այլն քննադատներում: Երկու անգամ՝ լուսաւորութեան ժողովրդական կոմիտար: Ուսանել ու նաեւ աշխատել է մոսկովեան Հաստատութիւններում, այնտեղ էլ գրել փիլիսոփայական յօդուածներ:

Արխաննի մտաւոր կարողութիւնները եւ բարոյական արժեքները հանրայն էին իր ժամանակ: Բնականոն պայմաններում նա հոկայական դրժ կարող էր կատարել նաեւ փիլիսոփայութեան դժով: Բայց նրա յօդուածները յոյս տեսան առաւելագոյն մոսկովեան Հանդէսներում՝ ներկուսակցական բուն բախումների մթնոլորտում, եւ կարելի է մտաւորէն ասել, որ նա իր ուժերը մեծ մասամբ, կամայականօք, գտնում էր անցողիկ ու անպտուղ վիճարանութիւնների սիրոյն: Ուրեմն, մեծ մասամբ ազդեցիկ ուրիշների ձայնափող էր, այլ ոչ թէ սեփական անհատականութեան արտայայտութիւն:

Բայց դա չէր եղաւ: Արխանը 35 տարեկան՝ մտաւոր ծաղկման հասկում նաեւ մարմնով զոհուեց ստալինեան ջարդերի ժամանակ: Շատ ասելի ուշ, չխտմաճու վարկափրկումից յետոյ, Երևանում 1957 թուին տպուեց նրա ուսերէն յօդուածների ժողովածուն՝ «Իմացութեան տեսութեան պատմութիւնից» վերնագրով: Արխանը մասնագիտանում էր նախամարքսեան փիլիսոփայութեան քննադատում՝ յատկապէս իմացարան

նութեան դժով (Արխատտեւ, Լոկ, Գանտ, եւայլն):

Արխաննի սերնդին է պատկանում Վահան Մարտեանը (Մարտիրոսեանը): Մարտեանը ծնուել է 1906 թ. Սասունում: 1930ական թուականների Հայաստանեան Հասարակագիտական մամուլի աչքի ընկնող ու աղճկայարոյց դէմքերից մէկն էր նա: Վարել է զանազան կուսակցական ու քարոզչական պաշտօններ: Ստալինեան ջարդերի ժամանակ անուանարկուել ու հայածուել է, ուստի եւ Հրապարակից լիովին չբացել: Նորայր Փասպարեանի 1963ին ապուած գրքում նշուած է Մարտեանի միայն ծննդեան թուականը: Դրանից պէտք է ենթադրել, որ այն ժամանակ նա դեռ ողջ էր: Բայց Հայաստանեան մամուլի էջերում նրա գոյութիւնը ոչ մի տեղ, որքան ինձ յայտնի է, չի արձանագրուած եւ առհասարակ բոլոր արձանագրիլի աղբիւրները ծայրայեղօրէն ժլատ են նրա վերաբերեալ:

Սակայն դա չի կարող սքողել բուն պատմութիւնը: Մարտեանը եղել է, գործել, գրել, ետանդով մասնակցել Հասարակագիտական ու փիլիսոփայական վիճարանութիւններին: Ինձ համար տուեալ դէպքում կարեւոր չէ, թէ նա ուժով կամ օգտին ինչ է ասել, ինչպէս է Հիմնաւորել իր գրոյթները: Կարեւորն այն է, որ նա ունէր փիլիսոփայական մասնագիտութիւն, համապատասխան հետաքրքրութիւններ, Հրապարակախօսական շնչաւուած ջիւղ ու ետանդ: Դրա ամէնից ցայտուն վկայութիւնը Սպինոզայի փիլիսոփայութեան վերաբերեալ լոյս տեսած բովանդակալից դիրքն է, որը իր ժամանակ շատ կողմերով եզակի երեւոյթ էր եւ էական նպաստ Հայալեզու փիլիսոփայական դրակնութեան անդաւաճում: Դա փիլիսոփայական մեծ աշխարհի կողմն ուղղուած լայն պատուհան էր Հայաստանում:

Փիլիսոփայութեան ապարկզում առուել աչքի բնկած ու պատնէշի վրայ մնացած դէմքերից է Հայկ Սայանեանը: Սայանեանը ծնուել է 1903 թուին, Կողբում: 1923-1926 թուականներին Թիֆլի-

սում սովորել է «26 Կոմիսարների ան-
լան Անդրկովկասեան Կոմունիստական
Համալսարանում», այդ՝ (1926-1929)
Փիլիսոփայութեան ամբիոնի ասպիրան-
տուրայում, որից յետոյ աշխատել նոյն
Հաստատութեան մէջ: 1931 թուից՝ Հա-
լաստանում, զբաղուելով գրեթէ բացա-
ռապէս դասախօսական, հետազոտական
եւ գրական աշխատանքներով: Գիտու-
թիւնների Ակադեմիա հիմնուելուց յետոյ
երկու անգամ (1944-1948, 1956-1960) ե-
ղել է Փիլիսոփայութեան սեկտորի վա-
րիչ, Հասարակագիտական Հանդիսի խմբ-
ազդիւր, եւ այլն:

Այսանեանի գործունէութեան Համար
Եւրոպայից է 1931 թ. Երեւանում տըպ-
ւած «Ռիալիստիկական մատերիալիզմ»
ստուգարածաւալ դասագիրքը, իրբեւ Հա-
լաստանում հրատարակութեան 1965ին լոյս
տեսաւ նրա «Յատադիմութեան գաղա-
փարը բուրժուական պատմափիլիսոփա-
յութեան մէջ» գուշակէն մենագրութիւ-
նը, որը, ըստ երեւոյթին, փիլիսոփայու-
թեան դոկտորի գիտական աստիճան ըս-
տանալու դիմեալագիտայի մշակուած շա-
րադրանքն է:

Այսանեանը սկզբից մինչեւ հիմա
մասնագիտացել է որոշակի բնագաւա-
ռում ու Հաւատարիմ մնացել իր նախա-
սիրութիւններին:

Այսանեանի սերնդից է Հենրի Գար-
րիէլեանը: Գարրիէլեանը ծնունդ է 1903
թուին, Վասպուրականի Պատականց
գիւղում: Պատանի տարիքից, ըստ որոշ
վկայութիւնների, ցուցարարել է դիտա-
հետազոտական Հետազոտութիւններ,
այնուհետեւ գրել բազմաթիւ աշխատու-
թիւններ, մինչեւ հիմա: Գարրիէլ է ասել,
որ Հայաստանի ամենաբեղուն փիլիսո-
փան է, այսինքն՝ «փիլիսոփայական բը-
նագաւառի աշխատողը»: 1928ին աւար-
տել է Երեւանի պետական Համալսարա-
նը, 1933ին՝ Մոսկուայի «Կարմիր Պրո-
ֆեսուրայի» Ինստիտուտը, 1937ից՝ պրո-
ֆեսոր է, 1945ից՝ փիլիսոփայական դի-

տութիւնների դոկտոր: Հիմնականում
գրադուել է դասախօսական աշխատան-
քով՝ Համալսարանում եւ այլուր: Մի
շարք տարիների վերաբերեալ կենսագ-
րական տուեանները աղօտ եւ շատ սնո-
րոշ են:

Գարրիէլեանի փիլիսոփայական գոր-
ծունէութիւնը յատկօրէն կարելի է բա-
ժանել երկու փուլի՝ նախապատերազմ-
եան եւ յետպատերազմեան: Առաջին
փուլում նրա աշխատութիւնները վերա-
բերում են Հասարակական ընդհանուր
ինդիւնների, ըստ էութեան գերակշռում
է ընթացիկ Հրատարակութեան տար-
րը: Հայկական նիւթը շատ քիչ է. լինելու
դէպքում էլ հեղինակի օգտին չի վկա-
յում, բանի որ առաւելագոյն ուղ-
ղւած է ազգային ըմբռումների դէմ:
Երկրորդ փուլում առանցքային դրաղ-
մունք է դառնում յատկապէս Հայ փիլի-
սոփայութեան պատմութիւնը, թէեւ չեն
անհետանում եւ ընդհանուր հետազոտ-
ութիւնները:

Ինչպէս նշուեց, Գարրիէլեանը նկա-
տելիօրէն առատազրի հեղինակ է: Ծածա-
նակին Հայաստանեան մամուլի մնայուն
եւ աչքի բնկնող գրիչներից մէկն էր:
Նրա «անհամար» յօդուածները չհաշ-
ւած, արժէ հետազոտութեան Համար
նշել առանձին գրքերի վերնագրերը:

«Նացիոնալիզմի թեորիայի եւ պրակ-
տիկայի քննադատութիւնը», 1930 թ.,
«Հասարակական գարգացման օրի-
նաչափութիւնները», 1932 թ.

«Հայկական մեծնիզմի արդի փիլի-
սոփայութիւնը», 1934 թ.

«Հեղուի գարգացման թեորիան եւ
մարքսիզմ-լենինիզմը», 1935 թ.,

«Թաճուր դասակարգի ինքնագիտու-
ցութեան պրոցեսը եւ մարքսիզմի առա-
ջացումը արդէս գիտութիւն», 1936 թ.:

Մրանք առաջին փուլի աշխատու-
թիւններն են: Երկրորդ փուլի յատկա-
նշական ուսումնասիրութիւնների վերա-
բերեալ խօսք կը լինի յաջորդ գլխում:

(Շար. 2)

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ



«ԼՕ»

(ԻԳՆԱ ՍԱՐՋԱՍԼԱՆ)

Համաշխարհային Երկրորդ պատերազմից հետո, բանաստեղծության ամենազական կաղապարները խորտակող ֆրանսացիներուն սկսած շարժումը ամենն առաջ, եւ անշուշտ հասկնալի պատճառներով, արձագանգ գտաւ պոլսահայ ճակատին վրայ: Հարապատ մշակոյթի մը աւշառատ ամենազակներուն մէջ անհատականութիւն կազմելու հնարաւորութենէն պուրկ երիտասարդութեան մօտ յաճախադէպ է այս պարագան եւ պոլսահայ երիտասարդները, բնական է, բացառութիւն պիտի չկազմէին: Այդ ազդեցութենէն ստաւելազոյն չափով մը դուրս մնաց միայն Զարեհ Խրախունիսի, եւ տարրեր եղաւ պարագան Արսէն Ճանեանի, որ հողի մը վրայ կոխած ըլլալու ենթահողով մը չէր քաջացուց խորթ խոժոժները:

Ֆրանսայէն փչող նոր հոմերուն ամենն աւելի առաջատար բացողը եղաւ Զահրատ, որ սակայն շնորհիւ իր բնատուր շնորհներուն կրցաւ բանի մը ինքնատիպ պատկերներ թրթռացնել «Մեծ քաղաքը» անուն իր առաջին գործին մէջ, էջերուն մեծ մասը լափել տալով բանաստեղծութեան հետ կապ չունեցող անյոյզ բաներու:

Օտարներուն հետեւողութեամբ թուրքին նետուած Զահրատի այդ ճախորդ էջերուն ուղղակի արձագանգը կը թուի ըլլալ պոլսահայ նորերէն Իգնա Սարբասլանի «ԼՕ» խորագրեալ հատորը, որ «Ալեք

Մանուկեան գրական մրցանակ»ին կողմէ պատկուեցաւ 1973ին եւ լոյս տեսաւ յաջորդ տարի, Իսթամպուլ:

Հատորը մկրտուած է քնարական հերոսին անունով (Օ Լօ-Օ Լոյա-Լորա), կը բաղկանայ շուրջ հարիւր էջեր եւ կը հաշուէ հինգ բաժիններու վրայ բաշխուած հարիւրէ աւելի բերթուածներ:

Իգնա Սարբասլանի բանաստեղծութիւնները իբրեւ թեմա ունին ընդհանրապէս սէրը եւ ընկերային երեւոյթները, որոնք պատկերացուած են բնութեան երեւոյթներուն եւ առօրեայ փորձառութիւններուն գուգահեռաբար կամ հակադրաբար եւ կը հետապնդեն սիրապէղ, արդար, երջանկայորդ աշխարհ մը:

Նիւթն ու նպատակը, սակայն, ոչ մէկ առանձին նշանակութիւն ունին գրականութեան մէջ, եթէ անհատականացած չեն անոնք եւ պուրկ մնացած են կիպող կամ ցնցող ու առինջնող յատկութիւններէ: Այս իմաստով «ԼՕ» հատորին հարիւրէ աւելի բերթուածներուն մէջ հանդուրժելիներուն թիւը հալիւ տասի կը բարձրանայ: «Միրոյ երգս իմ ԼՕ», «Դժոխքի սեմին Ռոփէոս», «Միրոյ Նունուֆարը», «Փաթիլներ», «Դարձեալ», «Մանքա Լուչիա», «Եւ դուն», «Դղիպոսի աշքերը» եւ «Գծիկ մը» վերնագրուած կը տարներուն մէջ հանդիպելի են մտածումի ձեւեր, երբեմն թարմ շեշտեր, յուլումի ծուկներ ու ջերմութեան տարրեր: Թէեւ

ասոնք եւս կը տառապին խտութեան պակասէն եւ հեռու են գրական ծանր վերլուծումներուն զիմանալու տոկունութենէն:

Բանաստեղծութեան աւանդական ըմբռնումներուն արտաքին ձեւերը չկրկնելու հերոսութիւնը ոչինչ կ'արժէ, եթէ նաեւ բանաստեղծութեան անունով հանդէս եկող անձը ներքնապէս ինքզինք չէ նորոգած: Նոր երեւնալու իր ձեւերուն մէջ ոգեկան այնպիսի հնութիւն մը կը մատնէ Սարըսալան, որ շատ մօտէն կը յիշեցընէ միջնադարու ոտմանքիք դպիրները:

**Ծունկի եկեր եմ
տես
կը պաղատիմ Լօ
Մի մեղադրեր ցիս
մեղքցիր դիցուիքս**

Բուն պզտցումի մը մասին վկայելէ աւելի՝ սիրելու եւ եղբերական պայմաններուն մէջ սիրուելու ծնրազիր այս ոճերը մեր ժամանակէն բաւական հեռու կը նետեն ենթական եւ, մեղմ առած, ընթերցողին մէջ սիրային մթնոլորտ մը յուզելու փոխարէն՝ քմծիծաղի դուռ կը բանան: Այդ ծնրազիր պատկերին ի տես ի վերջոյ մեղքնալէն գատ ուրիշ ինչ կրնար ընել սիրեցեալ Լոն, որ մեղքնալու աղերսագիր կը ներկայացնէ իրեն բանաստեղծութեան հերոսը:

Իր գործին հանդէպ անքննադատ վերաբերումին բացակայութիւնը ուղղակի աղէտ եղած է պոլսահայ նաեւ այս երիտասարդին համար: Անոր էջերը խճողւած են սովորական, կրկնելի, շարունակելի տարրերով, երբ անհրաժեշտաբար անսովորին միայն պէտք է բացուին անոնք, անկրկնելիին, աւարտածին: Որո՞ւ համար գրուած է եւ ինչո՞ւ անպայման ընթերցողին պէտք է հրամցուի, օրինակ, «Ոչ մէկ բան» խորագրուած ու ոչ մէկ բանի նմանող սա ոչնչութիւնը:

**Մեծ քաղաքին
մեծ ժխորէն հեռու
փոքր սենեակի մը**

**փոքր անկողնին մէջ
ոչ մէկ բան խորհիլ կ'ուզեմ
ոչ մէկ բան
կը հաւատա՞ք
սէրն անգամ**

Երբ գործօն խոհ մը հաղորդելու փոխարէն չխորհելու չէպոքութեան մը մասին չոր տեղեկութիւններ կը կազմուին, բենական է, չէպոք կը մնայ նաեւ ընթերցողը:

Նոյնքան ապշեցուցիչ է «Համար» անուն սա ոտանաւորը գրելու եւ ապա հատորին անցընելու Իզնա Սարըսալանի անգիտակցութիւնը:

**Մետաղեայ աղեղը կը պրկուի
Սրածայր նետը արձակելու համար**

**Հրաբորբ արեւը կը ծագի
Խոր մթութիւնը փարատելու համար**

**Կենսութեան գարունը կը բողբոջի
Մերկ ծառերը ծաղկեցնելու համար**

**Ճիւղին վրայ սոխակը կ'երգէ
Հեշտաբայր վարդերուն կեանք տալու
համար**

**Արջալոյսով ծաղիկներ կը փթթին
Վերջալոյսով թառամելու համար**

**Եւ մարդը կը ծնի
Մեռնելու համար**

Աղեղը, արեւը, գարունը, սոխակը, ծաղիկը, մարդը: Շատ յայտնի չէ, թէ ինչ նախասիրութեամբ կատարուած են այս գործօններուն թումն ու անոնք պաշտօնները, ու ճիշդ այդ պատճառով ոտանաւորը ո՛չ միայն չի յաջողիր շահագործութեամբ, սիրով ու կիրքով ստացուող երեսոյթ մը անհատականացնել, այլեւ կը ձգէ անսկիզբ ու անվախճան շաղակրատութեան մը տպատրոտութիւնը: Որեւէ մէկ տունը հանես՝ բան չի պակսիր իրմէ, տասը տողեր անելցնես՝ բան չ'անելնար վրան:

Բան չըսող եւ յուզման որեւէ նշոյլ փոշանցելու արժանիքէն կուրկ բազմաթիւ էջեր կան «Լօ» հատորին մէջ, որոնց խորքին նախնականութիւնը, ինչպէս նաեւ ժամանակավրէպ նորամոլութիւնը պարզապէս կարմանք կը պատճառեն անսովորին կարօտով տոչտորոլ այսօրուան ընթերցողին:

Ներքին աշխարհին մէջ հազուադէպօրէն պատահող անկրկնելի փայտափայտներուն բիրտզացումն է բանաստեղծութիւնը եւ ոչ թէ ամէն օր, ամէն տարի, բոլոր ժամանակներուն կրկնուող ամէնուն ծանօթ երեսոյթներուն անկիրք արձանագրութիւնը:

Պ. Ս.

«ԳԱՃԱՃ ՄԵՍԻԱՆԵՐ»

(Մ. ԹԱՐԻԿԵԱՆ)

